Խորհդային կարգերի հաստատումից և քաղաքացիական պատերազմի ավարտից հետո տարբեր վայրերում ստեղծված գիտական և թանգարանային հաստատությունները վերսկսում են Կովկասի հնագիտական ուսումնասիրությունը:

Սկզբունքորեն նոր որակ կարելի էր համարել 1923 թ. լույս տեսած Աշխարհաբեկ Քալանթարի Երևանի ժողովրդական համալսարանում կարդացված Հնագիտություն դասընթացի առաջին գրքի՝ Նախապատմական հնագիտության, հրատարակումը, որտեղ հեղինակը մանրամասն ներկայացրել էր այդ ժամանակ գիտության համար արդի նախապատմական հնագիտության մասին պատկերացումները (Քալանթար 1923):

1926 թ. ուկրաինացի հնագետ Ա. Պոտապովը Կերչում կայացած հնագիտական կոնֆերանսում, Հայաստանից (Էջմիածինի մոտ) և Վրաստանից (Թբիլիսիի մոտ) իր կողմից հավաքված առարկաների հիման վրա հաշվետվություն ներկայացրեց Անդրկովկասի նեոլիթի վերաբերյալ: Անդրկովկասի նեոլիթյան բնակավայրերի առանձնահատկությունը նա համարում էր գետերի հովիտների երկրորդ դարավանդների վրա նրանց տեղադրությունը և օբսիդիանից պատրաստված գործիքները: Զեկուցման վերջին մասում հեղինակը կոչ է անում Կովկասում բոլոր ժամանակաշրջաններով զբաղվող հնագետներին իրենց աշխատանքների ժամանակ արձանագրել նաև հանդիպող օբսիդիանից առարկաները՝ քարի դարի

պատմամշակութային ուսումնասիրության համար (Потапов 1925, 40-41; Потапов 1928, 1-12; Пиотровский 1949, 27-28) :

Այդ տարիներին Հայաստանի նեոլիթյան մշակույթի խնդիրներով զբաղվել է նաև Բ. Պիատրովսկին (Пиотровский, Гюзальян 1933, 53): 1931 թ. հրատարակված «Հին Հայաստանի կուլտուրան» գրքում նեոլիթյան մշակույթին անրադարձավ նաև Խ. Սամուելյանը: Ուսումնասիրության մեջ հեղինակը նեոլիթյան փուլին վերաբերվող հատվածում վերաշարադրում է Մորգանի և Լալայանի վերլուծությունները (Սամուելյան 1931, 115-166): 1930-ական թ.թ. Ե. Բայբուրդյանը նեոլիթին վերագրվող հուշարձանների վերաբերյալ կարևոր դիտարկումներ է անում, մասնավորապես՝ նա հերքում է, որ Շրեշ-բուրը և Էլարը նեոլիթյան հուշարձաններ են, բացառում է կիկլոպյան ամրոցների նեոլիթյան լինելը (Байбурдян 1933, 39-42):

Երկրորդ աշխարհամարտի պատճառով ընդհատված հնագիտական աշխատանքները վերսկսվեցին պատերազմի ավարտից հետո: 1945-1949 թթ. պատմության ինստիտուտի ասպիրանտ Ս. Սարգսյանը ինստիտուտի հանձնարարությամբ ուսումնասիրեց Մորգանի հետազոտած վայրերը Արագած լեռան մերձակայքում և մի քանի բացօթյա հնավայրերից հավաքեց պալեոլիթյան և նեոլիթյան քարե գործիքների բավականին մեծ հավաքածու (Паничкина 1946, 55; Сардарян 1971, 6-7): 1945-1946 թթ. Ս. Զամյատնինը և Ս. Պանիչկինան ուսումնասիրություն կատարեցին Արտենի լեռան լանջերին, որտեղ հայտնաբերեցին վաղ նեոլիթյան արհեստանոցի մնացորդներ (Пиотровский 1949, 27): 1946-1947 թթ. Ս. Զ. Պանիչկինան Հրազդան գետի միջին հոսանքում Նուռնուս և Ճատկրան գյուղերի մերձակայքում հավաքեց քարե գործիքներ, որոնք նման էին Արագածում Մորգանի հավաքած առարկաներին: Պանիչկինան այդ առարկաները վերագրեց վերին պալեոլիթին և Ֆրանսիայի քարի դարի ժամանակագրական աղյուսակի համաձայն՝ թվագրեց մադլենյան դարաշրջանի վերջով (Паничкина 1948, 67-79):

Այդ տարիներին լույս տեսան մի շարք արժեքավոր աշխատություններ, որոնցից քննարկվող շրջանի համար արժեքավոր էր Բ. Բ. Պիատրովսկու Անդրկովկասի հնագիտությանը նվիրված դասընթացը (Пиотровский 1949): Գրքում հեղինակը տվեց Անդրկովկասի հնագիտական ուսումնասիրման պատմական ակնարկը և ընդհանրացրեց հատկապես նեոլիթյան և նրան հաջորդող փուլերի այդ ժամանակ հայտնի նյութերը:

1953 թ. Օ. Աբիբուլանի կողմից վերսկսվեցին բազմաշերտ Քյուլ-թեփե I հուշարձանի պեղումները: Այստեղ գիտական կարևոր փաստը հանդիսացավ այն, որ Անդրկովկասում առաջին անգամ կուր-արաքսյան շերտի տակ բացվեց ավելի հին մշակութային շերտեր, վաղ երկրագործական մշակույթին բնորոշ առարկաներով:

Այս ամենը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Անդրկովկասում մեկը մյուսի ետևից սկսվեցին պեղվել կուր-արաքսյան մշակույթից ավելի հին հուշարձաններ: Հենց Քյուլ-թեփեի պեղումները հիմք հանդիսացան Կովկասի երկրագործ-անասնապահական մշակույթների ուսումնասիրությունները սկսելու համար (Мунчаев 1975, 30-31):

Անդրկովկասի վաղ երկրագործական մշակույթների ուսումնասիրման գործում մեծ ավանդ են ներդրել Ա. Իեսինը, Օ. Աբիբուլանը, Ի. Նարիմանովը, Օ. Ջապարիձեն, Ա. Ջավախիշվիլին, Տ. Չուբինիշվիլին, Տ. Կիգուրաձեն, Ռ. Մունչանը, Կ. Կուշնարևան, Հ. Մարտիրոսյանը, Ռ. Թորոսյանը և ուրիշները: Նրանց կողմից Անդրկովկասի վաղ երկրագործական մշակույթի տարբեր խնդիրների շուրջ արժեքավոր դիտարկումներ են արվել՝ նպաստելով մշակույթի հետագա ուսումնասիրությանը:

Մինչև 1960-ական թ.թ. տարածված էր այն կարծիքը, որ Կովկասի երկրագործ-անասնապահական հնագույն մշակույթները հանդիսանում են Կուր-արաքսյան և Մայկոպյան մշակույթները: Հետագա ուսումնասիրությունները Կովկասի արտադրողական տնտեսաձևը և նրա հիմքի վրա առաջացած մշակույթը խորացրեց և մերձեցրեց Առաջավոր և Փոքր Ասիայի վաղերկրագործական մշակույթներին (Кушнарева, Чубинишвили 1970, 5; Кигурадзе 1976, 148-149):

1960-ական թ.թ. ներկայիս Ադրբեջանի արևմտյան շրջաններում Ի. Նարիմանովի կողմից պեղվեցին մեր տարածաշրջանում կարևոր նշանակություն ունեցող Շոմու-թեփե, Թոյրե-թեփե, Իլանլի-թեփե և այլ հուշարձաններ: Նրա կողմից ըստ այս հուշարձանների արվեցին առաջին ընդհանրացումները, առանձնացվեց Անդրկովկասի վաղերկրագործական հնագույն մշակույթը, որը նա անվանեց Շոմու-թեփեյան (Нариманов 1966, 123-126):

Վրաստանում նույնպես պեղվեցին վաղ երկրագործական մշակույթին վերաբերվող մի շարք հուշարձաններ: 1965-1969 թթ. Թբիլիսիի պետական համալսարանի և Վրաստանի պատմության թանգարանի համատեղ արշավախումբը ուսումնասիրություններ սկսեցին Մարնեուլի շրջանում (Օ. Ջափարիձե, Ա. Ջավախիշվիլի): Այստեղ 1964-1965 թթ. ուսումնասիրվեց Շուլավերի, իսկ 1967 թ. համաժամանակյա Իմիրիս գորա հուշարձանները (Кигурадзе 1976, 148-176):

Հայաստանում վաղերկրագործական հուշարձաններ ուսումնասիրվեցին Արարատյան դաշտում՝ Ծաղկունք, Խաթունարիս (այժմ՝ Ակնաշեն), Թեղուտ (ղեկավարներ՝ Հ. Հ. Մարտիրոսյան, Ռ. Մ. Թորոսյան) և այլն: Նշված հայտնագործությունները դրդեցին ուսումնասիրողներին վերանայել իրենց տեսակետներն ավելի վաղ փուլերի վերաբերյալ (Кушнарева, Чубинишвили 1970, 5; Кигурадзе 1976, 148-173): Այդ տարիներին, ինչպես նաև ապագայում պալեոլիթյան հուշարձաններ ուսումնասիրելիս նեոլիթյան մշակույթին վերաբերվող որոշակի

առարկաներ է առանձնացրել և դիարկումներ արել Բ. Երիցյանը, ուսումնասիրությունների մի մասը հրատարակվել են ավելի ուշ (Երիցյան և այլոք 2009, 33-39):

Փաստորեն Հայաստանում նոր քարի դարի վերաբերյալ առաջին համակարգված աշխատությունը Ս. Սարգսյանի աշխատանք էր, որում հեղինակը առանձնացնում է մի շարք նեոլիթյան հուշարձաններ՝ Արտին լեռան կայանները, Բառոժ, Զադա (նախակերամիկական նեոլիթ), Կոզակ բլուր (ներքևից երկու շերտերը), Մաշտոց բլուր, Տերտերի ձոր, Աղվեսի բներ, Սև բլուր I (կերամիկական նեոլիթ): Սակայն հեղինակը առարկաները ներկայացնում է առանց պատշաճ նկարագրության և գրանցման, նոր քարի դարը բնորոշելիս հեղինակը հիմնականում հենվում է հուշարձաններում բրգաձև միջուկների, հղկված և գայլիկոնված գործիքների առկայության, խեցեղենի բացակայություն փաստերի վրա (Սարգսյան 1969, 113-150):

Այդ տարիներին հրատարակված մի քանի հոդվածներում Հայաստանի նեոլիթյան մշակույթի վերաբերյալ ուրույն դիտարկումներ է անում Հարություն Մարտիրոսյանը (Մարտիրոսյան 1969, 191-208, Мартиросян 1970, 384): Արարատյան դաշտի վաղ երկրագործական բնակատեղիների ուսումնասիրման գործում մեծ ավանդ ունի վաղամեծիկ հնագետ Ռ. Թորոսյանը: Նա 1970-ական թթ. ուսումնասիրություններ է կատարել Ակնաշեն (նախկինում՝ Վերին Խաթունարիս) գյուղի տարածքում և հնավայրի 1,2-1,4 մետր խորությունից հայտնաբերված հյուսիս-միջագետքյան գունազարդ խեցու նմուշի և սեղանաձև միկրոլիթյան գործիքի առկայության հիման վրա շերտը թվագրել է ուշ նեոլիթյան և վաղ էնեոլիթյան ժամանակաշրջաններով (Թորոսյան 1971, 240-250):

1985-1989 թթ. Երևանի պետական համալսարանի հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայի Արարատյան դաշտի վաղ երկրագործական մշակույթները ուսումնասիրող արշավախումբը (ղեկավար՝ Գ. Արեշյան) պեղումներ կատարեց Մասիս բլուր (Ենգիջա) հնավայրում: Ձեռք բերված բոլոր տվյալների համադրումը թույլ տվեց Գ. Արեշյանին Մասիս բլուր բնակավայրի երկրորդ շինարարական հորիզոնը նախապես վերագրել զարգացած նեոլիթին (Արեշյան 1987, 4-7, 75-80):

1993 թ. լույս տեսած աշխատությունում Կարինա Կուշնարևան, Հարավային Կովկասի մեզոլիթյան և նեոլիթյան մշակույթները քննարկելիս որոշակի դիտարկումներ է անում նաև Հայաստանի նեոլիթյան մշակույթի վերաբերյալ (Кушнарева 1993, 8, 23):

Նեոլիթյան մշակույթի ուսումնասիրման սիստեմատիկ և նպատակային փուլը

Հայաստանում սկսվում է 1990-ական թթ. վերջերից, սակայն մեթոդական առումով հիմնականում շարունակվում է պեղումների ավանդական եղանակը (Ուիլերի մեթոդ):

1999-2004 թթ. հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի կողմից (ղեկավարներ՝ Ռ. Բադալյան, Ք. Շատենյե) վերապեղվում են Առատաշեն (նկար 2) և Ակնաշեն (նկար 3) հուշարձանները (Бадалян и др. 2002, 5-12; Бадалян и др. 2004, 31-33; Бадалян и др. 2005, 34-49; Badalyan et al. 2004, 399-420; Badalyan et al. 2007, 37 – 61; Palumbi 2007, 63-76; Badalyan et al. 2010, 186-218): Բացարձակ թվագրման ժամանակակից մեթոդների կիրառումը թույլ են տվել հուշարձանի II շերտագրական մակարդակը ժամանակագրել մ.թ.ա. VII/VI հազ. սահմանագծով կամ մ.թ.ա. VI հազ. սկզբով, I շերտագրական մակարդակի համար հնարավոր ժամանակագրությունը մ.թ.ա. VI հազ. կեսից V հազ. կեսերն է (Бадалян и др. 2005, 38):

1998-2009 թ.թ. Հայաստանում համատեղ հայ-ֆրանսիական (ղեկավարներ՝ Բ. Գասպարյան, Ք. Շատենյե), հայ-անգլո-իռլանդական (Բ. Գասպարյան, Ռ. Պինհասի), հայ-ամերիկա-իռլանդական (Բ. Գասպարյան, Գ. Արեշյան, Ռ. Պինհասի), հայ-ավստրիական (Բ. Գասպարյան, Դ. Շեյֆեր) արշավախմբերի շրջանակներում սկսում են ուսումնասիրվել նաև Հայաստանի նեոլիթի վաղագույն փուլերի՝ նախակերամիկական նեոլիթի հուշարձանները: Այդ ուսումնասիրությունների շրջանակում հայտնաբերվել և ուսումնասիրության են ենթարկվել բազմաթիվ նորքաբեդարյան հուշարձաններ Ափնագյուղ 8 (Քմլո-2 քարայր կացարան) (նկ. 4), Քուչակ-1 ժայռածածկ (նկ. 5), Ծաղկահովիտ-1 ժայռածածկ, Գեղարոտ-1 բացօթյա հնավայր, Հովք-1 բացօթյա հնավայր, Ենոքավան-2 քարայր և այլն (Գասպարյան, 1997, 4, 5; Гаспарян и др. 2004, 49-50; Гаспарян и др. 2005, 17-27; Gasparyan 2007, 47-51, 130-133; Петросян и др. 2007, 12-21; Գասպարյան և այլոք 2009, 41-56; Երիցյան և այլոք 2009, 33-39): 2003 թ. Հայաստանի հյուսիսային շրջաններում հետազոտություններ են կատարում հայ-ռուսական համատեղ արշավախումբը (Ս. Ասլանյան, Ռ. Մկրտչյան): Այս արշավախմբի կողմից պեղվող հուշարձաններից քննարկվող ժամանակաշրջանին վերաբերվում է Պեչկա (Круглая Шишка) քարայրը (նկ. 6):

Այս ուսումնասիրությունների արդյունքում հաջողվեց որոշակի դիտարկումներ կատարել Հայաստանի նեոլիթացման վերաբերյալ, որոշակի բաժանումներ կատարվեցին նեոլիթյան փուլի ժամանակագրական սանդղակում, մասնավորապես՝ Ապարանի գոգավորությունում (Քմլո 2 (Ափնագյուղ 8) քարայր, Քուչակ 1 ժայռածածկ) կատարված աշխատանքների շնորհիվ պարզվեց, որ գործ ունենք նեոլիթյան մշակույթի սկզբնափուլերի հետ (Ք.ա. XI-X հազ.), իսկ ի դեմս

Առատաշեն և Ակնաշեն հուշարձանների գործ ունենք նեոլիթյան մշակույթի ավարտական փուլերի հետ (Ք.ա.VI-V հազ.) (Arimura et al. 2010, 77-85):

Այսպիսով՝ Հայաստանի նոր քարի դարի ուսումնասիրությունը պատմությունը կարելի է բաժանել երեք փուլերի:

Առաջին փուլը կարելի է բնորոշել որպես առարկաների հավաքման և նրանց բնութագրման փուլ՝ ելնելով ընդունված համընդհանուր եվրոպական փուլաբաժանման սկզբունքներից և քարի դարի պարբերացման նախնական համակարգից (Ժ. Մորգան, Մ. Պանիչկինա, Ս. Սարգսյան):

Երկրորդ՝ կոնկրետ հուշարձանների ուսումնասիրման, տարատեսակ առարկաներից նեոլիթյան համալիրների առանձնացման և նրանց տեղային առանձնահատկությունների բնորոշման փուլն է: Այս փուլում առանձնացվեցին մի քանի հուշարձաններ՝ Խաթունարիս (այժմ՝ Ակնաշեն) (Ռ. Թորոսյան), Հատիս 10 (Հ. Ղազարյան), Մասիս բլուր (Ենգիջա) (Գ. Արեշյան): Հուշարձաններից ձեռք բերված առարկաների համեմատական վերլուծությունը թույլ տվեց Ակնաշենը և Մասիս բլուրը թվագրել զարգացած նեոլիթով, իսկ Հատիս -10-ը՝ նեոլիթի ավելի վաղ փուլով:

Երրորդ փուլը նշանավորվում է նեոլիթյան հուշարձանների համակարգված և նպատակային ուսումնասիրությունով, նեոլիթյան փուլի ժամանակագրական սանդղակում այդ հուշարձանների տեղայնացմամբ՝ Քմլո-2 (Ափնագյուղ-8) քարայր (Arimura et al. 2009, 17-19;), Քուչակ-1 ժայռածածկ, Առատաշեն, Ակնաշեն (Бадалян и др. 2002, 5-12. Бадалян и др. 2004, 31-33; Бадалян и др. 2005, 34-49; Badalyan et al. 2004, 399-420; Badalyan et al. 2007, 37 – 61; Palumbi 2007, 63-76):

A. PETROSYAN

IAE (Yerevan, Armenia)

THE STUDY OF NEOLITHIC IN ARMENIA

During the second half of 19th c. according to the corresponding specialists the territory of the Neolithic period was missing in the Caucasus or it took very short period there. The findings of Neolithic type were attributed to the periods of metal (Jaques de Morgan). According to an opposite opinion there were so many Neolithic monuments that approximately all stone tools with worked up and flat surface, some of the cyclopean fortresses (T.Toramanyan), petroglyphs (Ashkarabek Kalantar) were ascribed as Neolithic.

During his stay in Armenia in the beginning of 20th c. French archaeologist Jaques de Morgan collected tools of obsidian on the southern slopes of Aragats Mountain and its surroundings. Those findings were significant for the further research on the Stone Age of

Armenia, as in deed they were the first exact evidences of the existence of Stone Age on the territory of Armenia. Morgan before his travel to Aragats was stable in his opinion about the absence of even early stages of Stone Age on the territory of Caucasus. According to his opinion, even if there was Neolithic Period in Caucasus, it should last in a very short period of time which was mixed up with the Metal period. He had to change this opinion based on the findings after his survey. Analyzing the stone tools, he understood that they didn't represent a certain culture but they belonged to Mousterian, Upper Paleolithic and Neolithic periods by their typology. Leaning on the last thought Morgan ascribed those tools to Archeolithic (Upper Paleolithic) and Neolithic and dated them from late Quaternary to Metal Period. In the base of periodical division by Morgan there were the levels of patinisation of tools. The tools without patinisation he attributed to the Neolithic, and the objects with a surface not shinny patina he related to Archeolithic. After Morgan, M.Z. Panichkina analyzing the objects collected by Morgan, ascribes part of them to the early stage of Neolithic. During the later years conducted researches by different scientists enriched the knowledge about Neolithic stage, there were many publications, but the first systematic work on New Stone age was done by S.Sardaryan.

Analyzing the history of research on New Stone Age of Armenia it may be divided into three stages.

1. First Stage is characterized as the period of collecting and definition of the material which comes from accepted European standards of phase division and from preliminary system of Stone periodication (J. Morgan, M. Panichkina, S. Sardaryan).

2. Second Phase is the research on certain monuments Aknashen (R.Torosyan), Hatis-10 (H. Kasaryan), Masis Blur (G. Areshyan), separation of Neolithic material from the other materials and definition of their territorial uniqueness.

3. Third stage is significant for the targeted, systematic modern treatment during the research on Neolithic monuments by local and foreign specialists and it is important for definition of technical-morphological uniqueness of the production complexes, the place and the role of Armenian Stone Age in the World Stone Age: Kmlo-2 (Apnaghyugh-8), Kuchak 1 (B. Gasparyan), Aratashen, Aknashen (R. Badalyan).

LITERATURE

1. **Քալանթար Ա.** 1923, Հնագիտություն, Մասն Ա Նախապատմական Հնագիտություն, ձեռագրի իրավունքով, Համառոտումն կիսամյա դասընթացի, կարդացված Յերևանի ժող. համալսարանում, Պետական հրատարակչություն, Յերևան:
2. **Քալանթար Ա.** 1925, Քարե դարը Հայաստանում, Գրական, գիտական յեվ քաղաքական հանդես, գիրք հինգերորդ յեվ վեցերորդ, Երևան, Պետական հրատարակչություն, էջ 207-232:
3. **Թորամանյան Թ.** 1942, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան:
4. **Հալայան Ե.,** 1931, Դամբաների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, Երևան:
5. **Սամուելյան Խ.** 1931, Հին Հայաստանի կուլտուրան, հատոր I, Քարե դար, Պետական հրատարակչություն, Յերեվան:
6. **Արեշյան Գ.** 1987, Մասիս բլուր բնակավայրի պեղումները, ԵՊՀ հնագիտական գիտահետազոտական լաբարատորիայի գիտական հաշվետվություն 1986 թ. հնագիտական արշավախմբի աշխատանքների մասին, Երևան, էջ 4-7, 75-81:
7. **Բայբուրդյան Ե.** 1938, Աշխատանքի գործիքները հին Հայաստանում (ըստ հայկական ԽՍՀ պետական պատմական թանգարանի նյութերի) ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի Տեղեկագիր, գիրք I, 197, 217:
8. **Գասպարյան Բ.** 1997, Մեզոլիթի նորահայտ հուշարձաններ Երևանի մարզում, Գիտական նստաշրջան Հայոց պատմության և մշակույթի հարցեր նվիրված հայագիտության հովանավոր, Հայաստանի ազգային հերոս, մեծ բարերար Ալեք Մանուկյանի հիշատակին, զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 4-5:
9. **Երիցյան Բ.** Պետրոսյան Ա., Գասպարյան Բ. 2009, Վահագնի-1 քարեդարյան բացօթյա հնավայրի ուսումնասիրության նախնական արդյունքները, Երևան 2 Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, էջ 33 – 39:
10. **Թորոսյան Ռ.** 1971, Նեոլիթ-էնեոլիթյան հողամշակութային մի քանի գործիքներ, Պատմա-բանասիրական հանդես, 2(53), Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, էջ 240-250:
11. **Թորոսյան Ռ.** 1976, Թեղուտիվադերկրագործականբնակավայրը (մ.թ.ա. IV հազարամյակ):
12. **Մարտիրոսյան Հ.** 1969, Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, Պատմա-բանասիրական հանդես, 3, Երևան, 191-208:
13. **Սարգսյան Ս.** 1969, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան,

14. Археология СССР (Энеолит СССР) 1982, отв. ред. **Массон В.М., Мерперт Н.Я.** Москва,
15. **Байбурдян Е.** 1933, Псевдонеолитические поселения Армении. - Проблемы истории материальной культуры 1-2, с. 39-42.
16. **Байбурдян Е.**, 1937а, Новые находки каменного века в Армении. - СА, 3, с. 206-208.
17. **Байбурдян Е.** 1937b, По поводу древней керамики из Шреш-Блур. - СА 3, с. 209-213.
18. **Бадалян Р., Ломбард П., Аветисян П., Шатенъе К.** 2002. Неолит-энеолитическая культура Арагатской равнины (по материалам поселения Араташен). - ՀՀՄ, #2, Երևան, «Գիտություն», էջ 5-12:
19. **Бадалян Р., Аветисян П., Ломбард П., Шатенъе К.** 2004, Неолитическое поселение Араташен, Археология, АЭФК. - Международная научная конференция: посвящается 90-летию юбилею академика **А. М. Апакидзе**, Тбилиси, с. 31-33.
20. **Бадалян Р., Аветисян П., Ломбард П., Шатенъе К.** 2005. Поселение Араташен (Неолитический памятник в Арагатской равнине). - ՀՀՄ, XIII (Նյութեր հանրագիտական գիտական նստաշրջանի), Երևան, Մուղնի, էջ 34-41:
21. **Гаспарян Б., Нагапетян С., Аракелян Д.** 2004. Местонахождения каменного века Апаранской котловины (РА), АЭФК. - Международная научная конференция: посвящается 90-летию юбилею академика **А. М. Апакидзе**, Тбилиси, с. 44-46.
22. **Гаспарян Б., Нагапетян С., Саркисян Г., Габриелян И.** 2005. Каменный век Таширского плато, ԵՊՀ: - Պատմության ֆակուլտետ, Տարեգիրք, Երևան, էջ 234-242:
23. **Гаспарян Б.** 2006. Очерк истории исследования памятников мезолита Армении /Հայ ազգայնության և հնագիտության խնդիրներ I, Երիտասարդ գիտնականների IX գիտաժողովի նյութեր: Երևան, Գիտություն, էջ 24-29:
24. **Дебец Г.** 1948. Палеоантропология СССР, Труды института этнографии имени Н.Н. Миклухо-Маклая, Новая серия, том IV. Москва-Ленинград, Изд-во Академии наук Союза СССР, с. 106-107.
25. **Кушнарера К., Чубинишвили Т.** 1970. Древние культуры южного Кавказа. (5-3 тыс. до н. э.). Ленинград, Наука.
26. **Кигурадзе Т.** 1976. Периодизация раннеземледельческой культуры восточного Закавказья. Тбилиси, Мецниереба, (на грузинском языке с русским резюме).
27. **Кушнарера К.** 1984. К проблеме Кавказского мезолита, - ՊԲՀ, 3, Երևան, էջ 45-58:
28. **Кушнарера К.** 1993. Южный Кавказ в IX-II тыс. до н. э., этапы культурного и социально-экономического развития. Санкт-Петербург.
29. **Мунчаев Р.** 1975, Кавказ на заре бронзового века. Москва.

30. **Мартirosян А.** 1970. Исследование пещер в ущелье р. Раздан и наскальных изображений в Гегамских горах и Шамираме. - АО 1969 года. Москва, Наука, с. 384.
31. **Нариманов И.** 1966, Древнейшая земледельческая культура Закавказья, в кн.: VII Международный конгресс доисториков и протоисториков, Доклады и сообщения археологов СССР, Москва, Наука, с. 121-126.
32. **Паничкина М.** 1946. Находка каменных орудий на Арагаце. - Տեղեկագիր ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի, էջ 55-60:
33. **Паничкина М.** 1948. К вопросу о верхнем палеолите в Армении. - Տեղեկագիր ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի 7, էջ 67-79:
34. **Потапов А.** 1928. Предісторичний Кавказ, Східний світ, 2. Харьков, с. 1-12.
35. **Потапов А.** 1925. К вопросу о путях распространения обсидиановых изделий в каменном веке из Закавказья на Север. - Второй Краеведческий Съезд Черноморского побережья и Западного Кавказа. Батуми, с. 40-41.
36. **Пиотровский Б.** 1949. Археология Закавказья (с древнейших времен до I тысячелетия до н.э.). - Курс лекций, Ленинград, Издательство Ленинградского государственного университета им. А. А. Жданова.
37. **Петросян А., Гаспарян Б., Колоне Д., Наапетян С., Аримюра М., Лиagre Дж.** 2007. Предварительные результаты изучения протонеолитической стоянки Гехарот-1 (Арагацотн). - Հայ ազգայնագիտության և Հնագիտության ինստիտուտ-3, էջ 12-21.
38. **Сардарян С.** 1971, Древнейшая история и культура Армении, Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук. Ереван.
39. **Сардарян С.А.** 1954. Палеолит в Армении. Ереван.
40. **Arimura M., Chataigner C., Gasparyan B.** 2009. Kml 2. An Early Holocen Site in Armenia, Neo-Lithics 2/09, The Newsletter of Southwest Asian Neolithic Research. Berlin, p. 17-19.
41. **Arimura M., Badalyan R., Gasparyan B., Chataigner C.** 2010. Current Neolithic Research in Armenia, Neo-Lithics 1/10, The Newsletter of Southwest Asian Neolithic Research, Special Topic on Conflict and Warfare in the Near Eastern Neolithic. Berlin, p. 77-85.
42. **Badalyan R., Lombard P., Chataigner C., Avetisyan P.** 2004. The Neolithic and Chalcolithic Phases in the Ararat Plain (Armenia): The View from Aratashen, *in* Sagona A. (ed.), *A View from the Highlands, Archaeological Studies in Honour of Charles Burney*, ANES, Supplement 12, Louvain, Peeters, p.399-420
43. **Badalyan R., Lombard P., Avetisyan P., Chataigner C., Chabot J., Vila E., Hovsepyan R., Willcox G., Pessin H.** 2007. New data on the late prehistory of the Southern Caucasus. The excavations at Aratashen (Armenia): preliminary report, *in* B. Lyonnet (éd.), *Les cultures du*

Caucase (VIe-IIIe millénaires avant notre ère) - Leurs relations avec le Proche-Orient, Editions Recherche sur les Civilisations, CNRS Editions. Paris, p. 37-61.

44. **Badalyan R., Harutunyan A., Chataigner Ch., Le Mort F., Chabot J., Brocher J., Balasescu A., Radu V., Hovsepyan R.** The Settlement of AknashenKhatunarkh, A Neolithic site in the Ararat plan (Armenia): Excavation Results 2004-2009, TUBA-AR 13/2010, p. 185-218

45. **Gasparyan B.** 2007. Les gisements de la Préhistoire ancienne dans le Chirak, Dans les montagnes d' Arménie, 500 000 ans d' histoire avant notre ère, Rouen, Saint-Raphaël, p. 47-51, 130-133

46. **J. de Morgan** 1889. Mission Scientifique au Caucase, études Archéologiques & Historiques, t.I, Les premiers âges des métaux dans l'Arménie Russe, Paris, Ernest Leroux, Editeur.


47. **Jacques de Morgan** 1889. Mission Scientifique au Caucase, études Archéologiques & Historiques, t. II Recherches sur les origines des peuples du Caucase Paris, Ernest Leroux, Editeur, 3-6.

48. **J. de Morgan** 1909. Les stations préhistoriques de L'Alagheuz, REAP, Paris, VI, 189-203.

49. **Kiguradze T., Menabde M.** 2004. The Neolithic of Georgia, *in* Sagona A. (ed.), *A View from the Highlands, Archaeological Studies in Honour of Charles Burney*, Ancient Near Eastern Studies, Supplement 12, Louvain, Peeters, 345-398.

50. **Palumbi G.** 2007. A preliminary analysis on the Prehistoric Pottery from Aratashen (Armenia), *in* B. Lyonnet (éd.), Les cultures du Caucase (VIe-IIIe millénaires avant notre ère) - Leurs relations avec le Proche-Orient, Editions Recherche sur les Civilisations, CNRS Editions, Paris, p. 63-76.

51. <http://amru.rekvizit.ru/index.htm>



Croquis topographique des pays de l'Ararat et de l'Alagheuz montrant la position des coulées d'obsidienne et des stations préhistoriques.

Նկ. 1. Ժ. Դը Մորգանի հրատարակած քարտեզը հավանական հուշարձանների տեղադրությամբ (ըստ Morgan 1909, 190):



Նկ. 2. Առատաշեն, IIc-IId մակարդակների ընդհանուր տեսքը
(ըստ՝ Badalyan et al. 2007, 42):



Նկ. 3. Ակնաշեն, պեղվող հատվածների ընդհանուր տեսքը
(ըստ՝ Badalyan et al. 2010, fig. 2-2):



Նկ. 4. Քասախի գետի այն հատվածը, որտեղ գտնվում են Ափնագյուղ 7 (Քմլո 1) և Ափագյուղ 8 (Քմլո 2) քարայրները:



Նկ. 5. Քուչակ 1 ժայռածածկ:



Նկ. 6. Պեչկա (Круглая Шишка) քարայր:

ՔԱՂԱՔԱԳՈՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԸ ՆԱԽԱՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՓՈՐՁ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: Հին և միջնադարյան Հայաստանը հայտնի էր բավական աշխույժ քաղաքային կյանքով, որի մանրամասները վերականգնվում են հայ և օտար պատմիչների բազմաթիվ տեղեկությունների և հնագիտական աղբյուրների միջոցով¹: Սակայն, մինչ այդ, քաղաքները Հայաստանում անցել էին երկարատև և բարդ մի ճանապարհ, որը հետ է գնում պատմության հնագույն շրջանները: Առանց այդ ճանապարհի ընթացքը իմաստավորելու՝ անհնարին կլինեք պատկերացնել հայկական քաղաքի տեսակը, առաջացման և զարգացման դրդապատճառները: Բավարար է ասել, որ հին Հայաստանի գրեթե բոլոր մեծ քաղաքները, և հատկապես մայրաքաղաքները (օրինակ՝ Արտաշատը, Դվինը, Անին, Անի-Կամախը) կառուցված են եղել հնագույն շրջանի բնակավայրերի և ամրոցների տեղում և նմանապես ունեցել են կարևոր նշանակություն: Ավելին. ինչպես հնագույն, այնպես էլ հին և միջնադարյան Հայաստանում նման են եղել կենտրոնական բնակավայրերի ընտրության տեղագրական չափանիշները և զարգացման հիմնական օրինաչափությունները: Այս իմաստով պատահական չէ նաև, որ հայ միջնադարյան պատմիչները մի շարք քաղաքային կենտրոնների (օրինակ՝ Արմավիրի) հիմնադրումը կապում էին հնագույն՝ նահապետական դարաշրջանի հետ: Ստորև փորձենք հետևել հայկական քաղաքի ձևավորման նախապատմությանը²:

¹ Տեքստն ընթերցելու և օգտակար դիտողություններ անելու համար խորին շնորհակալություն ենք հայտնում Պ. Ավետիսյանին, Գ. Թումանյանին և Ա. Գնունուն:

² Հնագույն քաղաքի առաջացման և զարգացման խնդիրը (տեսության համար հմտ. Oppenheim 1968; Herzog 1997) Հայկական լեռնաշխարհի համատեքստում քիչ է լուսաբանվել: Բացի մի քանի ընդհանուր անդրադարձներից (Արեշյան, Ղաֆադարյան 1996; Массон 1997; Кушнарева 1997; Kushnareva 1997, հմտ. նաև Ջարյան 1986), առանձին քննարկման են ենթարկվել վաղ բրոնզի (Սիմոնյան, Գնունի 2004; Areshian 2005) և ուշ բրոնզ-վաղ երկաթի (Аресян 1978; Biscione, Hmayakyan, Parmegiani 2002; Badalyan, Avetisyan 2007; Smith, Badalyan, Avetisyan 2009) դարաշրջանների իրողությունները, խնդիրը քննարկվել է մշակութային առնչությունների համատեքստում (հմտ. Փիլիպոսյան 1998; 2004): Հիշարժան են նաև հին և միջնադարյան Հայաստանի քաղաքների առաջացման խնդրի մասին դիտարկումները՝ հնագույն քաղաքի առաջացման համատեքստում (Периханян 1959; Манандян 1985):

Այս հոդվածի հիմքում ընկած են Բորիսյան 2000 և Bobokhyan 2008 աշխատանքների հիմնական արդյունքները:

Տեքստում հիշվող բնակավայրերի տեղադրության համար տես Kushnareva 1997; Biscione, Hmayakyan, Parmegiani 2002; Bobokhyan 2008; Badalyan, Avetisyan 2007; Smith, Badalyan, Avetisyan 2009 աշխատանքների մանրամասն քարտեզները:

Ինչքան հետ ենք գնում պատմության խորքերը, այնքան ավելի բարդ է դառնում մարդկային մտածելակերպի վերծանումը և այնքան ավելի ենք հասկանում հնագույն հասարակական երևույթների արդի սահմանումների պայմանականությունը: Այդպես է նաև «քաղաք» հասկացության պարագայում, երբ, փորձելով բնորոշել դա, մենք շատ հաճախ օգտագործում ենք ժամանակակից մտածողության կաղապարները: Մինչդեռ, ի տարբերություն մեր ժամանակների, հնում հատակ չէր գիտակցվում քաղաքի տարբերությունը այլ բնակավայրերի տեսակներից. այսպես, քաղաքը «հայտնագործող» միջազետքցիները ինչպես քաղաքը, այնպես էլ գյուղը բնորոշում էին միևնույն բառով (շումեր. URU, աքքադ. ālum):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս հնագույն քաղաքի սահմանման պայմանականությունը: Այսպես, եթե մենք հին աշխարհում տարբերակենք դաշտավայրային, լեռնային, օազիսային կամ ծովային հասարակությունները, ապա նրանցից յուրաքանչյուրում քաղաքի ստեղծումն ու զարգացումը կարող էին ենթադրել տարբեր ճանապարհներ: Մեկում քաղաքը կարող էր ձևավորվել ոռոգովի երկրագործության, մյուսում՝ տաճարի կամ պալատի, երրորդում՝ առևտրի հիմքի վրա: Սակայն, չնայած տարբեր ուղիների առկայությանը, մասնագետները փորձում են առանձնացնել միասնական չափանիշեր, որոնցով հնարավոր կլինեք ընդհանրացնել հնագույն քաղաքի ձևավորման գործընթացը: Ըստ այդմ, քաղաքը բնորոշվում է համապատասխան պատմամշակութային և հասարակական-տնտեսական միջավայրում՝ այլ չափանիշերի հետ մեկտեղ, որոնց հանրագումարը կոչվում է «քաղաքակրթություն»: Այդպիսիների թվում հաճախ են հիշատակվում կոթողային ճարտարապետությունը, աշխույժ տնտեսությունը և առևտուրը, արհեստավոր-մասնագետների առանձնացումը, գրի և գիտության սաղմերի առկայությունը, զարգացած արվեստը, հասարակական անհավասարությունը և պետությունը (Գ. Չայլդ): Այս ամենի համատեքստում քաղաքը հանդես է գալիս որպես բարդ հասարակական հարաբերություններ ունեցող կազմակերպված տարածք, որին բնորոշ են՝

1. բնակավայրերի աստիճանակարգության մեջ կենտրոնական դիրքը,
2. կանոնավոր հատակագծով կառուցապատումը,
3. միջնաբերդը,
4. պաշտպանական համակարգը,
5. պալատը,
6. տաճարը,
7. բնակավայրից դուրս գտնվող դամբարանադաշտը,
8. արհեստագործական և գյուղատնտեսական կենտրոն լինելը,

9. հասարակական շերտավորումը,

10. աշխույժ առևտուրը:

Այսպիսով, քաղաքի ուսումնասիրությունը հանդես է գալիս որպես տվյալ հասարակության հաղորդակցության կառուցվածքի հետազոտություն և բազում նախադրյալներով պայմանավորված գործընթաց:

Առաջավոր Ասիան հանդիսանում է քաղաքի առաջացման հնագույն օջախը: Առաջավորասիական հնագիտության համատեքստում ընդունված է առանձնացնել նախաքաղաք, վաղ քաղաք և քաղաք հասկացությունները՝ ըստ քաղաքակրթական վերոհիշյալ հատկանիշերի հանդես գալու հաճախականության: Թեև Հայկական լեռնաշխարհը նախաուրարտական շրջանում ունի որոշ առնչություններ մերձպոնտոյան մշակութային աշխարհի հետ, սակայն հնագիտական տվյալները ընդգծում են նրա կապերի առաջավորասիական ուղղությունը, ինչը հիմք է ընձեռում մեզ կիրառելու հնագույն քաղաքի առաջացման և զարգացման առաջավորասիական (մասնավորապես Առաջավոր Ասիայի լեռնային հասարակություններին բնորոշ) տարբերակը:

Մինչ անցնելը քաղաքների առաջացման գործընթացի նկարագրությանը, կարևոր ենք համարում սահմանել մեր ուսումնասիրության պատմաաշխարհագրական գոտին՝ Հայկական լեռնաշխարհը: Սևան, Վան և Ուրմիա լճերի շրջակայքում տարածվող այս տարածքը հնագույն ժամանակներից սկսած, կազմել է ոչ միայն աշխարհագրական, այլև մշակութային ամբողջություն՝ հենված նրա կրողների արժեքային համակարգի ընդհանրության վրա: Անկախ նրանից, թե ինչ ժողովուրդներ են ապրել այս տարածքում, այն ցուցաբերել է զարգացման յուրահատուկ օրինաչափություններ, որոնք առավել մոտ են եղել մի կողմից կովկասյան մշակութային աշխարհին, մյուս կողմից՝ Փոքր Ասիայի կենտրոնաարևելյան, Սիրիա-Միջագետքի հյուսիսային և Իրանի հյուսիսարևմտյան շրջաններին: Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհը բրոնզ-երկաթի դարերում և դրանից ավելի վաղ կարելի է բաժանել երեք ենթագոտիների.

1. արևմտյան, որը ներառել է վերին Եփրատի ավազանը (պատմական Ծոփք և Փոքր Հայք նահանգները), որին բնորոշ են եղել աշխույժ առնչություններ դեպի կենտրոնաարևելյան Փոքր Ասիա և հյուսիսային Սիրիա,

2. հարավային, որն ընդգրկել է Վանից հարավ ընկած շրջանները (պատմական Աղձնիք և Կորդուք նահանգները) և դրան բնորոշ են եղել կապեր հյուսիսային Միջագետքի ուղղությամբ,

3. կենտրոնական-հյուսիսարևելյան, մի քանի ենթագոտիներով հանդերձ (պատմական Այրարատ, Բարձր Հայք, Վասպուրական, Մոկք, Տուրուբերան, Տայք, Սյունիք, Ուտիք, Գուգարք, Արցախ, Փայտակարան, Պարսկահայք նահանգները), որին բնորոշ են եղել կապեր կովկասյան ուղղությամբ:

Այս երեք ենթագոտիները միմյանց հետ աշխույժ հաղորդակցվել են և յուրովի են ապրել ու վերապրել քաղաքի առաջացման և զարգացման ընթացքը:

ՆԱԽԱՔԱՂԱՔ: Արտադրող տնտեսության ի հայտ գալով **նոր քարի դարում** (մ.թ.ա. IX-VI հազ.) առաջացան վաղ երկրագործական հասարակությունները, որոնք զարգացման բավական բարձր մակարդակի հասան **պղնձի դարում** (մ.թ.ա. VI-IV հազ.), երբ հայտնաբերվեց մետաղի ձուլման գաղտնիքը: Վաղ երկրագործական հասարակություններում առաջին անգամ ի հայտ եկան կայուն նստակեցությամբ բնորոշվող բնակավայրեր, ճարտարապետություն, արհեստներ, որոնց զարգացման արդյունքում սկսվեցին ձևավորվել քաղաքային կյանքի սաղմերը:

«Նեոլիթյան հեղափոխությունը» տեղի ունեցավ Բարեբեր Կիսալունի շրջանում, որի կարևորագույն հատվածն էին կազմում Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավային ենթագոտիները: Ընդհանրապես Հայկական լեռնաշխարհը գտնվում էր մշակովի բույսերի նախահայրենիքի շրջանում (Ն. Վավիլով): Վերջին տարիներին կատարված հայտնագործությունները ցույց են տալիս, որ արդեն մինչևեցեգործական նոր քարի դարում, և հատկապես մ.թ.ա. IX-VIII հազ., Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավային ենթագոտիներում ձևավորվում է մի կենտրոն, որին բնորոշ են կոթողային մտածելակերպ, բարդ պաշտամունքային և նշանային համակարգ (Գյոբեկլիթեփե, Նևալիչորի, Չաֆերիյոյուկ, Հալանչեմի, Չայոնյութեփեսի): Այս համակարգում հատկապես կարևորվում է վերին Տիգրիսի հովտում գտնվող Չայոնյութեփեսի բնակավայրը, որի կառուցապատ տարածքը 3 հա էր: Ճարտարապետության զարգացման բարձր մակարդակի մասին է խոսում կայուն ձևերի կառույցների առկայությունը. նկատվում է ճարտարապետության գործառնության ճյուղավորման սկզբնավորումը Առաջավոր Ասիայում: Մանգաղի ներդիրները, ընտելացված կենդանիների առկայությունը, կազմակերպված կրոնական համակարգը, ի վերջո պղնձի մշակման առաջին փորձը հին աշխարհում վկայում են, որ մենք գործ ունենք նորքարեդարյան աշխարհի ամենազարգացած շրջաններից մեկի հետ: Չայոնյութեփեսիի մշակույթին բնորոշ որոշ հատկանիշներ, մասնավորապես քարե գործիքների մշակման եղանակը, հասնում են ներկայիս Հայաստանի տարածք (Քմլո, Գեղարտո I):

Մ.թ.ա. VI հազ. Հայկական լեռնաշխարհի ուրմիական շրջաններում տարածված էր Հաջիֆիրուզի հնագիտական մշակույթը, որը մասամբ աղերսներ է

ցուցաբերում հյուսիսային Միջագետքի հասունյան մշակույթի վաղ փուլին (Հաջիֆիրուզ, Յանիկթեփե): Մինչդեռ մ.թ.ա. VI-V հազ., Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և Հարավային Կովկասի կենտրոնական մասերում (Շուլավերիսգորա, Շոմութեփե, Գարգալարթեփեսի, Կոզյակբլուր, Առատաշեն, Ակնաշեն) տարածված էր շուլավերի-շոմութեփեյան տիպի մշակույթը, որ ժամանակակից էր հասունյան մշակույթի ուշ փուլին և հալաֆյան մշակույթին: Մ.թ.ա. VI հազ. երկրորդ և V հազ. առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքն ընդգրկվեց հյուսիսմիջագետքյան հալաֆյան մշակույթի ոլորտը, իսկ մ.թ.ա. V հազ. երկրորդ կեսին ողջ Հայկական լեռնաշխարհում տարածվում է հալաֆյան և հյուսիսուբեյդյան գունագարդ խեցեղենի խառնածին պղնձեդարյան համալիրը, որի բնակավայրերը հայտնի են Վանա լճի ավազանում (Թիլկիթեփե), Ադանիքում (Գիրիկիհաջիան), Խարբերդի դաշտում (Թյուլինթեփե), Արարատյան դաշտում, Սյունիքում (Քյուլթեփե I, Թեղուտ, Գողեձոր, Արենի) և Ուրմիայի շրջանում (Յանիկթեփե, Գեոյթեփե):

Ընդ որում, եթե արևմտյան և հարավային գոտիները լիովին ընդգրկված էին այդ մշակույթի ոլորտում, ապա կենտրոնական-հյուսիսարևելյանը գտնվում էր լոկ նրա ազդեցության տակ: Վաղ երկրագործական դարաշրջանի Հայկական լեռնաշխարհի մշակութային ենթագոտիները բնորոշվում են դաշտավայրերում տարածված արհեստական բլուր-բնակավայրերով՝ հում աղյուսից կամ կավածեփ կլոր (հիմնականում հյուսիսում), ուղղանկյուն (հիմնականում արևմուտքում և հարավում) կամ կլոր-ուղղանկյուն (հալաֆյան գոտի) կացարաններով:

Հայկական լեռնաշխարհի վաղ երկրագործական մշակույթների ընդերքում փաստագրվում են նախաքաղաքին բնորոշ մի շարք հատկանիշներ: Ստուգենք դրանց հանդես գալու հաճախականությունը:

1. Չնայած բնակավայրերի կառուցապատված տարածքների էական տատանումներին (0.25-ից մինչև 3-4 հա, միջինը՝ 1-1.5 հա), նրանց միջև չեն նկատվում տիպաբանական տարբերություն և աստիճանակարգություն: Որպես կանոն գետափերին գտնվող մի քանի փոքրիկ բնակավայրերի դասավորվածությունը մեկ հիմնական բնակավայրի (որում կարող էին բնակվել մինչև 800 մարդ՝ Շուլավերիսգորա) շուրջ պայմանավորված է տոհմացեղային ընդհանրությամբ:

2. Ընդհանուր առմամբ կառուցապատումը քառասյին է: Սակայն արդեն Չայոնյութեփեսին ներկայանում է որպես կազմակերպված բնակավայր, որտեղ որոշակի հատվածներ (բնակելի և արհեստագործական) իրարից անջատվում են: Մինչդեռ արհեստավորների թաղամասերն իրենց դասական ընկալմամբ բացակայում են: Որոշ բնակավայրերում պղնձի դարի վերջում առանձնանում են խեցեգործական վառարաններով կացարաններ (Ալիքեմեկթեփեսի): Տների ներսում առանձնացվում

են բնակելի, խոհանոցային և պահեստային տարածություններ (Հաջիֆիրուզ, Յանկիթեփե): Բնակելի համալիրները խմբավորվում են բնակավայրի կենտրոնական հրապարակի շուրջ (Շուլավերիսգորա, Շոմութեփե, Իմիրիսգորա): Խիտ կառուցապատված տներն անջատվում են միմյանցից բակերի և նեղ անցումների միջոցով, կառույցների միջև առաջանում են ազատ տարածություններ (Թեղուտ, Թյուլինթեփե): Պղնձի դարի վերջում, որոշ բնակավայրերի կենտրոնական մասում բնակելի համալիրները կանոնավոր կերպով տեղադրված են փողոցների գծով (Թյուլինթեփե):

3. Բնակավայրի կենտրոնը չի առանձնանում, բացակայում է միջնաբերդը:

4. Բնակավայրերը պարսպապատ չեն, սակայն դրանք շրջապատող արհեստական խանդակները կարող էին ունենալ նաև պաշտպանական նշանակություն (Արուխլո, Մասիսիբլուր):

5-6. Կոթողային ճարտարապետություն որպես այդպիսին (տաճար, պալատ) հայտնի չէ, սակայն առկա են համապատասխան մտածելակերպի տարրեր: Կոթողային պաշտամունքային շինությունների սկզբնավորման մասին վերջերս բացառիկ տվյալներ են ի հայտ եկել Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանների նախախեցեգործական նոր քարի դարի հուշարձաններում (Գյոբեկլիթեփե, Նևալիչորի, Չայոնյութեփեսի): Ավելի ուշ՝ պղնձի դարի վերջին փուլում, առկա են զանգվածեղ շինություններ, որոնք կարող էին ունենալ հասարակական նշանակություն (Քյուլթեփե I, Թյուլինթեփե), լինել տաճարներ (Դեղիրմենթեփե):

7. Դամբանային ճարտարապետություն, որպես այդպիսին, հայտնի չէ (թաղումները կատարել են բնակավայրի ներսում, հատակների տակ, փոսերում կամ կարասներում), թեև ուշ պղնձի դարից նկատվում է թաղման ծեսի և գույքի որոշակի բարդացում (Քյուլթեփե I, Քորուջութեփե, Շիկահող):

8. Դեռևս վաղ է խոսել արհեստագործական և գյուղատնտեսական կենտրոնների գոյության մասին, սակայն հայտնի են գյուղատնտեսական մթերքների պահեստներ/հորեր (Չայոնյութեփեսի, Հաջիֆիրուզ, Շուլավերիսգորա, Շոմու-թեփե, Առատաշեն, Թեղուտ, Ալիքեմեկթեփեսի): Հասարակական շինարարական աշխատանքների վկայություններ են բնակավայրերը շրջապատող կամ նրանց եզրին գտնվող վերոհիշյալ արհեստական խանդակները, որոնց հիմնական նպատակը, այնուամենայնիվ, ջրի պաշարի կուտակումն էր (Արուխլո, Շահթեփե, Մասիսիբլուր):

9. Հասարակական շերտավորում դեռևս չի նկատվում: Գտնված միջազենոքյան տիպի կնիքների դաջվածքները պղնձեդարյան խեցեղենի վրա (Գեոյթեփե,

Նորշունթեփե, Արուխլո) կարող են ակնարկել հասարակական շերտավորման սաղմերի ձևավորման մասին:

10. Նոր քարի և պղնձի դարերում տեղի են ունենում բավականին աշխույժ առևտրական և մշակութային փոխառնչություններ, որոնք հիմնականում ուղղված էին դեպի հյուսիսային Սիրիա և Միջագետք: Այս դարաշրջանի առևտրի հիմքը կազմում էր վանակատը, որով հարուստ էր Հայկական լեռնաշխարհը, և որտեղից այն արտահանվում էր գրեթե բոլոր ուղղություններով:

ՎԱՂ ՔԱՂԱՔ I: Սկսած մ.թ.ա. IV հազ. կեսերից՝ Հայկական լեռնաշխարհը թևակոխում է զարգացման որակապես նոր՝ **վաղ բրոնզի** (մ.թ.ա. XXXV-XXIV դդ.) փուլը, երբ տարածվում է կուր-արաքսյան մշակույթը: Այս ժամանակաշրջանը համապատասխանում է Միջագետքի պատմության ուշ ուրուկյան, ջեմդեթ-նասրյան և վաղ դինաստիական փուլերին: Սակայն, եթե կուր-արաքսյան մշակույթի կազմավորման սկզբնական փուլում այդ մշակույթը բնորոշ էր Հայկական լեռնաշխարհի կենտրոնական-հյուսիսարևելյան շրջաններին, ապա արևմտյան և հարավային շրջաններում ուժեղ են հյուսիսսիրիա-միջագետքյան ազդեցությունները: Մասնավորապես մ.թ.ա. IV հազ. երրորդ քառորդում Ծոփքի հուշարձաններում (Թեփեջիք, Արսլանթեփե, Քորուջութեփե, Նորշունթեփե) տեսանելի է Ուրուկ IV (կամ շումերական) մշակույթի ազդեցությունը, ինչը նախ և առաջ առևտրական հարաբերությունների արդյունք էր: Կարծիք կա, որ ուրուկյան առևտրականները կարող էին մասամբ ներթափանցել նաև կենտրոնական-հյուսիսարևելյան գոտի: Ուշագրավ է այն, որ մ.թ.ա. III հազ. կեսերին, երբ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական-հյուսիսարևելյան շրջաններում կուր-արաքսյան մշակույթը անկում էր ապրում, Ծոփքում այդ մշակույթը ծաղկում էր: Մինչդեռ այս նույն ժամանակահատվածում Վանից հարավ ընկած գոտում ի հայտ են գալիս խոռոխական քաղաք-պետություններ, որոնք հյուսիսսիրիա-միջագետքյան կենտրոնների (Թել Բրակ, Թել Լեյլան, Թել Մոզան) անմիջական ազդեցության տակ էին գտնվում:

Ավելի քան մեկ հազարամյակ գոյատևած կուր-արաքսյան համակարգը կենտրոն ունենալով թերևս Արարատյան դաշտը, մ.թ.ա. III հազ. առաջին կեսին զրավել էր Բարեբեր Կիսալունի գրեթե ողջ գոտին՝ տարածվելով հյուսիսային Կովկասից մինչև Պաղեստին և արևմտյան Իրան: Կուր-արաքսյան հասարակական-մշակութային համակարգին բնորոշ էր նստակյաց տնտեսածը՝ զարգացած արորային երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով: Հատկապես մեծ զարգացում ապրեց մետաղագործությունը. կուր-արաքսյաները օգտագործում էին մկնդեղային բրոնզ, սակայն արդեն մ.թ.ա. IV-III հազ. սահմանին ի հայտ են գալիս անագային բրոնզի առանձին նմուշներ (Թալին): Կապված աշխատանքի

հասարակական բաժանման նոր փուլի հետ՝ սկսվել էր արհեստների բաժանումը գյուղատնտեսությունից: Ի հայտ են գալիս առաջին ոսկե առարկաները: Օգտագործվում են անիվային փոխադրամիջոցներ, իսկ վաղ բրոնզի վերջում՝ դանդաղ պտտվող դուրգը: Կուր-արաքսյան բնակավայրերը տարածվում են դաշտավայրերում (մոխրաբլուրներ) և (նախա)լեռնային շրջաններում (կան նաև կիկլոպյան ամրոցներ), ունեն կլոր (հիմնականում հյուսիսում) և ուղղանկյուն (հիմնականում հարավ-արևմուտքում) կացարաններ: Սկսած մ.թ.ա. III հազ. կեսերից՝ լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանները հիշատակվում են միջագետքյան գրավոր աղբյուրներում որպես Վերին Երկիր և Սուբարտու:

Ընդունված է կարծել, որ այս ժամանակաշրջանում առաջացել են վաղ քաղաքին բնորոշ առաջին տարրերը: Մասնավորապես՝

1. Ձևավորվում է բնակավայրերի աստիճանակարգված համակարգ՝ կենտրոնական բնակավայրի (Էլառ, Շենգավիթ, Մոխրաբլուր, Մեծամոր, Այգեվան, Դվին, Աղթամիր, Նորշունթեփե) շուրջը՝ միջինում 6-10 արբանյակ-բնակավայրերի կենտրոնացման սկզբունքով, որոնք գտնվում են միմյանցից 2-8 կմ հեռավորության վրա: Որոշ կենտրոններ շրջակայքից վեր են խոյանում մոտ 50 մետրով (Էլառ): Կարելի է առանձնացնել փոքր (1-1.5 հա), միջին (3-5 հա), մեծ (6-10 հա) (Դվին, Էլառ) և բացառիկ դեպքերում մինչև 12 հա (Հառիճ, Նորշունթեփե) բնակավայրեր: Ենթադրվում է, որ Մեծամորը միջնաբերդից դուրս կարող էր ունենալ 30 հա տարածք (Է. Խանգաղյան): Սակայն արտաքին քաղաք, որպես այդպիսին, վաղ բրոնզում դեռ չէր ձևավորվել: Փոքր բնակավայրերում ապրում էին 200-300, մինչդեռ մեծերում՝ մինչև մի քանի հազար մարդ:

2. Առկա է կանոնավոր հատակագծով կառուցապատում (Մոխրաբլուր, Ջրահովիտ, Շենգավիթ, Հառիճ, Նորշունթեփե): Առանձնանում են կառուցապատման երկու սկզբունք՝ կացարանների կենտրոնացում մեկ ընդհանուր կենտրոնի կամ հրապարակի շուրջ (Պուլուր/Սաքյուլ, Քվացխեղեբի) և տների խմբավորում փողոցների երկու կողմերում (Մոխրաբլուր, Ջրահովիտ, Ագարակ, Նորշունթեփե, Թեփեջիկ): Ի հայտ են գալիս երկհարկանի տներ (Յանիկթեփե, Թեփեջիկ, Նորշունթեփե, Ջրահովիտ): Կարևոր է նաև արհեստավորների թաղամասերի ձևավորումը միննույն բնակավայրի տարբեր հատվածներում (Շենգավիթ, Ամիրանիսգորա, Քյուլթեփե II):

3. Հիշարժան է միջնաբերդի տիպի միավորների ի հայտ գալու հանգամանքը (Մեծամոր, Հառիճ, Էլառ, Շահլամա II, Թագավորանիստ, Նորշունթեփե, Թյուլինթեփե):

4. Առաջանում են պաշտպանական համակարգեր՝ կառուցված կամ չթրծված կավից (Մոխրաբլուր, Յանիկթեփե, Շրեշբլուր, Քյուլթեփե II, Թեփեջիկ), կամ

հավանաբար հսկա քարերից՝ կիկլոպյան շարվածքով (Շենգավիթ, Էլառ, Ծովակ, Ջյանբերդ, Հառիճ, Լճաշեն, Շահլամա II և III, ինչը սակայն դեռ պետք է հիմնավորել շերտագրական տվյալներով): Չթրծված կավից պարիսպները երբեմն ունեն կոթողային բնույթ և հասնում են մինչև մոտ 3 մ հաստության (Ադաբլուր): Որոշ բնակավայրերում կան ստորգետնյա անցումներ (Շենգավիթ, Էլառ):

5. Ի հայտ են գալիս պալատներ, որոնք գտնվում են բնակավայրի կենտրոնական վերին հատվածում (Արսլանթեփե, Նորշունթեփե, Թեփեջիկ): Նորշունթեփեի պալատական համալիրն իր չափերով ավելի մեծ էր, քան, օրինակ, անատոլիական Ահլաթլիբեկ կամ Կարաթաշ բնակավայրերի նման շինությունները, իսկ տեղական իշխանավորի ամրացված տարածքը հասնում էր Տրոյա II-ի համապատասխան տարածքի չափերին և ստեղծվել էր սիրիա-միջագետքյան քաղաքների հետ անմիջական շփումների միջավայրում:

6. Հայտնի են ուրույն ճարտարապետությամբ բնորոշվող ծիսա-պաշտամունքային կառույցներ/սրբարաններ/տաճարներ (Մոխրաբլուր, Շենգավիթ, Ջրահովիտ, Հառիճ, Քոսիճոթեր, Թալին, Քորուջուրեփե) և «ծիսական տարածքներ», որոնք գրավում են մեծ մակերեսներ (Ագարակի ժայռահարթակի տարածքը՝ մոտ 200 հա): Դրանք գտնվում են բնակավայրում կամ բնակավայրից դուրս: Ի հայտ են գալիս պաշտամունքային հարթակներ դամբարանադաշտերի համակարգում (Թալին): Մոխրաբլուրի III հորիզոնի կենտրոնական հրապարակում վեր խոյացող տաճարը զատորոշված է բնակելի կառույցներից: Դա տուֆե մշակված քարերով կառուցված քառանկյուն շինություն է, որի վրա տեղադրված է մոտ 4 մ միակտոր բազալտից գոհասեղան և համեմատելի է անատոլիական Բեյջեսուլթանի համապատասխան կառույցի հետ:

7. Վաղ բրոնզում առաջանում է կոթողային հոգևոր ճարտարապետության մինչ այդ անհայտ մի բնագավառ՝ դամբանային ճարտարապետությունը (դամբանաբլրային կառույցներ և նրանց մեջ ամփոփված քարաշեն բարդ կառուցվածքներ (Թռեղք, Ջրվեժ, Ծաղկալանջ, Թալին, Մայիսյան, Բերքաբեր, Արսլանթեփե): Կարևոր է դամբարանադաշտերը բնակավայրերից դուրս բերելու հանգամանքը:

8. Որոշ բնակավայրեր հանդես են գալիս որպես արհեստագործական՝ մասնավորապես մետաղագործական (Կառնուտ, Գառնի, Ջաղացատեղ, Բաբադերվիշ, Խանթեփե) և խեցեգործական (Լորուտ, Վելիքենտ) կենտրոններ: Հայտնի են նաև մետաղագործությամբ մասնագիտացված բնակավայրեր (Ֆիոլետովո, Մարգահովիտ) և շահագործվող հանքավայրեր (Քաջարան): Հացահատիկի հորերի, հասարակական շտեմարանների և մառանների առկայության հանգամանքը վկայում

է երկրագործական կենտրոնների ի հայտ գալու մասին (Յանիկթեփե, Էլառ, Ջրահովիտ, Շենգավիթ, Բաբադերվիշ, Արսլանթեփե, Նորշունթեփե): Մի շարք կենտրոնական բնակավայրերի շուրջ հայտնի են ոռոգման համակարգեր/ջրամբարներ (Մոխրաբլուր, Շենգավիթ, Սղնախներ): Հասարակական մեծածավալ աշխատանքների վկայություն է նաև խանդակների առկայությունը (Նորաբաց):

9. Ակնհայտ հասարակական շերտավորում նկատվում է հատկապես կուր-արաքսյան մշակույթի գոյության վերջին փուլում (Նորշունթեփեի պալատը): Իսկ մինչ այդ ունեցվածքային շերտավորման մասին քիչ տվյալներ են հայտնում դամբարանները (Արսլանթեփեի «արքայական» դամբարանը, Քվացխեւլայի և Ամիրանիսգորայի «քրմերի» դամբարանները), սակայն ակնարկում են կնիքները (Օգնի, Նորշունթեփե), տարբեր եղանակներով կառուցված բնակարանները և նրանցում հայտնաբերված գույքային տարբերությունները (Քյուլթեփե I, Շենգավիթ), տների մերձակայքում առկա տնտեսական շինությունները և հորերը (Շենգավիթ, Գառնի), տաճարները (Մոխրաբլուր), գանգվածեղ պարիսպների կառուցման ժամանակ օգտագործված աշխատուժի կիրառումը (Մոխրաբլուր, Հառիճ), ինչպես նաև առանձին գանձերի առկայությունը (Երևան, Արսլանթեփե, Թյուլինթեփե):

10. Տեսանելի են աշխույժ առևտրատնտեսական փոխառնչություններ հարակից շրջանների հետ: Հայկական լեռնաշխարհը հարուստ էր բնական հանածոներով, մանավանդ մետաղով: Նկատելի է մետաղի մեծ արտահոսք դեպի հյուսիս՝ հարավոռուսական տափաստանային գոտի: Ինչ վերաբերում է հարավին, ապա ուրուկյան առևտրական գաղութները մ.թ.ա. IV հազ. վերջերին ուղղված էին լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանների հումքի աղբյուրներին: Ծովքում ուրուկյան առևտրականների կենտրոնն էր Թեփեջիքը, որտեղ կենտրոնացած միջազգետքցի առևտրականները վերահսկում էին հումքի արտահանումը: Վերջնականապես ուրուկցիներին դուրս մղելով լեռնաշխարհից՝ կուր-արաքսյան մշակույթի կրողները ստեղծեցին առևտրատնտեսական ուրույն համակարգ, որում հատկապես նշանակալի էր Ծովքի դերը: Ծովքում կային բուն կուր-արաքսյան (Պուլուր/Սաքյուլ) և սիրիա-միջազգետքյան ազդեցության (Նորշունթեփե, Քորուջութեփե) կենտրոններ, որոնք միջնորդի դեր էին կատարում լեռնաշխարհի մյուս շրջանների համար: Ծովքի կենտրոնների առնչությունների աստիճանական թուլացումը հարավ-արևմուտքի և աշխուժացումը Հայկական լեռնաշխարհի կենտրոնական-հյուսիսարևելյան շրջանների հետ կարելի է բացատրել որպես շահավետ առևտրի արդյունք: Հասնելով կենտրոնաարևմտյան Իրան՝ կուր-արաքսցիները, ըստ էության, գրավում են Խորասանի ճանապարհի հիմնական

հատվածը: Քաղաքային կյանքի զարգացման տեսանկյունից էական նշանակություն կարող էին ունենալ կուր-արաքսցիների անմիջական շփումները սիրիա-պաղեստինյան մշակույթների հետ, որոնք վաղ բրոնզ II-III-ում աշխույժ քաղաքային կյանքի օջախներ էին: Կուր-արաքսյան առևտրական համակարգը սկսեց անկում ապրել մ.թ.ա. XXV- XXIV դդ.՝ հյուսիսսիրիական հայտնի քաղաք Էբլայի հզորացմամբ, որն իր ձեռքը վերցրեց Առաջավոր Ասիան Եգիպտոսին կապող առևտրական կարևոր ճանապարհների վերահսկողությունը, որի գլխավոր մայրուղիներից մեկն անցնում էր Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջաններով: Աքքադի արքա Նարամ Սուենի (մ.թ.ա. XXIII դ. երկրորդ կես) արշավանքները Հայկական լեռնաշխարհի հարավ (որտեղ նա Տիգրանակերտից ոչ հեռու գտնվող Պիր Հուսեյն գյուղի մոտ թողել է իր արձանագրությունը) վերջ դրեցին Էբլայի մենաշնորհին և Միջագետքի համար մատչելի դարձրին վերինեփրատյան պղնձի առևտրի ճանապարհը: Վաղ բրոնզի վերջի տնտեսական կյանքի վերելքը Ծովք-Փոքր Հայք գոտում որոշ մասնագետներ կապում են քաղաքական առևտրական համակարգի ստեղծման հետ:

ՎԱՂ ՔԱՂԱՔ II: Մ.թ.ա. III հազ. վերջն Առաջավոր Ասիայում բնակավայրերի և քաղաքային կյանքի անկման մի շրջան էր՝ կապված կլիմայական փոփոխությունների և էթնիկ տեղաշարժերի հետ: Եվ չնայած մ.թ.ա. II հազ. առաջին կեսին (հատկապես երկրորդ քառորդում) իրավիճակը կայունացավ, սակայն առաջավորասիական տարբեր ենթագոտիների համար շարունակում էր բնորոշ մնալ մշակութային մեկուսացվածությունը: Այս գործընթացից զերծ չմնաց նաև Հայկական լեռնաշխարհը: Տնտեսական ճգնաժամը և նոր էթնիկ խմբերի հայտնվելը լիովին փոխեցին կուր-արաքսյան մշակույթի ժամանակաշրջանի պատմամշակութային և ժողովրդագրական միջավայրը: Նախկին բազմաթիվ վաղ քաղաքային բնակավայրերի տեղում առաջացան դամբարանադաշտեր: Տեղաբնիկ և եկվոր ցեղերի միաձուլումից ձևավորվեցին **միջին բրոնզի** (մ.թ.ա. XXIV-XVI դդ.) մշակույթները, որոնց բնորոշ էր բոլորովին այլ հասարակական-քաղաքական տնտեսաձև՝ անասնապահության գերակայությամբ: Սրա հետ մեկտեղ նկատվում են մի շարք առաջադիմական նորամուծություններ, որոնց թվում հատկապես հիշատակելի են քաղաք-պետությունների ի հայտ գալը, անագաբրոնզի, թանկարժեք մետաղների և ոսկերչության, արագ պտտվող դուրգի լայն կիրառությունը, ինչպես նաև ձիաբուծության զարգացումը:

Վաղ և միջին բրոնզի սահմանին Հայկական լեռնաշխարհում տարածվում են դամբանաթմբային մշակույթները, ապա նկատվում է ակնհայտ մշակութային բազմազանություն: Այսպես, հյուսիսային շրջաններում ձևավորվում են գունազարդ

խեցեղենի չորս ազգակից մշակութային խմբեր՝ թռեղք-վանաձորյան, սևան-ուզերլիկյան, կարմիր-բերդյան, կարմիր-վանքյան: Ծովք-Փոքր Հայք գոտում առաջանում է տեղային մշակութային մի օջախ, որը ցուցաբերում է մասնակի սիրիա-միջագետքյան և անատոլիական առնչություններ: Մինչդեռ Վանից հարավ ընկած շրջաններում ևս ի հայտ է գալիս տեղային մշակութային մի գոտի, որին բնորոշ են կապեր հյուսիսային Սիրիայի և Միջագետքի, մասամբ էլ՝ Վանի և Մուշի շրջանների հետ: Հայկական լեռնաշխարհի քաղաք-պետությունները բավական հաճախ հիշատակվում են սիրիա-միջագետքյան գրավոր աղբյուրներում (արևմտյան գոտում՝ Ծուպանա, Դեզիշանա, Խախում, հարավային գոտում՝ Նիխրիա, Կադմուխի, Շինամու. ավելի սակավ են հիշատակվում կենտրոնական շրջանները. Շուխնա՝ Էրզրումի, Ապիշլա՝ Վանի, Ուլիվի՝ Մուշի, Զամուա՝ Ուրմիայի շրջակայքում):

Հայկական լեռնաշխարհի միջինբրոնզեդարյան մշակույթները համեմատաբար աղքատ են բնակավայրերով, հատկապես՝ միջին բրոնզի սկզբնական փուլում: Սակայն գնալով նրանց թիվն ավելանում է սկսած մ.թ.ա. XIX դ. կեսերից (միջին բրոնզ II) և հատկապես մ.թ.ա. XVII-XVI դդ. (միջին բրոնզ III): Ծովք-Փոքր Հայք (Քորուջութեփե, Նորշունթեփե, Թեփեջիք, Արսլանթեփե) և Աղձնիք-Կորդուք (Ուչթեփե, Քենանթեփե, Գիրիջանո, Զիարեթթեփե) ենթաշրջաններում դրանք ներկայացված են մոխրաբլուրներով: Կենտրոնական և հյուսիսարևելյան ենթագոտու լեռնային և նախալեռնային շրջաններում տարածված են կիկլոպյան ամրոցներ (Զաղացատեղ, Բեշտաշեն, Հառիճ, Կարմիր բերդ, Կարմիր վանք, Գառնի, Մեծամոր, Էլառ, Լոռի բերդ, Շիշբլուր, Լեռնակերտ, Ոսկեվազ, Քարի դուռ, Շաղատ, Ույծ), իսկ դաշտավայրային և տափաստանային շրջաններում՝ մոխրաբլուրներ (նախիջևանյան Քյուլթեփե I և II, Շորթեփե, Գարաքյոփեքթեփեսի, Այգեվան, Մուխանաթթափա, Ուզերլիկթեփե): Բնակավայրերի այս շարքը շարունակվում է նաև կենտրոնական Հայաստանում, որտեղից հայտնի են Սոսիոյուկ, Նուրետին, Սարիվելի (Կարին), Հին Նորգյուղ, Վան Հավսազի, Կարաքյունդյուզ, Թիլկիթեփե, Վան Կալե (Վան), Աթաբինդի (Աղրի), Զայգեղի, Յիլանկալե (Մուշ), Հայդարկալե (Խլաթ) բնակավայրերը: Սրանցից հատկապես հիշարժան են Հին Նորգյուղ և Յիլակալեսի բնակավայրերը, որոնք իրենց հատակագծով աղերսներ են ցուցաբերում Լոռի բերդին, Ուզերլիկթեփեին, Քյուլթեփե II-ին: Փոքրածավալ պեղումները վերոհիշյալ բնակավայրերում ցույց են տալիս, որ նրանցում բնակության հետքերը սակավ են: Քարե հիմքով և հում աղյուսե պատերով ուղղանկյուն սովորական կացարաններում ի հայտ են գալիս երկրագործության մասին վկայող նյութեր, սակայն աշխույժ քաղաքային կյանք պատկերող տվյալներ կենտրոնական-հյուսիսարևելյան գոտում կարծես բացակայում են: Քաղաքային կյանքի կենտրոններ (հիմնականում միջին բրոնզի երկրորդ և երրորդ փուլերում)

պիտի որ լինեին հատկապես Նախիջևանի տարածքի բնակավայրերը, որտեղ ի հայտ են գալիս սիրիա-անատոլիական ճարտարապետության մասին վկայող փաստեր (Քյուլթեփե II, Չալիանկալե) և որոնք աշխույժ առնչությունների մեջ պիտի որ գտնվեին Ուրմիայի (Գեոյթեփե, Յանիկթեփե, Դինխաթեփե, Հաֆթավանթեփե, Քոթրդլարթեփե) կամ Ծոփքի (Քորուջութեփե, Իմիկուշաղի) համանման բնակավայրերի հետ: Նշված բնակավայրերը հիմնականում փոքրածավալ են՝ 2-5 հա: Քյուլթեփե II-ը զբաղեցնում է 10 հա մակերես, ունի կրկնապարիսպ աշտարակներ՝ որմնահեցերով և միջնաբերդով: Կան նաև այնպիսիները, որոնք բնակարանների շարունակական ամբողջություն են և տարածվում են ընդհուպ մինչև 200 հա մակերեսի վրա (Լոռի բերդ՝ ըստ Ս. Դենջյանի): Ինչքանով են միջինբրոնզեդարյան բնակավայրերը համապատասխանում քաղաքի հայեցակարգին:

1. Բնակավայրերի միջև անշուշտ պիտի որ գոյություն ունենար որոշակի աստիճանակարգություն, ինչը սակայն համեմատելի չէ նախորդ և հաջորդ ժամանակաշրջանների հետ: Այս իմաստով հատկապես աչքի է ընկնում Խարբերդի դաշտը, ուր միջին բրոնզում կենտրոնական բնակավայր է դառնում Քորուջութեփեն, որի շուրջը խմբվում են մի շարք այլ բնակատեղիներ:

2. Կան նաև կանոնավոր հատակագծով կառուցապատման (Քյուլթեփե II, Չալիանկալե, Քորուջութեփե), այդ թվում՝ փողոցների առկայության (Նորշունթեփե, Քյուլթեփե II) մասին խոսող փաստեր: Արհեստավորների թաղամասեր փաստագրված են հատկապես զարգացած բնակավայրերում (Քյուլթեփե II, Քենանթեթե, Թեփեջիք): Առկա են տվյալներ արհեստավորների՝ միջնաբերդից դուրս բնակվելու մասին (Քյուլթեփե II):

3. Բնակավայրերի կենտրոնական հատվածում գոյություն են ունեցել միջնաբերդեր, որոնք շրջապատված են եղել պարսպով (Ուզերլիկթեփե, Քյուլթեփե II): Կան տվյալներ պարիսպներից դուրս արտաքին բնակելի թաղամասերի գոյության մասին (Քենանթեթե, Քյուլթեփե II, Շադատ I):

4. Բնակավայրերը պաշտպանված են եղել զանգվածեղ քարերով կառուցված (կիկլոպյան ամրոցներ՝ Կարմիր բերդ, Լոռի բերդ, Շահլամա I և II, Սոթք 2, մոխրաբլուրներ՝ Քորուջութեփե, Իմիկուշաղի) կամ աղյուսաշար (Ուզերլիկթեփե) պարիսպներով: Ատամնավոր պարիսպներով պաշտպանական համակարգեր են ունեցել Նախիջևանի բնակավայրերը (Չալիանկալե):

5. Պալատական համալիրներ հայտնի չեն (հմմտ. այնուամենայնիվ Նորշունթեփեի «մեծածավալ շինությունը» կամ Թեփեջիքի «կոթողային պատերով շինությունը»): Սակայն սեպագիր ակզենադբյուրները վկայում են Հայկական

լեռնաշխարհի վերինեփրատյան և վերինտիգրիայան շրջաններում (Խախում, Մամուխա, Թեգարամա, Նիխրիա) պալատների գոյության մասին:

6. Տաճար-սրբարաններ հայտնի են որոշ բնակավայրերում (Քյուլթեփե II): Տաճար են հիշատակում գրավոր աղբյուրները Կորդուքում (Կուրդա): Սրբարանի դեր կարող էին կատարել դամբարանները: Պատահական չէ, որ վերնախավային որոշ դամբարաններ/կուրգաններ ունեն ծխական ճանապարհներ (Թռեղք), ինչպես հինարևելյան մի շարք երկրներում: Ծխական գոտիներ կարող էին կազմել բնակավայրերի կամ դամբարանադաշտերի համատեքստում հանդես եկող կանոնավոր շարվածքով մենհիրները (Ջորաց քարեր) և ընդհանրապես մեգալիթյան հուշարձանները (այդ թվում՝ վիշապաքարերը):

7. Միջին բրոնզի կոթողային ճարտարապետությունը հիմնականում ներկայացված է «արքայական» դամբանային կառույցներով: Միջին բրոնզի առաջին (դամբանաթմբային մշակույթների) փուլում տարածվում են 25-80 մ տրամագծով դամբանաբլուրներ, որոնք ունեն գերանակապ պատերով և ծածկով դամբանախցեր (Մարտղոփի, Բեդենի, Ջողագ): Հաջորդ (թռեղք-վանաձորյան) փուլում 11-13 մ բարձրության, 140 մ տրամագծով և մինչև 170 մ² ներքին դամբանասրահներով հսկայածավալ դամբանաբլուրները (Թռեղք, Լոռի բերդ) կոթողային մտածելակերպի ակնհայտ վկաներ են: Դամբանային կառույցներից կազմավորվել են «մեռյալների քաղաքներ» (Ջորաց քարեր, Դրդի, Չորաթան), որոնք խտությամբ լցված են անցուղիների երկարությամբ դասավորված դամբարաններով:

8. Կան որոշ տվյալներ արհեստագործական և մասնավորապես մետաղագործական (Ուզերլիկթեփե, Քենանթեփե, Թեփեջիք) և գյուղատնտեսական (Ուզերլիկթեփե, Թեփեջիք, Իմիկուշաղի) կենտրոնների գոյության մասին: Ի հայտ են գալիս աղի արդյունահանման մասին տվյալներ (Քյուլթեփե II-ի շահագործած Դուզդաղի աղահանքը): Հայտնի են ոռոգման համակարգեր/ջրմուղի խողովակներ (Թեփեջիք):

9. Միջին բրոնզի դարը ընդգծված հասարակական անհավասարության ժամանակաշրջան է, երբ առանձնանում է ազդեցիկ վերնախավ, որը փորձում է նմանակել սիրիա-միջագետքյան և կենտրոնաանատոլիական իշխանական արժեքները և ակնհայտ առնչություններ ունի այդ գոտիների վերնախավի հետ (Թռեղքի և Քարաշամբի արծաթե անոթները՝ հինարևելյան պատկերագրությանը բնորոշ առանձնահատկություններով): Վերնախավային դամբանաթմբային կառույցների («արքայական դամբարաններ») կերտման ժամանակ օգտագործված մարդկային ռեսուրսների ծավալը (մինչև 48000 մարդ-օրեր) չի զիջում միջագետքյան վաղ քաղաքային ժամանակաշրջանի տաճարների կառուցման ընթացքում ծախսված

համապատասխան ծավալներին, ինչը վկայում է առաջնորդների ձեռքին կուտակված հսկայական իշխանության և ստրկության գոյության մասին:

10. Միջին բրոնզը նաև աշխույժ առևտրատնտեսական փոխառնչությունների շրջան էր: Մ.թ.ա. II հազ. սկիզբը նշանավորվեց հյուսիսային Միջագետքի (Աշուրի) և կենտրոնական Անատոլիայի (Քանեշի) միջև տեղի ունեցող կազմակերպված առևտրով, որին մասնակցում էին նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանները: Այդ համակարգում գոյություն ունեին երկու տիպի առևտրական բնակավայրեր.

ա) կարում (karum), որը շուկա էր և, տեղադրված լինելով բուն քաղաքից դուրս, կառավարվում էր պետական կամ համայնական կառույցի միջոցով,

բ) վաբարտում (wabartum), որը ևս առևտրականների ժամանակավոր բնակատեղի լինելով հանդերձ՝ ենթարկվում էր կարումին:

Այսպես, միջագետքցիները Տավրոսից անդին ընկած շրջաններում ներմուծեցին միջագետքյան քաղաքի կառուցվածքային տարրեր (միջագետքյան քաղաքը բաժանված էր երեք մասի. պարսպապատ բուն քաղաքը, պարսպից դուրս գտնվող արվարձանները և առևտրականների թաղամասը՝ կարումը): Կապաղովկյան առևտրի կառուցակարգերի ուսումնասիրությունը կարևոր է մեզ համար ոչ միայն այն պատճառով, որ արևմտյան և հարավային Հայաստանի մի շարք քաղաք-պետություններ եղել են/ունեցել են կարումներ (Դուրխումիտ, Նիխրիա, Խախում. ընդ որում՝ վերջինս համադրվում է Նորշունթեփեին) և վաբարտումներ (Սամուխա, Տուխպիա), այլ նաև՝ այն պատճառով, որ միջագետքցիների մուտքը Կապաղովկիա և Հայկական լեռնաշխարհի մեծապես նպաստեց նոր քաղաքային բնակավայրերի զարգացմանը: Որոշ հեղինակների կարծիքով կապաղովկյան առևտրի համակարգը կուր-արաքսյան մշակույթի կրողների կողմից հիմնված առևտրական համակարգի հաջորդն էր, սակայն շատ ավելի ընդգրկուն էր: Միջագետքցիները կարումներ և վաբարտումներ կարող էին ստեղծել նաև Հայկական լեռնաշխարհի կենտրոնական-հյուսիսարևելյան շրջաններում: Սակայն քանեայան տեքստերում չեն հիշատակվում համապատասխան տեղանուններ, ինչը կարող է վկայել այն մասին, որ տվյալ շրջաններն անուղղակիորեն են մասնակցել այդ առևտրին: Այստեղ, թերևս, գոյություն ունեին առևտրականների հավաքակայաններ, որոնք հեռավոր նմանություններ կարող էին դրսևորել կարում-վաբարտումներին: Այդպիսի հավաքակայանի նախատիպ էր նախիջևնյան Քյուլթեփե II-ը: Պեղումները ցույց են տվել, որ առևտրականները և արհեստավորները այստեղ բնակվել են միջնաբերդից դուրս, ինչպես Քանեսում: Ի դեպ, նման իրավիճակ է արձանագրված նաև Ծոփքի Թեփեջիք բնակավայրում: Այս համեմատությունը, բացի համապատասխան առնչությունների

մասին վկայող հնագիտական տվյալներից (մետաղ, խեցեղեն, պատկերագրություն), հաստատվում է նաև Նախիջևանում հայտնաբերված և մ.թ.ա. II հազարամյակի առաջին քառորդով թվագրվող վաղ բաբելոնյան գլանակնիքի միջոցով: Այդ կնիքը այստեղ կարող էր հայտնվել Հայկական լեռնաշխարհի այլ շրջաններից, որտեղ նման կնիքներ հայտնի են Ծոփքում (Իմիկուշաղի) և Պարսկահայքում (Գեոյթեփե), որոնք կարող էին լինել կարևոր հանգույցներ կապաղովկիական առևտրի համակարգում:

ՔԱՂԱՔ: Առաջավոր Ասիայում քաղաքային կյանքի ամենանշանավոր փուլերից մեկը **ուշ բրոնզն է** (մ.թ.ա. XVI-XIII դդ.), որը «ժողովրդագրական պայթյուն» հետևանքով առաջացած աշխույժ քաղաքային կյանքի, քաղաքական ու մշակութային սերտաճման ժամանակաշրջան էր: Մինչդեռ ուշբրոնզեդարյան այս գործընթացները դադարեցին **վաղ երկաթում** (մ.թ.ա. XII-IX դդ.), երբ մշակութային համակարգերը դարձան ավելի ամփոփված: Առաջավորասիական և էգեյան հնագիտության մեջ վաղ երկաթը հաճախ անվանում են «մութ դարաշրջան», քանի որ դա, ըստ երևույթին, կլիմայական փոփոխությունների հետևանքով առաջացած, տարբեր մշակութային և քաղաքական համակարգերի անկման, նոր էթնիկ տեղաշարժերի, «բարբարոսական մշակույթների» վերելքի, հասարակությունների ռազմականացման խառնակ ժամանակաշրջան էր:

Հայկական լեռնաշխարհը ևս չի խուսափել այս զարգացումների ընդհանուր ազդեցությունից: Ասվածը հատկապես վերաբերում է արևմտյան և հարավային շրջաններին, որոնցում ուշ բրոնզի և վաղ երկաթի միջև կա ակնհայտ խզում: Մինչդեռ հյուսիսարևելյան գոտում, մասնավորապես ներկայիս Հայաստանում, Ուրմիայի ավազանում, Վանի և Մուշի միջև ընկած շրջաններում ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի միջև այդ խզումը այդքան սուր չի արտահայտվում: Այդ պատճառով այս երկու շրջափուլերը մենք քննարկում ենք միասին: Այս գոտում ճգնաժամային երևույթներ նկատվում են միայն ուշ բրոնզ-վաղ երկաթ անցումային փուլում (մ.թ.ա. XII դ.), երբ տեսանելի է բնակչության քանակի կտրուկ անկում (Արթիկի, Քարաշամբի, Լճաշենի դամբարանադաշտերի տվյալները), որոշ բնակավայրեր ավերվում և լքվում են (Ծաղկահովիտ, Գեղարոտ): Սակայն մ.թ.ա. XI դ. վերստին տեղի է ունենում բնակչության մեծ աճ (Այգեշատի, Թալինի, Շամիրամի դամբարանադաշտերի տվյալները) և դրա կենտրոնացում խոշոր քաղաքային կենտրոնների (Մեծամոր, Լճաշեն, Շամիրամ) շուրջ:

Ուշ բրոնզի դարի Հայկական լեռնաշխարհում նստակյաց կենսաձևը վերստին դարձավ գերիշխող և քաղաքային կյանքը հասավ իր զարգացման բարձրակետին: Բոլոր բնագավառներում նկատվում է աննախադեպ տնտեսական աճ: Դաշտավայրային գոտիներում վերականգնվում է երկրագործական կենսակերպը,

արհեստագործական զանգվածային արտադրության առկայության հանգամանքը խոսում է շուկայական տնտեսության ձևավորման մասին: Լայնորեն կիրառվում է (մարտա)կառքը: Առաջանում են խոշոր բնակավայրեր, որոնց շուրջ կենտրոնանում է մեծաքանակ բնակչություն: Լեռնաշխարհի արևմտյան (գրավոր աղբյուրներում՝ Իշուվա) և հարավային (գրավոր աղբյուրներում՝ Ալշե, Նիխրիա) գոտիներում առկա են խուռի-խեթական և տեղական մշակութային տարրերից բաղկացած խառը մշակույթներ, մինչդեռ կենտրոնական-հյուսիսարևելյան գոտում (գրավոր աղբյուրներում՝ Հայասա, Էթիունի) իշխում է լճաշեն-մեծամորյան մշակույթը: Հիշյալ երեք գոտիներում ուշ բրոնզի սկզբում գերիշխում են խուռիական ազդեցությունները: Մինչդեռ ուշ բրոնզի կեսերին, եթե հարավային և կենտրոնական-հյուսիսարևելյան ենթագոտիներում տիրապետում են խուռիական (միտանիական) և մասամբ բաբելոնյան (կասիտական), ապա արևմտյան ենթագոտում՝ խեթական ազդեցությունները:

Ինչ վերաբերում է վաղ երկաթին, ապա այս դարաշրջանում Հայկական լեռնաշխարհում զարմանալիորեն նկատվում են մշակութային սերտաճման գործընթացներ: Ինչպես վաղ բրոնզում, այժմ ևս Հայկական լեռնաշխարհի բոլոր երեք ենթագոտիները, ունենալով զարգացման ուրույն տարրեր, գտնվում են աշխույժ փոխառնչությունների մեջ և կազմում են մեկ միասնական մշակութային աշխարհ՝ արտահայտված նախ և առաջ նույնատիպ մոխրագույն-սև փայլեցված խեցեղենով և նմանատիպ պատմամշակութային զարգացումներով, որոնց ազդակները գալիս էին լճաշեն-մեծամորյան մշակույթի տարածման գոտուց: Տեղի է ունենում բնակավայրերի աննախադեպ աճ: Հասարակությունը ռազմականացվում է, իր իշխանությունն ընդգծում է ռազմական վերնախավը (արտահայտված հատկապես «զինվորների դամբարաններով»), որին արդեն հայտնի է երկաթի օգտագործման գաղտնիքը: Այս գործընթացների արդյունքում ի հայտ են գալիս տարբեր ենթաիշխանություններից բաղկացած խոշոր պետական կազմավորումներ, ինչպիսիք էին մուշկերի և ուրումեացիների իշխանությունները Ծոփքում և հարակից շրջաններում, Նաիրին՝ հարավային, և Էթիունին՝ կենտրոնական-հյուսիսարևելյան շրջաններում: Ահա այս խոշոր միավորումների հետագա ուժեղացումը և զարգացումը վաղ երկաթի դարի վերջերին պիտի հանգեցնեին ուրարտական թագավորության ստեղծմանը:

Ուշ բրոնզի և վաղ երկաթի բնակավայրերը Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջաններում հիմնականում ներկայացված են մոխրաբլուրներով և կենտրոնացված են Խարբերդի (Քորուջութեփե, Նորշունթեփե, Պիրոտ) և Տիգրանակերտի (Ուչթեփե, Գիրիջանո) դաշտավայրերի շրջակայքում: Ինչ վերաբերում է երրորդ գոտուն, ապա այստեղ ևս առկա են մոխրաբլուրներ (Դվին,

Գյուղելովա, Պուլուր, Դիլկայա), սակայն բնակավայրերի ամենատարածված տիպը ամրոց-բնակավայրերն են (կիկլոպյան ամրոցները), որոնց թիվը հասնում է մի քանի հարյուրի, և որոնք իրենց հեռավոր աղերսներն են գտնում Փոքր Ասիայի Էգեյան Աշխարհի համանման կառույցներում: Կիկլոպյան ամրոցների շարքը շարունակվում է Արարատի, Մուշի և Վանի միջև (Յուրեկքալե, Պանգքալե, Ալիլեր, Մեյդանթեփե): Այդ ամրոցները հիմնականում տեղադրված են (նախա)լեռնային, քչերը դաշտավայրային (Մեծամոր, Ադին) գոտիներում: Սրանք ունեն քաղաքաշինական և պաշտպանական ռացիոնալ բնույթ, որի պատճառով պահպանվել և զարգացել են ինչպես ուրարտական դարաշրջանում, այնպես էլ դրանից հետո՝ բուն հայկական միջավայրում: Դրանք կառուցված են խոշոր քարաբեկորներով, հիմնականում առանց կապակցող շաղախի: Գտնվում են բարձրադիր վայրերում, և ըստ աշխարհագրական առանձնահատկությունների, կարող են դասվել երեք հիմնական տիպերի՝ բլուր (Զուլակ, Վարդաձոր II), սարահարթ (Աշկալա, Աղթամիր), լեռնային հրվանդան (Շիշբլուր, Ուջան): Կարող են ունենալ մեկ (Թոփքար, Տուֆաշեն), երկու (Սառնաղբյուր, Բեշթաշեն), երեք և ավելի ամրություններ, երբ առանձին պարիսպներով տարանջատվում են միջնաբերդը, դարավանդներն ու բնակելի թաղամասերը (Աղթամիր, Լանջաղբյուր): Ամրոցներն ունենում են, որպես կանոն, ուղղանկյուն աշտարակներ, ինչպես նաև մեկ-երկու, հազվադեպ դեպքերում մինչև չորս (Շամխոր) մուտքեր: Շատերն ունեն միջնաբերդեր (Նաղարախան, Սանգար) և ամենակարևորը՝ պարիսպներից դուրս արտաքին բնակելի թաղամասեր (Մեծամոր, Սառնաղբյուր, Շիրակավան, Ծաղկահովիտ, Յոնջաթեփե):

Ուշ բրոնզ-վաղ երկաթում կարելի է խոսել զուտ քաղաքային կյանքի զարգացման մասին: Ստորև փորձենք ներկայացնել այս դարաշրջանի քաղաքին յուրահատուկ առանձնահատկությունները:

1. Յուրաքանչյուր աշխարհագրական ենթագոտի բնորոշվում է բնակավայր-ամրոցների ակնհայտ աստիճանակարգությամբ՝ կենտրոնական և արբանյակ բնակավայրերով ու նրանց պահակակետերով: Սրանք գտնվում են միմյանց նկատմամբ պաշտպանական տեսանկյունից նպատակահարմար դիրքում և գործառության փոխհարաբերության մեջ, կապված են տեղական պաշարների օգտագործման և փոխանակային հարաբերություններով ու կազմում են մեկ կամ մի քանի հասարակական-քաղաքական ընդհանրություն: Նման պատկեր են ցուցաբերում վերջին շրջանում իրականացված հետախուզական աշխատանքները Ուրմիայի և ներկայիս Հայաստանի տարածքում: Որպես օրինակ բերենք Արագած լեռան հյուսիսային փեշերին գտնվող Ծաղկահովտի դաշտավայրում կատարված՝ հայ-ամերիկյան արշավախմբի ուսումնասիրությունները, որոնք ցույց են տալիս, որ

այս տարածքում ուշ բրոնզի ամենասկզբից տեղի է ունենում հիմնական բնակավայրերի՝ Հնաբերդի, Ծաղկահովիտի, Գեղարոտի և Արագածի բերդի համաժամանակյա բնակեցումը, որոնց շուրջ առաջանում է արբանյակ բնակավայրերի ու դամբարանադաշտերի համակարգ. դրանցից մի քանիսը (Ծաղկահովիտ, Հնաբերդ) մեծ մասշտաբների են հասնում (շուրջ 5000 դամբարաններ՝ 162 խմբով, 30 կմ² տարածքի վրա): Նշյալ բնակավայրերն ունեն փոքր ամրոցներ (Հնաբերդը՝ 1.56 հա, Ծաղկահովիտը՝ 0.59 հա, Գեղարոտը՝ 0.36 հա), սակայն բնակավայրով հանդերձ զբաղեցնում էին մեծ տարածք (Սահակաբերդ I-ը՝ 30 հա, Հնաբերդը՝ 33.2 հա, Ծաղկահովիտը՝ 39.6 հա): Դրանց թվում կային արհեստագործական և պաշտամունքային կենտրոններ (Գեղարոտ):

Սևանի ավազանի հարավարևմտյան շրջանում հայ-իտալական արշավախմբի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում՝ հնագիտորեն նկատվող այս աստիճանակարգությունը լրացվում է գրավոր աղբյուրների տվյալներով: Այսպես, տարածաշրջանի 28 ամրացված բնակավայրերի կառուցումը սկսվել էր դեռևս նախաուրարտական շրջանում և ուրարտացիների արշավանքների ժամանակ արդեն ավարտված էր: Այդ բնակավայրերը կենտրոնացված էին չորս միավորումների շուրջ (Արկուկինի, Լուերունի, Կամանիու, Տուլիխու), որոնց կենտրոնական բնակավայրերն էին Նաղարախան, Մթնաձոր, Ծովակ, Սանգար ամրոցները: Քաղաք-պետության գաղափարին ամենամոտն էր Կամանիու խումբը, որի կենտրոնական բնակավայր Նաղարախանը (15.5 հա) շրջապատված էր հինգ փոքր (0.15 հա) ամրոցներով և խաղում էր յուրահատուկ «մայրաքաղաքի» դեր: Մ.թ.ա. VIII դ. ուրարտական աղբյուրները այս տարածքում հիշատակում են երեք տիպի քաղաքական միավորներ՝ քաղաք-պետություն (Տուլիխու), ցեղային միություններ (Արկուկինի, Լուերու, Կամանիու), համադաշնություն (Ուդուրի-Էթիունի), որ ընդգրկում էր վերոհիշյալ ցեղային միությունները՝ իրենց բնակավայրերով: Ըստ այդմ, հիշատակվում են բնակավայրերի հիմնականում երկու տեսակ.

ա) URU - քաղաք, գյուղ, համայնք (= ուրարտական patari-ին, որը սակայն օգտագործվում է հիմնականում Տուշպայի կամ բուն ուրարտացիների կառուցած բնակավայրերի համար): Ուրարտացիները մ.թ.ա. VIII դ. սկզբին Սևանի հարավարևմտյան ափին գրավում են 120 URU, որոնց թվում են նաև Տուլիխուն (Քռա կամ ավելի ճիշտ՝ Սանգար ամրոցները) և «Թեյշեբա աստծո քաղաքը» (Ծովինարի ամրոցը):

բ) E.GAL - պալատ(ական տնտեսություն), ամրոց, վարչական կենտրոն. ուրարտական աղբյուրներում դրանք հիմնականում առանց միջնաբերդերի ամրոցներ են (Սևանի ավազանում՝ Ծովակ, Բրուտի բերդ), արտաքին

բնակավայրերով ամրոցներ են, բնակավայրում կամ ամրոցում գտնվող պալատներ են (Ծովինար): Ենթադրվում է, որ Էթիունիի E.GAL-ները կարող էին լինել քաղաքներ, իսկ URU-ները քաղաքային բնակավայրեր, ինչը քիչ այլ կերպ է արտահայտվում Սևանի ավազանում: Ի հայտ է գալիս նաև E.GAL agunoni միավորը՝ ամրացված բերդեր, հավելյալ ամրոցներով, միջնաբերդերով (Նադարախան, Սանգար):

2-4. Կենտրոնական քաղաքային բնակավայրերն ունեն կանոնավոր հատակագծով կառուցապատում, թաղամասերի բաժանում՝ ըստ առանձին գործառնության շանակության, կոթողային ճարտարապետության հետքեր:

Այսպես, օրինակ, Լճաշենի ամրոցը՝ իր երկու միջնաբերդերով, 22 աշտարակներով, 3.5 մ լայնությամբ պարիսպներով, բազմաթիվ կառույցներով, մուտքերով, գաղտնուղիներով, նման էր մի վերգետնյա բավիղի: Արտաքին բնակավայրի հետ միասին այն զբաղեցնում էր մոտ 55 հա մակերես, տարածվում էր 15 բլուրների վրա ու 50-100 մ բարձրությամբ իշխում էր շրջակայքի նկատմամբ: Ամրոցի և բնակավայրի արտաքին բերդապարիսպների ընդհանուր երկարությունը հասնում էր մոտ 5000 մ:

Լազարավան քաղաքատեղին մոտ 35-40 հա էր, որից 1.5 հա զբաղեցնում էր միջնաբերդը, որ գտնվում էր նրա կենտրոնում: Այն պաշտպանված էր հզոր պարիսպներով, որոնք հարավային կողմում եռաշար էին: Ուներ տաս ուղղանկյուն հատակագծով աշտարակներ, որոնց ճակատային երկարությունը հասնում էր մինչև 17 մ: Միջնաբերդի ներսում նկատվում են կոթողային ճարտարապետության հետքեր, ուղիղ և մինչև 6 մ լայնությամբ փողոցներ, որոնց երկու կողմերում տներ են: Առանձնանում են հատուկ թաղամասեր և փողոցները միավորող հրապարակներ:

Մոտ կես կիլոմետր երկարությամբ Մոտկան ամրոցի միջնաբերդը լայնական միջնապարիսպներով բաժանված էր ութ հատվածների: Լանջերին ուներ պարսպապատ մի քանի դարավանդ և բնակատեղիի հետ միասին զբաղեցնում էր մոտ 40 հա մակերես:

Մոտ 40-50 հա էր զբաղեցնում Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղին՝ ուրարտական Թեյշեբահինիի փլատակների տակ, և բաղկացած էր շինությունների համալիրներից, դամբարանադաշտից և կիկլոպյան ամրոցից:

Վաղ երկաթի դարաշրջանում Մեծամորը կիկլոպյան պարսպով պատված միջնաբերդով և կից բնակելի թաղամասերով զբաղվում էր մոտ 200 հա տարածք: Դա, իր հասարակական, պաշտամունքային, տնտեսական, արտադրական/մետաղագործական համալիրներով և երկու դամբարանադաշտերով հիշեցնում էր հինարևելյան քաղաք: Վաղ երկաթում մոտ 200 հա մակերես էր զբաղեցնում նաև Ույծի հզոր ամրոցը իր շրջակա բնակավայրով:

5. Վերոհիշյալ հզոր քաղաքները անշուշտ պիտի ունենային պալատական համալիրներ, որոնցից քչերն են հայտնի (Մեծամոր, Ծովինար, Յոնջաթեփե): Խեթական աղբյուրները պալատական համալիրներ են հիշատակում Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններում (Իշուվա):

6. Հայտնի են բարդ ծիսական համալիրներով բնորոշվող տաճար-սրբարաններ (Մեծամոր, Դվին, Գեղարոտ, Շիրակավան), որոնք կարող էին գտնվել նաև բնակավայրից հեռու (Բյուրական, վիշապաքարային հարթակները): Տաճարներ են հիշատակում նաև խեթական տեքստերը Հայաստյում:

7. Ուշ բրոնզում և վաղ երկաթում հայտնի է կոթողային դամբանային ճարտարապետությունը (հիմնականում դամբանաբլուրներ)՝ հասարակական տարբեր խավերին վերաբերող նյութերով (Լճաշեն, Լոռի բերդ, Մեծամոր, Քարագյունդուզ): Թեև վերնախավը շարունակում է թաղվել շքեղ գույքով, սակայն վերանում է մեծամասշտաբ դամբարանների կառուցման միջինբրոնզեդարյան ավանդույթը, ինչը խոսում է քաղաքական իշխանության լիովին այլ սոցիալ-հոգեբանական կողմնորոշման մասին: Տպավորություն է ստեղծվում, թե «անհատապաշտ» միջինբրոնզեդարյան հասարակությունը վերածվում է «պետականակենտրոն» հասարակության:

8. Գոյություն են ունեցել արհեստագործական, մասնավորապես մետաղագործական (Մեծամոր, Սոթք, Դվին, Լճաշեն, Կարմիր բլուր, Հաղարծին, Գյումրու բնակավայր, Գեղարոտ, Շիրակավան, Մթնաձոր, Կլոր դարի ամրոց) և գյուղատնտեսական (Կարմիր բլուր, Դվին, Ծաղկահովիտ) կենտրոններ: Արհեստագործության մեջ խոր ենթաբաժանումների մասին են վկայում արհեստավորների դամբարանները (Լճաշեն, Ախթալա, Արթիկ, Քանազեղ): Ակտիվ շահագործվում են մետաղահանքերը (Ալավերդի, Ախթալա, Սոթք): Հատկանշական է զանգվածային արտադրանքի (հատկապես խեցեղենի) թողարկման փաստը: Մի շարք շրջաններում (Արագածի և Գեղամա լեռների լանջեր) հայտնի են մեծամասշտաբ ոռոգման համակարգեր՝ արհեստական լճեր և ջրանցքներ, որոնք անմիջականորեն առնչվում են կիկլոպյան ամրոցներին:

9. Հասարակական շերտավորումը բացահայտ է: Կարելի է խոսել տարբեր խավերի գոյության մասին (իշխաններ, քրմեր, ռազմիկներ, առևտրականներ, արհեստավորներ): Գրավոր աղբյուրներում «արքա» են կոչվում Հայաստյի և Նաիրիի կառավարիչները: Ընդ որում, եթե ուշ բրոնզում նկատվում է աստվածապետական իշխանության, ապա վաղ երկաթում՝ ռազմական վերնախավի գերակայությունը (Լճաշենի, Լոռի բերդի, Մեծամորի դամբարանները, Հաքարիի կոթողները):

10. Ուշ բրոնզը քաղաքակրթությունների աշխույժ առևտրատնտեսական փոխշփման ժամանակաշրջան էր, ինչը փայլուն կերպով արտահայտված է գրավոր (օրինակ՝ Ամարնայի արխիվը) և հնագիտական (օրինակ՝ Թութանհամոնի դամբարանը, Ուլուբուրունի և Գելիդոնիայի նավաբեկությունները) աղբյուրներում: Համահարթեցնող գործընթացներ են նկատվում նաև ուշբրոնզեդարյան մարդու մտավոր ընկալումներում (հմմտ. միաստվածության «հայտնաբերումը» էինսթոնյան Եգիպտոսում և եբրայեցիների մոտ): Այս ամենի արդյունքում ձևավորվում է հարաբերությունների մի համակարգ, որին բնորոշ էին վերնախավի ընծայափոխանակային առևտուրը, պետության կողմից վերահսկվող արքայական մենաշնորհային տնտեսությունը, պալատի վերածումը արքայանիստից բացի՝ արհեստանոց-պահեստի և փոխանակության կենտրոնի: Ոսկին դառնում է առևտրի միավոր, աքքադերենը՝ միջազգային լեզու, որպես փոխադրամիջոց հաստատվում են ձին և ուղտը, կիրառվում է (մարտա)կառքը, նկատվում է ծովային և ցամաքային ճանապարհների աշխուժացում, առաջավորասիական մշակութային հարաբերությունների մեջ ակտիվորեն ներառվում են էգեյան, բալկանյան և կովկասյան շրջանները: Այս միտումները լրիվ արտահայտված են նաև Հայաստանում, երբ ի հայտ են գալիս մշակութային տարրեր, որոնք առավել քան երբևէ խոսում են միջագետքյան, սիրիական, եգիպտական, միկենյան փոխառնչությունների առկայության մասին: Դրանց թվում հատկապես հիշատակելի են Հայաստանում հայտնաբերված միտաննական կնիքները (Արթիկ, Լճաշեն, Քանազեղ, Նորշունթեփե), եգիպտական մեհենագիր արձանագրությամբ կասսիտական Կուրիզալգու I արքայի (մ.թ.ա. XV դ. վերջ) կնիքը (Մեծամոր), կասիտական արքա Ուլամ Բուրիաշի (մ.թ.ա. մոտ XVI-XV դդ. սահման) սեպագիր արձանագրությամբ կշռաքարը (Մեծամոր), եգիպտական Թութմոս III արքայի (մ.թ.ա. XVI-XV դդ. սահման) եգիպտերեն արձանագրությամբ կոյաբգեզը (Մեծամոր), էլամական պատկերագրությամբ բիտումե մեդալիոնները (Վերին Նավեր), ասորեստանյան արքա Ադադնիրարի I-ի (մ.թ.ա. XIV-XIII դդ. սահման) սեպագիր արձանագրությամբ ուլունքը (Խոջալու):

Ինչ վերաբերում է վաղ երկաթին, ապա Առաջավոր Ասիայում այն աչքի չի ընկնում աշխույժ առևտրատնտեսական հարաբերություններով: Մշակույթների մեկուսացման այս ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի կապերը ուղղված են հիմնականում դեպի կենտրոնաարևմտյան Իրան (Գիլան, Թալիշ, Մազանդարան, Լուրիստան): Ընդ որում՝ առնչությունները նկատելի են նյութական և հոգևոր մշակույթի բոլոր բնագավառներում (զինատեսակներ, ձիասարք, խեցեղեն, թաղման

ծես, զարգացման ընդհանուր օրինաչափություններ), որոնք վկայում են «արևմտաիրանա-հայկական կոյնե»-ի գոյության մասին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ: Մարդկության պատմության ընթացքում տեղի են ունեցել մի քանի շրջադարձային իրադարձություններ, որոնք լիովին փոխել են նրա զարգացման ուղին: Դրանց թվին են պատկանում նախ և առաջ «նեոլիթյան հեղափոխությունը», որը տեղի ունեցավ Բարեբեր Կիսալուսնի շրջանում մ.թ.ա. IX-VII հազ., և «քաղաքային հեղափոխությունը», որը տեղի ունեցավ Միջագետքում մ.թ.ա. IV հազ. երկրորդ կեսին: Նշված իրադարձությունները պատմական զարգացումների վրա ունեցան նույն ազդեցությունը, ինչ՝ նոր ժամանակների «արդյունաբերական հեղափոխությունը»: Այս բոլոր փուլերը յուրովի արտահայտվել են նաև Հայկական լեռնաշխարհի հնագույն իրողություններում: Նախորդ էջերում փորձ արվեց վերականգնելու քաղաքային կյանքի ձևավորման և զարգացման մոտավոր պատկերը հնագույն Հայաստանում և պարզվեց, որ այստեղ, սկսած նոր քարի դարից, գոյություն են ունեցել կազմակերպված բնակավայրեր: Այդ բնակավայրերը հանդես են եկել հասարակական զարգացման որոշակի մակարդակներում, որոնք կարգավորվում են «քաղաքակրթություն» հասկացության ներքո: Մասնավորապես նրանցում ի հայտ են գալիս **կոթողային ճարտարապետության** տարրեր, որի սաղմերը տեսանելի են դեռ նոր քարի դարում, սակայն լիովին արտահայտվում են՝ սկսած վաղ բրոնզից: Հայկական լեռնաշխարհի կոթողային շինությունները լիովին այլ արտահայտչաձևեր ունեն, քան՝ սիրիա-միջագետքյան կոթողային կառույցները, ինչը կարող է ունենալ շատ պարզ բացատրություն: Լեռնցու աշխարհայացքը էապես տարբերվում էր դաշտավայրաբնակի աշխարհայացքից: Լեռնային աշխարհագրական միջավայրը ինքնին կոթողային էր, և այդ պատճառով լեռնցու մտածելակերպում կոթողայինը մեծ դեր չէր խաղում՝ ի տարբերություն դաշտավայրաբնակի կամ տափաստանաբնակի: Պատահական չէ, որ միջագետքցիները հարավում կառուցում էին բարձր աշտարակներ, իսկ տափաստանաբնակները հյուսիսում՝ խոշոր դամբանաբլուրներ, որպեսզի լցնեն «բնության դատարկությունը»: Այս իմաստով մշակույթը կարող է ընկալվել ոչ միայն որպես մարդու՝ բնության նկատմամբ ինքնահարմարեցման, այլ նաև որպես նրա լրացման փորձ:

Բացի դրանից, Հայկական լեռնաշխարհում, սկսած նոր քարի դարից, նկատվում են **աշխույժ տնտեսության և առևտրի** առկայության մասին փաստող տվյալներ, երբ նա դառնում է նախ վանակատի, ապա նաև մետաղի և այլ հումքի տեսակների արտահանող: Սկսած մ.թ.ա. IV հազարամյակի վերջից Հայկական լեռնաշխարհում կիրառվում են որոշակի չափակշռային համակարգեր, որոնք

վկայում են կազմակերպված առևտրի գոյության մասին: Առևտրի լծակները գտնվում էին սիրիա-միջագետքյան և փոքրասիական ավանդույթներից ազդված վերնախավի ձեռքում, որի առկայության մասին են խոսում հատկապես մ.թ.ա. III հազարամյակի վերջից ի հայտ եկող ճոխ դամբարանները և թանկարժեք մետաղե անոթները:

Սկսած մ.թ.ա. IV հազարամյակի վերջերից՝ Հայկական լեռնաշխարհում կարելի է խոսել **արհեստավոր-մասնագետների**, որպես առանձին խավի, առանձնացման մասին, որոնք հատկապես մետաղագործության բնագավառում մեծ հաջողությունների էին հասել: Համապատասխան արհեստանոցների և արհեստավորների դամբարանների առկայությունը հետագա դարաշրջաններում վկայում է, որ նրանք որոշակի դեր էին խաղում հասարակական կյանքում:

Ինչ վերաբերում է հոգևոր մշակույթին, մի շարք հեղինակներ ենթադրում են պարզունակ **պատկերագրային** համակարգի առկայության մասին՝ սկսած մ.թ.ա. III հազ., սակայն գրային համակարգին հինարևելյան իմաստով Հայկական լեռնաշխարհում ծանոթ չէին մինչև ուրարտական պետության ստեղծումը: Որոշ մասնագետներ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խարբերդի հովիտը ներառվել է կապադովկիական առևտրական համակարգի մեջ, չէին բացառում, որ պեղումների ժամանակ այստեղ կգտնվեն սեպագիր արխիվներ: Սակայն, բացի ուշբրոնզեդարյան խեթական մեհենագիր արձանագիր կնիքներից, այլ գրավոր աղբյուրներ չհայտնաբերվեցին:

Ճարտարապետության, արհեստների, ինչպես նաև քրմական դասի առկայությունը վկայում է **գիտության սաղմերի** գոյության մասին: Կոթողային միատեսակ կառույցները խոսում են միասնական չափման միավորների առկայության մասին: **Զարգացած արվեստի** գոյությունը՝ իր հինարևելյան իմաստաբանությամբ հանդերձ, կարելի է մասնակիորեն արձանագրել նախաուրարտական Հայաստանում, ուր հիմնականում առկա են պարզ բնապաշտական և իրապաշտական արվեստի տարրեր: Մինևոյն ժամանակ Թռեղքի և Քարաշամբի միջինբրոնզեդարյան արծաթե անոթների պատկերագրությունը փաստում է հինարևելյան արվեստի ավանդույթների ներմուծման մասին՝ սկսած մ.թ.ա. III հազ. վերջերից:

Մ.թ.ա. III հազ. սկզբից, հատկապես՝ երկրորդ կեսից, կարելի է խոսել Հայկական լեռնաշխարհում **հասարակական անհավասարության** գոյության մասին, ինչը ուղեկցվում էր վաղ **պետության** աստիճանական ձևավորմամբ: Հայկական լեռնաշխարհի կենտրոնական-հյուսիսարևելյան շրջանների համար հնարավոր է ենթադրել վաղ պետական կազմավորումների գոյությունը, մինչդեռ արևմտյան և հարավային շրջաններում դրանք փաստվում են գրավոր աղբյուրներով: Ըստ այդմ,

դրանք ոչ մեծ և քաղաքականապես չեզոք քաղաք-պետություններ էին, որոնք աշխույժ կերպով մասնակցում էին միջազգային առևտրին: Մ.թ.ա. XX-XVIII դդ. Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջաններում առևտրական և քաղաքական հարաբերությունների համատեքստում տիրում էր քաղաք-պետությունների համակարգը: Մինչդեռ ուշ բրոնզում և վաղ երկաթում գործ ունենք արդեն պետական կազմավորումների հետ, որոնք հիմք են ծառայում ապագա միասնական ուրարտական պետության ստեղծման համար:

Քաղաքակրթական վերոհիշյալ հատկանիշների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ հնագույն Հայաստանում առկա էին այն հիմնական հատկանիշները, որոնք կարող են մեզ ենթադրել տալ **քաղաքի** գոյության մասին: Ընդ որում, Հայկական լեռնաշխարհի հասարակական գործընթացների վերլուծությունը ընդգծում է երկու հանգամանք. նախ՝ քաղաքի զարգացումն անընդհատական չի եղել, այլ՝ շրջափուլային, և ունեցել է վերելքի ու վայրէջքի շրջաններ: Եվ ապա՝ քաղաքի երևույթը հավասարապես չի արտահայտվել բոլոր ենթաշրջաններում: Այս տեսանկյունից կարելի է առանձնացնել քաղաքի ձևավորման և զարգացման երկու՝ առաջնային և երկրորդական կենտրոններ. 1. առաջնային են դաշտավայրային մի քանի շրջաններ, որտեղ արտահայտվել է քաղաքային կյանքի զարգացման հինարևելյան ճանապարհը (Խարբերդի դաշտ, Արարատյան դաշտ, Ուրմիայի դաշտ), 2. (նախա)լեռնային շրջաններ, որտեղ նկատվում են քաղաքային կյանքի տարրեր՝ դաշտավայրային շրջանների ազդեցության ներքո: Սակայն տարբեր դարաշրջաններում տարբեր գոտիներ են եղել առաջադիմական գործընթացների կրողը: Այս նույն երևույթը նկատվում է նաև հետագայում՝ ուրարտական դարաշրջանում և հին ու միջնադարյան Հայաստանում, երբ Հայաստանի գրեթե բոլոր մայրաքաղաքները գտնվել են դաշտավայրային գոտիներում:

Հայկական լեռնաշխարհի՝ մեր կողմից առանձնացված երեք ենթագոտիներից հատկապես առաջինը՝ վերինեփրատյանը, դեռ նոր քարի դարից հանդիսացել է այն շրջանը, որտեղ խմորվել են առաջավորասիական քաղաքակրթությունների հիմնական ձեռքբերումները և փոխանցվել լեռնաշխարհի այլ ենթագոտիներ: Եվ պատահական չէ, որ քաղաքային կյանքի տարրերը ամենավաղը դրսևորվեցին հենց Ծոփքում, ինչը կարելի է բացատրել նրանով, որ Ծոփքը ավելի մոտ էր գտնվում առաջավորասիական կենտրոններին և ավելի հաճախ էր շփվում նրանց հետ: Այս տեսանկյունից Հ. Մանանդյանի՝ Ծոփքին տրված բնորոշումը, որպես «Մեծ և Փոքր Հայքի առևտրի գլխավոր դարպասի» լիովին կիրառելի է նաև նախապատմական շրջանների համար: Եթե Ծոփքը մշակութային միջնորդ էր հանդիսանում Հայկական

լեռնաշխարհի հարավ-արևմուտքում, ապա նման գործառույթ իրականացնում էր Պարսկահայքը հարավ-արևելքում և հատկապես մ.թ.ա. II-I հազ.սահմանին:

Ինչպես արդեն նշել ենք, հնագույն քաղաքի սահմանման համար շատ հաճախ կարևորվում է բնակավայրերի աստիճանակարգության և կենտրոնական բնակավայրի մեծության փաստարկը: Հիմնականում քաղաքային բնակավայրերը իրենց տարածքով ավելի մեծ էին այլ տիպի բնակավայրերից: Հնագիտության մեջ կան տարբեր չափանիշեր բնորոշելու համար քաղաքների աստիճանակարգությունն ըստ մեծության: Այսպես, ըստ Գ. Չայլդի, 5000 բնակչություն ունեցող և մոտ 10 հա մակերեսի վրա տարածվող բնակավայրը կարելի է համարել քաղաք: Հարավմիջագետքյան Ուրուկ քաղաքի և նրա շրջակայքի համար մ.թ.ա. III հազ. սկզբում ընդունված է եռաստիճան աստիճանակարգություն, որում 0.1-6 հա զբաղեցնող բնակավայրերը համարվում են գյուղեր, 6-25 հա՝ փոքր քաղաքներ, 50 հա-ից ավելի՝ քաղաքային կենտրոններ: Դիալայի շրջանի բնակավայրերի համար մ.թ.ա. III հազ. սկզբում ընդունված է հինգաստիճան աստիճանակարգություն, որում 0.1 հա-ից պակաս բնակավայրերը համարվում են փոքր կավածքներ, 1-3 հա՝ գյուղեր, 3-5 հա՝ մեծ գյուղեր, 6-15 հա՝ փոքր քաղաքներ, 15 հա-ից ավելի՝ մեծ քաղաքներ: Մ.թ.ա. III հազ. կեսերին Իսրայելի համար առանձնացվում են մինչև 10 հա (Թել էլ-Ֆարահ), մոտ 10 հա (Արադ) և 10 հա-ից ավել (Բեթ Յերահ - 20 հա) քաղաքային բնակավայրեր: Փոքր Ասիայի և Էգեյան աշխարհի բնակավայրերի պարագայում իրավիճակն այլ է. այնպիսի կենտրոնական բնակավայրերի միջնաբերդերը, ինչպիսիք են Տրոյան, Պոլիոխնին կամ Թերմին ընդամենը 1-2 հա էին զբաղում (և, իրենց ստորին քաղաքով հանդերձ, հասնում էին մինչև 25 հա), չնայած ունեին հզոր ամրություններ, կոթողային ճարտարապետություն և տարածվում էին պարիսպներից դուրս: Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհին, ապա այստեղ կարելի է կիրառել առավելապես հյուսիսմիջագետքյան և փոքրասիա-էգեյան մոդելները՝ կապված տարբեր դարաշրջանների հետ: Ըստ այդմ, դրանք կարելի է տեղակայել փոքր, միջին և մեծ բնակավայրերի պայմանական «սանդղակում»: Ընդ որում, որքան մոտենում ենք ուշ շրջաններին, այնքան բնակավայրերն ավելի են մեծանում և նպատակահարմար է դառնում աստիճանակարգման սանդղակի ընդլայնումը: Այսպես, Հայկական լեռնաշխարհի համար ստացվում է հետևյալ պատկերը. նոր քարի և պղնձի դարերի բնակավայրերի (0.25-3-4 հա, միջինում՝ 1-1.5 հա) համակարգում բացակայում է աստիճանակարգությունը: Վաղ բրոնզում կարելի է առանձնացնել փոքր՝ 1-1.5 հա, միջին՝ 3-5 հա և մեծ՝ 6-12 հա տարածք զբաղեցնող բնակավայրեր, իսկ միջին բրոնզում՝ փոքր և միջին՝ 2-5 հա, մեծ՝ 10 հա բնակավայրեր: Ուշ բրոնզում տեսանելի են փոքր՝ 1-5 հա, միջին՝ 6-30 հա, մեծ՝ 30-55

հա, իսկ վաղ երկաթում՝ փոքր՝ 1-5 հա, միջին՝ 6-30 հա, մեծ՝ 30-55 հա, գերմեծ՝ մինչև 200 հա բնակավայրեր: Համեմատության համար նշենք, որ ուրարտական Արգիշտիխինիլին ուներ մոտ 400-500 հա, հին հայկական Արմավիրը՝ մոտ 150 հա, իսկ Արտաշատը՝ մոտ 500 հա մակերես:

Կենտրոնական բնակավայրի, որպես յուրահատուկ «մայրաքաղաքի», զաղափարը պիտի ձևավորվեր դեռևս մ.թ.ա. IV հազարամյակի վերջերից: Նման դասակարգման փորձ է իրականացվել Խարբերդի հովտի բնակավայրերի կապակցությամբ: Այսպես, ըստ իրենց չափի և նշանակության այդ բնակավայրերը բաժանվում են մեծ քաղաքների (Նորշունթեփե, Քորուջութեփե), փոքր քաղաքների (Թեփեջիք), գյուղերի (Դեղիրմենթեփե): Հնարավոր է ուրվագծել նաև «մայրաքաղաքների» փոփոխումները. ուշ պղնձի դարում այդպիսին էր Թեփեջիքը, վաղ բրոնզում՝ Նորշունթեփեն, միջին և ուշ բրոնզում՝ Քորուջութեփեն, վաղ երկաթում՝ նորից Նորշունթեփեն:

Պետք է ենթադրել, որ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական բնակավայրերը որոշակի ժամանակահատվածներում ունեին բավական խիտ բնակչություն: Նոր քարի և պղնձի դարերում բնակչությունը տարբեր մեծության բնակավայրերում պիտի կազմեր 200-800, վաղ բրոնզում՝ 200/300-1500/2000-4500/6000, միջին բրոնզում՝ 200-1500/2000; ուշ բրոնզում՝ 200-1500/5000-20/30000, վաղ երկաթում՝ 200-1500/2000-5000-20/40000 մարդ միջին հաշվարկով: Որոշ ուսումնասիրությունների համաձայն, մ.թ.ա. III հազ. կեսերին Խարբերդի հովտում հաստատվում է մոտ 10-20000 բնակչություն, մի պատկեր, որ նման է միջին չափի միջագետքյան վաղդինաստիական քաղաքին: Նորշունթեփեի և Հառիճի բնակչությունը մ.թ.ա. III հազ. կարող էր կազմել մոտ 4500-6000 մարդ: Յանիկթեփեի բնակչությունը վաղ բրոնզում կազմում էր մոտ 2000 մարդ, ինչի հիման վրա այն անվանվում է վաղ քաղաք: Մոխրաբլուրում պիտի ապրեին 1200-1500 մարդ: Քորուջութեփեի բնակչությունը վաղ բրոնզ II-ում կազմում էր 725 մարդ, միջին բրոնզում՝ 1139, ուշ բրոնզում՝ 826 մարդ:

Քանի որ քաղաքը հնագույն Հայաստանում ձևավորվել է հինարևելյան մշակութային աշխարհի միջավայրում, ապա նրա պատմության պարբերացման համար անհրաժեշտ է օգտագործել հինարևելյան քաղաքի **պարբերացման** չափանիշները: Ընդ որում, կարելի է առանձնացնել բուն քաղաքի զարգացման մի քանի ենթափուլ՝ 1. մ.թ.ա. IV հազ. վերջ, 2. մ.թ.ա. III հազ. առաջին կես, 3. մ.թ.ա. III հազ. երկրորդ կես, 4. մ.թ.ա. II հազ. առաջին կես, 5. մ.թ.ա. II հազ. երկրորդ կես, 6. մ.թ.ա. I հազարամյակի առաջին կես: Եթե 2-րդ, 4-րդ, և 6-րդ փուլերում հինարևելյան քաղաքը զարգանում է մի տեսակ տարանջատ (յուրաքանչյուր մշակութային գոտուն

բնորոշ է նեղ, տեղային զարգացման միտում՝ հարակից գոտիների հետ առանձին առնչություններով), ապա 1-ին, 3-րդ և 5-րդ փուլերում իրավիճակը լրիվ հակառակն է: Հին Արևելքում նկատվում է քաղաքական, տնտեսական և մշակութային աննախադեպ սերտաճում: Այս գործընթացները հիմնականում ազդել են Հայկական լեռնաշխարհի զարգացումների վրա: Բրոնզի դարում Հայկական լեռնաշխարհը ունեցավ քաղաքային կյանքի վերելքի երեք շրջան: Առաջինը տեղի ունեցավ մ.թ.ա. IV հազարամյակի վերջում, երբ հատկապես նրա արևմտյան և հարավային շրջանները, աշխույժ առևտրական կապերի մեջ գտնվելով ուրուկյան գոտու հետ, կանգնած էին գրեթե քաղաքային հասարակության կերտման շեմին: Սակայն, կուր-արաքսյան լեռնային բնույթի մշակույթի տարածմամբ այդ գործընթացները վերիմաստավորվեցին, փոխվեցին կապերի ուղղությունները և դանդաղեց քաղաքային կյանքի զարգացման միջազետքյան տարբերակի գործընթացը: Երկրորդ վերելքը տեղի ունեցավ մ.թ.ա. III հազ. վերջում, երբ հատկապես լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջաններում իշխում էր հյուսիսսիրիա-միջազետքյան տիպի քաղաքային միջավայրը: Սակայն, վաղ բրոնզի վերջի ճգնաժամի հետևանքով քաղաքային կյանքը լեռնաշխարհում հետընթաց ապրեց և միջին բրոնզը արդեն ուներ տեղական ավելի պահպանողական առանձնահատկություններ, թեև լեռնաշխարհը շարունակում էր աշխույժ մասնակցություն ունենալ միջազգային առևտրին: Քաղաքային կյանքը լեռնաշխարհում վերականգնվեց միայն ուշ բրոնզում և, չնայած մ.թ.ա. II հազ. վերջի առաջավորասիական ճգնաժամին, շարունակեց զարգանալ նաև վաղ երկաթում: Վերելքի և վայրէջքի այս գործընթացները նույն կերպ շարունակվեցին նաև հետագայում: Բավական է հիշել քաղաքային կենսակերպի մեծ վերելքը ուրարտական շրջանում և վայրէջքը նրա անկումից հետո, կամ հելլենիստական դարաշրջանի վերելքը և անկումը ավատատիրական հարաբերությունների ձևավորման մթնոլորտում:

Ամենակարևոր հարցերից մեկն այն է, **թե քաղաքի և քաղաքակրթության ձևավորման ո՞ր տարբերակն է** իր արտացոլումը գտել Հայկական լեռնաշխարհում, և ո՞ր գործոններն են ավելի աշխույժ եղել այդ ընթացքում՝ արտաքին, թե՞ ներքին: Մասնագիտական շրջանակներում այս տեսանկյունից տիրում են տարաբնույթ կարծիքներ: Ոմանք ընդգծում են արտաքին գործոնի դերը, կարծելով, թե քաղաքը ստեղծվել է մեկ օջախում (Միջազետք) և ապա տարածվել այլ շրջաններում, մյուսները համարում են, որ ներքին գործոնները և բնական պայմանները, պայմանավորել են քաղաքային հասարակության ձևավորման յուրահատուկ ուղի: Այն հանգամանքը, որ արտադրող տնտեսաձևի և կոթողային մտածելակերպի առաջին սաղմերը, ի թիվս այլոց, ի հայտ են գալիս Հայկական լեռնաշխարհի

արևմտյան և հարավային շրջաններում արդեն մինչև եցեգործական նոր քարի դարում, շեշտում է ներքին զարգացումների կարևորությունը: Մինչդեռ այն, որ Հայկական լեռնաշխարհը մշտապես առևտրատնտեսական կապերի մեջ է գտնվել քաղաքակրթության առաջավոր կենտրոնների հետ ընդգծում է արտաքին գործոնի աշխուժության հանգամանքը: Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական յուրահատուկ պայմանները (դա բաժանում էր տարաբնույթ զարգացման օրինաչափություններ ունեցող մշակութային աշխարհներ՝ Սիրիա-Միջագետքը, Փոքր Ասիան և Կովկասը) վկայում են, որ երկու գործոններն էլ պիտի որ ունենային կարևոր նշանակություն:

Սկսենք արտաքին գործոնի քննարկումից: Ըստ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքների զարգացման Հ. Մանանդյանի համակարգի, քաղաքի առաջացման և զարգացման պատճառը պետք է փնտրել բնակավայրի առևտրական ճանապարհին և քաղաքակիրթ աշխարհին մոտ գտնվելու մեջ: Հիրավի, Հայկական լեռնաշխարհը և հատկապես նրա արևմտյան և հարավային շրջանների մշակույթները աշխույժ կապի մեջ էին ժամանակի քաղաքային կյանքի առաջավոր կենտրոնների հետ: Այդ հարաբերությունների էությունը կարելի է հասկանալ այսպես կոչված «կենտրոն-ծայրագավառ» հարցի դիտարկման համատեքստում, ըստ որի Հին Արևելքում առանձնացել են ընդերքով հարուստ լեռնային շրջաններ (Փոքր Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Իրան, Պակիստան, Լևանտ) և ընդերքով աղքատ սակայն հասարակական-տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակում գտնվող գետահովիտներ (Միջագետք, Եգիպտոս, Ինդոսի հովիտ): Այդ հարաբերությունների կարգավորման չափանիշը փոխանակությունն էր, որի արդյունքում լեռնցիները ծանոթանում էին քաղաքակրթական արժեքներին, իսկ դաշտավայրաբնակները ձեռք էին բերում անհրաժեշտ հումք: Այս իմաստով, հնագույն Փոքր Ասիան, Հայաստանը և Իրանը Սիրիայի և Միջագետքի նկատմամբ գտնվում էին մոտավորապես այն հարաբերության մեջ, ինչ Եվրոպան՝ Միջերկրականի: Այսպիսով, քաղաքակրթության ձևավորման այս տարբերակում քաղաքային կյանքը առաջանում է քաղաքակիրթ աշխարհի հետ փոխազդեցության մթնոլորտում, որտեղ առաջնային դեր է խաղում փոխանակությունը: Այս տարբերակը հատկապես տեսանելի է Հայկական լեռնաշխարհի դաշտավայրային շրջաններում (հմմտ. Արարատյան, Խարբերդի և Ուրմիայի դաշտավայրերը)՝ մ.թ.ա. IV հազ. վերջում կամ մ.թ.ա. III հազ. վերջում:

Ինչ վերաբերում է ներքին գործոնին, վերջերս Վ. Մասունը առաջ քաշեց մի վարկած, անվանելով այն «քաղաքակրթության անցման կովկասյան ուղի»: Ըստ այդմ, վաղ կովկասյան հասարակություններին բնորոշ էին՝ 1. հասարակական ակնհայտ տարբերություններ և հարստության անհավասար բաշխում, 2. ռազմական

վերնախավի առկայություն, որը հարստության հիմնական կուտակողն ու մարդկային ուժի շահագործման կազմակերպողն էր, 3. մեծ մակերես զբաղեցնող, բայց համեմատաբար քիչ հնագիտական տվյալներով բնորոշվող բնակավայրեր, որոնք չէին կազմում մոխրաբլուրներ և աստիճանակարգված կերպով կենտրոնացված էին ամրոցների շուրջ, 4. հարստության և մարդկային ուժի ներդրում հիմնականում թաղման կառույցների (դամբանաթումբերի) կերտման ժամանակ, որի ընթացքում ծախսված ուժը համեմատելի է միջագետքյան տաճարների կառուցման ժամանակ վատնած ուժին: Այս գործընթացները հանգեցրին նախաքաղաքային հասարակության ստեղծմանը, որը, սակայն չվերաճեց դասական քաղաքի. այսինքն՝ խոսքը «քաղաքակրթության անցման ոչ ուրբանիստական ուղու» մասին է, որը զուգահեռներ է գտնում, օրինակ, Բալկանյան թերակղզու կամ վաղ երկաթի կենտրոնական Եվրոպայի հնագույն հասարակություններում: Այս տեսակետը գլխավորապես կիրառելի է Հյուսիսային Կովկասի (Մայկոպի տիպի) հնագույն հասարակությունների և Հարավային Կովկասի ու Հայկական լեռնաշխարհի միջինբրոնզեդարյան հասարակությունների համար: Իրականում նոր քարի դարում սկիզբ առած՝ Հայկական լեռնաշխարհի վաղերկրագործական հասարակությունները մինչև վաղ բրոնզի վերջը հիմնականում ընթանում էին քաղաքային կյանքի զարգացման առաջավորասիական ուղով: Այստեղ կային մոխրաբլուրներ, իսկ վաղ բրոնզից՝ ամրացված բավական մեծ բնակավայրեր՝ իրենց ներքին կառուցվածքով, որոնք կարող էին բնորոշ լինել վաղ քաղաքային հասարակություններին: Ռոտոփի երկրագործությունը որոշակի դեր էր խաղում դաշտավայրային շրջանների հասարակական կյանքում սկսած պղնձի դարից և հատկապես վաղ բրոնզում: Թեև այս գործընթացները իրենց ծավալներով անհամեմատելի են միջագետքյան բարդ հասարակական հարաբերությունների հետ, այնուամենայնիվ ճանապարհները հեռավոր նմանություն ունեն: Սակայն մ.թ.ա. III հազ. վերջերին այս գործընթացը տարբեր ներքին և արտաքին պատճառներով (կլիմայական պայմաններ, տափաստանային ցեղերի արշավանքներ) դադարում է և միջին բրոնզում արդեն տեսանելի է «կովկասյան ուղու» գերակայությունը: Ուշ բրոնզ-վաղ երկաթում կարծես թե վերոհիշյալ առաջավորասիական և կովկասյան տարբերակները հավասարապես ազդում են քաղաքային կյանքի զարգացումների վրա, և այդ երկու ճանապարհների համակեցությունից ձևավորվում է ուրարտական, իսկ հետագայում նաև հայկական քաղաքների զարգացման տարբերակը:

Հայկական լեռնաշխարհի հնագույն հասարակությունների ներքին զարգացման ճանապարհները հիմնականում տարբերվում էին սիրիա-միջագետքյանից: Հայկական լեռնաշխարհում քաղաքի ձևավորման գործընթացի ամենամոտ

զուգահեռը պետք է փնտրել աշխարհագրորեն և մշակութապես հարազատ խեթա-խուռիական աշխարհում: Ինչպես խեթական, այնպես էլ խուռիական հասարակությունները իրենց բնույթով երկրագործ-արհեստագործական էին և կենտրոնացված էին դաշտավայրերում (որտեղ գտնվում էին զարգացած քաղաքային համայնքները) և լեռներում (ուր որպես գերագույն կազմակերպություն հանդես էր գալիս ցեղը): Խուռիական հասարակությունը բաղկացած էր ազգակից ընտանեկան համայնքներից, որոնք ունեին իրենց հողային հիմնապաշարը և ղեկավարվում էին նահապետի կողմից: Մի քանի ազգակցական և ոչ ազգակցական համայնքներ կազմում էին մի կազմակերպություն, որ կոչվում էր բնակավայր (աքադ. *ālum*): Բնակավայրերը խմբավորվում էին մեկ կամ մի քանի ամրացված կենտրոնների շուրջ, որոնց պայմանականորեն կարելի է կոչել «քաղաք», որտեղ գտնվում էին տաճարը, ինչպես նաև առաջնորդի և նրա մերձավորների տները: Այստեղ էր հավաքվում նաև ավագների խորհուրդը: Այդ քաղաքները, որպես կանոն, առաջանում էին բլուրների վրա (հմմտ. «քաղաք» նշանակող մեհենագիր խեթերեն նշանը, որ բլուր է պատկերում, ինչպես նաև հայերենի «բլուր» հիմքով բնակավայրերը, որոնց թվում նաև «Դվին»-ը - Գ. Թումանյան, բանավոր հաղորդում) և տարածվում էին նրանցից դուրս:

Խեթա-խուռիական աշխարհում հատկապես կարևորվում էր տաճարի և տաճարական տնտեսության նշանակությունը, ամպրոպի աստվածության պաշտամունքը, որի վրա հենվում էր պետական գաղափարախոսությունը: Տաճարը (*resp.* «սրբազան տարածքը») այստեղ, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհում, պիտի հանդիսանար այն հիմքը, որի վրա կարող էր ձևավորվել քաղաքային կյանքը: Ճիշտ է այլ հասարակություններում (օրինակ՝ Միջագետքում, Հունաստանում) ևս տաճարը ուներ նույնատիպ գործառույթ, սակայն լեռնային շրջաններում այն արտահայտվում էր յուրահատուկ կերպով: Ինչպես վերը տեսանք, հին քաղաքները առաջին հերթին կատարում էին գյուղատնտեսական համայնքի, արհեստների և առևտրի կենտրոնի ու, որ շատ կարևոր է, գաղափարական առաջնորդի դեր: Ահա թե ինչու տաճարական կենտրոնի առկայությունը կարևորագույն դրդապատճառ էր այդ տեղում քաղաքային տիպի բնակավայրի առաջացման համար: Այս տարբերակը բավականին լավ տեսանելի է հին Փոքր Ասիայում և Հայաստանում, ու զուգահեռներ է գտնում կովկասյան լեռնաբնիկների ազգագրական նյութերում (Ա. Փերիխանյան): Այս տարածքներում, սկսած առնվազն խեթական շրջանից (թերևս նաև ավելի վաղ), տաճարները հանդիսանում էին 1. աստվածապետական համայնքներ, 2. հասարակական պաշտամունքային շինություններ, 3. արքայական պաշտամունքային շինություններ: Սրանցից ամենահինագույնը և ամենատարածվածը

աստվածապետական համայնքն էր, որից հետագայում առաջացան տարբեր քաղաքային կազմակերպություններ: Տոհմային համակարգի անկման և տարածքային համայնքների ձևավորման ժամանակաշրջանում երկրագործական գոտիներում կազմակերպական կենտրոնը և պաշտամունքային կենտրոնը (այսինքն՝ գյուղական և տաճարական համայնքները) համընկնում էին: Երկրագործական բնակչության մեծ մասը կենտրոնանում էր տաճարների շուրջ: Տաճարները ոչ միայն սրբազան, այլև տնտեսական կենտրոններ էին տեղական ինքնավար տարածքային համայնքների համար և զբաղվում էին նաև արտադրությամբ՝ ստեղծելով նյութական բարիքներ, իսկ ավելի ուշ՝ թողարկելով նաև դրամներ: Եվ պատահական չէ, որ նրանցից շատերը առևտրական ճանապարհների վրա էին գտնվում և փոխանակության կենտրոններ էին (այս իմաստով հետաքրքրական է, որ խեթերեն *happira* բառը միևնույն ժամանակ նշանակում է և՛ «քաղաք», և՛ «շուկա»): Համայնքի հողերը համարվում էին աստվածության, այսինքն՝ տաճարի սեփականությունը, որը մարմնավորում էր համայնքի միասնականության գաղափարը: Սրբարանի շուրջ կենտրոնացած տաճարական համայնքներից այս միավորները աստիճանաբար վերաճեցին քաղաքային կազմակերպությունների: Այնպիսի սրբարան-տաճարներ, ինչպիսիք էին Գյոբեկլիթեփեն նոր քարի դարում, Դեդիրմենթեփեն պղնձի դարում, Մոխրաբլուրը վաղ բրոնզում, Քյուլթեփե II-ը միջին բրոնզում, Մեծամորը, Դվինը, Գեղարոտը ուշ բրոնզ-վաղ երկաթում, պիտի դառնային հասարակական կյանքի այն կենտրոնները, որոնց շուրջ աստիճանաբար կարող էր զարգանալ քաղաքը: Այս ավանդույթը ավելի զարգացավ ուրարտական (Տուշպա, Մուծածիր, Կումենու) շրջանում և շարունակվեց հետուրարտական (Աստղի բլուր, Սալքար, Արծվաբերդ, Խորտամրոց) շրջանում և իր արտահայտումը գտավ բուն հայկական միջավայրում: Այսպես, բավարար է հիշել տաճար-քաղաքներ Աշտիշատի, Անի-Կամախի (հայաստական Կումախան), Երիզայի և ի վերջո հնագույն մայրաքաղաք Արմավիրի առկայության փաստերը: Բացի դրանից, հին Հայաստանում քաղաքի կառուցումը կամ տեղափոխումը անպայմանորեն կապվում էր այնտեղ սրբարանը տեղափոխելու գաղափարի հետ (Բագարան, Արտաշատ): Հիշարժան է, որ Տիգրանակերտը կառուցվեց այն սրբարանի տեղում, որտեղ մ.թ.ա. 95 թ. թագադրվել էր Տիգրան Մեծը: Ընդ որում ինչպես հինարևելյան մի շարք երկրներում, այնպես էլ Հայկական լեռնաշխարհում նախապես սրբարանները կարող էին գտնվել նաև բնակավայրերից դուրս (Հառիճ, Բաբադերվիշ, Ամիրանիսգորա, Բյուրական, Սալքար, Աշտարակ), դեպի որոնք էին տանում սրբազան ճանապարհները: Այսպիսով, քաղաքի ձևավորման հայկական տարբերակը հիմնական գծերով նույնություններ է ցույց տալիս փոքրասիական և խուռիական տարբերակներին: Կենտրոնափոքրասիական և հյուսիսմիջագետքյան խուռիական

շրջանները Հայկական լեռնաշխարհի հետ գրեթե միաժամանակ (մ.թ.ա. III հազ. վերջում) թևակոխեցին քաղաքային կյանքի փուլը: Սակայն եթե նշյալ շրջանների քաղաքային կյանքի այդ վերելքը հանգեցրեց առաջավորասիական տիպի գիր ունեցող հասարակության ստեղծմանը մ.թ.ա. II հազ. սկզբում (Քանես, Խեթական թագավորություն, խուռիական պետություններ), ապա Հայկական լեռնաշխարհում նույնը տեղի ունեցավ միայն մ.թ.ա. I հազ. սկզբում՝ ուրարտական պետության ստեղծումով:

Բագբարթու (Բագմաշթու): Այս աստվածուհին ասորեստանյան աղբյուրում հիշատակվում է որպես Խալդի աստծո կին²¹: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է այն կարծիքը, թե Բագբարթուն նույն Ուարուրանի աստվածուհին է, ով

¹⁶ H. J. Kellner, Gürtelbleche aus Urtu, Stuttgart, 1991, s. 69-70, 282, Taf. 70-71. U. Seidl, նշվ. աշխ., Felttafel A-2 (2):

¹⁷ Ե. Գրեկյան, Կինն Ուրարտուում. Ուրարտուի թագուհիները, («Շնորհ ի վերուստ. Առասպել, ծես, պատմություն» ժողովածու), Եր. 2008, էջ, 293:

¹⁸ H. Tadmor, The Inscription of Tiglath-Pileser III King of Assyria, Critical Edition with Introductions, Translations and Commentary, Jerusalem, 1999, 17, p., 53: Այս մասին տեղեկացվելու համար պարտական եմ Ե. Գրեկյանին:

¹⁹ H. Tadmor, նույն տեղում:

²⁰ S., Parpola, The Correspondence of Sargon II, Part I, Letters from Assyria and the West, Helsinki, 1987, p. 51:

²¹ АВВУ, (2) 49, стр., 332., հավանաբար Խալդի աստծո տաճարում գտնվել է Բագբարթու աստվածուհու արձանը:

ևս համարվում էր Խալդի աստծո կինը²² : Սակայն այդ կարծիքների հետ դժվար է միանշանակորեն համաձայնվել: Պետք է նշել, որ մինչ այսօր հայտնի չէ Ռարուբանիի և Բագբարթուի նույնականությունը հաստատող որևէ ուղղակի սկզբնաղբյուր²³: Իհարկե, չի բացառվում, որ Բագբարթուն կարող էր լինել Ուարուբանի աստվածուհու գործառույթներից մեկի անձնավորումը, բայց ոչ հենց ինքը՝ Ռարուբանին: Նույնիսկ նորասորեստանյան տերության շրջանում, երբ Իշթար աստվածուհին հաճախակի համարվում էր պետության գերագույն աստված Աշշուրի կինը, Նինվեի Իշթարի և Արբելայի Իշթարի պաշտամունքն ու գործառույթներն իրարից զգալիորեն տարբերվում էին և նրանք ընկալվում էին որպես առանձին աստվածուհիներ²⁴: Բացի այդ Աշշուրի կինն էր համարվում նաև Մուլլիսուն, ով, հաճախ հիշատակվելով որպես առանձին աստվածուհի, հանդիսանում էր նաև Իշթար (հատկապես՝ Նինվեի Իշթարի) դիցուհու կերպավորումներից մեկը²⁵: Շատ հավանական է, որ նմանատիպ դրսևորում եղած լինի նաև Ռարուբանիի և Բագբարթուի պարագայում:

Մուծածիրի տաճարից տարված ավարի թվում հիշատակվող Բագբարթու աստվածուհու կնիքով ոսկե մատանու գոյության փաստը (որը, ըստ գրավոր տեքստի, կիրառվում էր հատուկ որոշումներ կայացնելու ժամանակ), առնվազն վկայում է Մուծածիրի տաճարում կատարվող գուշակությունների մասին²⁴: Քանի որ այդ մատանին պատկանում էր հենց Բագբարթուին, կարելի է ենթադրել, որ Բագբարթուն համարվել է նաև գուշակությունները հովանավորող դիցուհի: Այս առումով Բագբարթուն զուգահեռներ ունի Արբելայի Իշթար և Նինվեի Մուլլիսուն աստվածուհիների հետ: Արբելայի Իշթարի տաճարը համարվում էր նորասորեստանյան շրջանի գուշակության կարևորագույն կենտրոններից մեկը²⁵: Արբելան և Մուծածիրը աշխարհագրական առումով բավական մոտ էին (տե՛ս՝ Քարտեզ 1), և այս առումով, նմանությունները կարող էին լինել նաև որոշ

²² Г., Меликишвили, Наири-Урарту, Тбилиси, 1950, с. 191, 372. Ս. Հմայակյան, նշվ. աշխ., էջ 40՝ հղված գրականությամբ

²³ Ռարուբանի-Բագբարթու հարաբերակցությանը մենք անդրադարձել ենք առանձին հոդվածով. տե՛ս՝ Ս. Բաղալյան, Ռարուբանիի և Բագբարթուի հարաբերակցության շուրջ, Մերձավոր Արևելք, VIII, 2012, էջ. 23-39:

²⁴ B. N. Porter, Ishtar of Nineveh and her Colloborator, Ishtar of Arbela in the Reign of Assurbanipal, Iraq, vol. LXVI, London 2004, p. 42. W. Lambert, Istar of Nineveh, Iraq, vol. LXVI, London 2004, p. 35:

²⁵ B., Porter, նույն տեղում, S. Parpola, Assyrian Prophecies, Helsinki, University Press, 1997, XL, Parpola S., Monetheism in Ancient Assyria, One God or Many? Concepts of Divinity in the Ancient World(ed. by B. Porter), Bethesda, 2000, p., 194-195:

²⁴ Б. Пиотровский, Ванское царство(Урарту), Москва, 1959,с. 223, Ե.,Գրեկյան, ՌԻրարտական աստվածապետության..., էջ. 326:

²⁵ S. Terpo, նշվ. աշխ., pp., 84:

փոխազդեցությունների հետևանք²⁶: Այս համատեքստում հետաքրքիր է, որ ասորեստանյան աղբյուրներից մեկում հաղորդվում է Մուծածիրի-Արբեւա երթուղու մասին ²⁷:

Աշշուր աստծո կինը համարվող Մուլլիստուն ևս ուներ գուշակություններին առնչվող որոշ գործառույթներ²⁸: Բացի այդ Մուլլիստուն, որին անվանում էին նաև «վայրի կով», ասորեստանյան որոշ տեքստերում ընկալվում էր որպես գահաժառանգի աստվածային մայր: Նա երբեմն պատկերվում էր հորթին սնուցող կովի տեսքով: Ընդհանրապես հինմերձավորարևելյան պատկերագրության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում իր հորթուկին սնուցող կովի տեսարանը ²⁹ (նկ. 3): Տեսարանային նման հորինվածքում հորթը ասոցացվում էր աստվածուհուց ծնված և նրա կողմից սնուցվող օրինական գահաժառանգի հետ³⁰: Ըստ ասորեստանյան մի սկզբնաաղբյուրի՝ Մուլլիստուն կերակրել էր Աշշուրբանապալին³¹ : Մեկ այլ տեքստի համաձայն Իշթար-Մուլլիստու աստվածուհին համարվում էր Էսսարհադոնի մայրը³²: Ըստ այդմ, ասսուրական կրոնական պատկերացումների համակարգում գահաժառանգը կարծես թե ընկալվում էր որպես մահկանացու, սակայն նաև՝ ծնված աստվածային մորից: Տեքստերից մեկի համաձայն, մինչև յոթ տարեկան դառնալն արքայազնին նվիրաբերում էին հենց այդ աստվածուհու (աստվածուհիների) տաճարներին ³³: Նորասորեստանյան թագավորության հայր-մայր-որդի հայտնի եռյակը կազմում էին

²⁶ Մուծածիրի հնարավոր տեղադրությունների մասին տե՛ս օրինակ, Н. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985. cc. 33-34, 144-145, R. M. Boehmer, Zur Lage von Musasir, Bag.M, 1973, 6, 31-40.

²⁷ Այդ մասին տե՛ս օրինակ՝ K. Radner, Between a Rock and a Hard Place: Musasir, Kummē, Ukku and Šubria- the Buffer States between Assyria and Urartu, Acta Iranica, Biainili-Urartu. The Proceedings of the Symposium Held in Munich 12-14 October, Edited by S. Kroll, C. Gruber. U. Hellwag, M. Roaf & P. Zimansky, Peeters 2012, p., 248.

²⁸ S., Parpola, Monotheism in Ancient Assyria, in: Porter, p., 195:

²⁹ Այդ մասին տե՛ս հատկապես՝ O. Keel, Das böcken in der milch seiner mutter und verwandtes, Orbis Biblicus et Orientalis 33, 1980.

³⁰ Նույն տեղում, էջ, 192-195:

³¹ S., Parpola, Assyrian..., p., XI, B., Porter, Ishtar of..., p., 42:

³² S., Parpola, Assyrian..., XL;

³³ S., Parpola, Monotheism..., p., 195, նույնի՝ Assyrian ..., XXXIX: Նման տեղեկություններ կան Էսսարհադոնի և Աշուրբանիպալի մասին, ում աստվածային մայրը համարվում էր հենց Մուլլիստուն: Գահաժառանգին մինչև յոթ տարեկանը Իշթարի տաճարին հանձնելու մոտիվը որոշակիորեն համադրելի է Մ. Խորենացու Անուշավան Սոսանվերի մասին հաղորդած մի պատումի հետ, որի համաձայն՝ վերջինիս, պաշտամունքի համաձայն, նվիրաբերել էին Արմավիր քաղաքի Արմենակի սուսի ծառերին, որոնց տերևների հանդարտ կամ սաստիկ շարժվելուց նայելով քամու ուժին և ուղղությամբ՝ Հայոց աշխարհում երկար ժամանակ գուշակություններ էին անում(Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի)), Երևան, 1981:

արքան, թագուհին և գահաժառանգը: Դրանցից առաջին երկուսը խորհրդանշաբար մարմնավորում էին Աշտուր աստծուն և Իշթար-Մուլլիստու աստվածուհուն³⁴:

Համաձայն ասուրական տեքստերի Մուծածիրի Խալդի աստծո տաճարում գտնվում էին ցլի, ինչպես նաև իր հորթուկի հետ կովի բնական չափեր ունեցող արձանները, որոնք ձուլվել էին Սարգուրի Իշպուինիորդու հրամանով տաճարում կուտակված պղնձի պաշարներից³⁵: Մուծածիրի տաճարի բարձրաքանդակի մեզ հասած նկարում՝ տաճարի ճակատային հատվածի դիմաց, կարելի է տեսնել իր հորթուկին կերակրող կովի տեսարանը (Նկար 4): Անկախ այն հանգամանքից, թե իրականում ով է ներկայացված Սարգուրի անվան տակ³⁶, ակնհայտ է, որ վերջինս մեծ նշանակություն ու դեր է տվել այդ արձանների ձուլմանը և դրա համար առանց վարանելու օգտագործել է տաճարի պահոցներում որոշակի նպատակներով ամբարված պղնձի մի մասը: Վերոհիշյալ տեքստում կովի և հորթուկի հորինվածքային արձանների հիշատակության փաստը, մեր կարծիքով իր ուղղակի գուգահեռներն ունի Իշթար-Մուլլիստույի (որպես «վայրի կով») իր հորթի հետ ներկայացվելու պատկերագրական սյուժեի հետ: Կարծում ենք, որ ուրարտացիների համար ևս այս ընկալումը խորթ չի եղել: Եթե Մուծածիրի տաճարում վերը նշված ցուլը, կովը և հորթը կազմել են ընդհանուր արձանախումբ, ապա դրանք կարող էին հանդիսանալ Խալդի աստծո, Բագբարթու աստվածուհու և վերջիններիս երկրային դրսևորումը հանդիսացող քրմապետ-արքայի, գերագույն քրմուհու (ով կարող էր լինել նաև թագուհին կամ սերված արքայական ընտանիքից) և նրանցից ծնված օրինական գահաժառանգի խորհրդանշական կերպավորումները:

Կարելի է ենթադրել, որ ուրարտական տերության մեջ Բագբարթու աստվածուհուն հավանաբար մարմնավորել է Մուծածիրի տաճարի գերագույն քրմուհին՝ համարվելով օրինական գահաժառանգի մայրը: Այս առումով բավական հետաքրքիր է Բագբարթու անվան ստուգաբանություններից մեկը, ըստ որի այն ծագում է իրանական *baga* - «աստված» և *bartr* - «կին» բառերի ակուզատիվից և նշանակել է «աստծո կին»³⁷: Մ. Ռիմնշնայդերը չի բացառում, որ Բագբարթու դիցուհու

³⁴ S., Parpola, Assyrian ..., XXXVIII

³⁵ АВИИУ(2), 46, стр., 318:

³⁶ Ըստ Ն. Ադոնցի՝ գրագրի սխալի հետևանքով Իշպուինի Սարգուրորդին դարձել է Սարգուրի Իշպուինիորդի (տես՝ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ, 194):

³⁷ Հղվում է ըստ՝ M. Riemschneider, Die urartäische Gottheiten, Orientalia, vol., 32, Roma 1963, 149.

Բագբարթու(Բագմաշթու) աստվածուհու անվան այլ ստուգաբանությունների և գորշառույթների մասին տես՝ օրինակ՝ Ծ. Грантовский, Ранняя история иранских племен в Передней Азии, Москва 1970, сс. 297-305, Л., Биягов, К вопросу об интерпретации Халди и Арубани-Багбарту, Լրաբեր հասարակական խոսքերի (ԼՀԳ), 11, Եր. 1974, сс., 98-106. նույնի՝ Über die nature des gottes Haldi und der göttin Arubani-Bagbartu, Oikumene, 2, Budapest, 1978, ss. 149-152. Մ. Հմայակյան, Վանի թափավորության..., էջ,

կերպարի ու գործառույթների տակ թաքնված լինի վաղ շրջանի ինչ-որ քրմուհու վարքագծային նախատիպ ³⁸: Մեր կարծիքով, չի բացառվում, որ ուրարտացիների մոտ Բագրարթուն լինել նաև աստվածուհուն մարմնավորող քրմուհու տիտղոս:

Հին Մերձավոր Արևելքում հաճախ հենց արքայից և վերջինիս ընտրյալ ընտրյալ կնոջից ծնված զավակն էլ համարվում էր օրինական գահաժառանգ: Այս առումով, հնարավոր է, որ Սարդուրի I արքայի հոր Lutipri անունը, կամ տիտղոսը և Ռուսա I-ի Uedipri տիտղոսը ինչ-որ կերպ կապված լինեն այս հանգամանքի հետ: Ըստ Ն. Ադոնցի՝ Լուրիպրին և Ռեդիպրին իմաստային առումով իրար համարժեք են, կազմված են ուրարտերենում հոմանիշներ հանդիսացող՝ lutu- և uedi - «կին», և խոռիերեն՝ ipri, (ուրարտերեն՝ euri - «տեր») բառարմատներից և երկուսն էլ բառացի նշանակում են «աստվածուհու հովանավորյալ» ³⁹: Այս առումով հետաքրքիր է, որ ըստ որոշ մասնագետների ընթերցումների, ուրարտական տեքստերում կարող է LUA.NIN(li)-տիտղոսը, որ նշանակում է «տիրուհու, աստվածուհու որդի»⁴⁰: Ռիշագրավն այն է, որ վերը նշված երեք անվանումներից առնվազն երկուսը ինչ-որ կերպ առնչվում են «կին» հասկացության հետ: Այս առումով, չի բացառվում, որ նրանք ինչ-որ կերպ կապ ունենան արքայից և վերջինիս ընտրյալ կնոջից ծնված օրինական գահաժառանգի սոցիալական ինստիտուտիը ներկայացնող ծիսական պատկերացումների համակարգի հետ: Իհարկե այստեղ կան և հնարավոր են նաև այլ մեկնաբանություններ⁴¹ :

Ռուարուբանիին ձուլված ուլունքահատիկների շուրջ: Ինչպես արդեն նշել ենք, ըստ ընդունված կարծիքների, այս աստվածուհին ևս համարվում է Խալդի աստծո կինը: Մեզ են հայտնի Ուարուբանիին նվիրաբերված բավական խոշոր ուլունքահատիկներ: Դրանցից մեկի վրա թողած արձանագրության մեջ Արգիշթի (I³)

38-40: Ս. Պետրոսյան, Հին Մարաստանի տարածքի երրորդ էթնիկական տարրի մասին, ՊԲՀ, 1979, (4), էջ, 52-53:

³⁸ M., Riemschneider, նույն տեղում:

³⁹ Ն., Ադոնց, նշվ. աշխ., , էջ, 194:

⁴⁰ И. Дьяконов, Урартский письма и документы, Москва-Ленинград, 1963, с., 62. P. Zimansky, Ecology and Empire: The Structure of the Urartian State, Chicago, SAOC, 41, 1985, pp., 81-85, 87, 124n, 68,74, 125-126n.

⁴¹ Lutipri-Շ ~ Uedipri-Շ մասին տես՝ M. Riemschneider, Die urartäischen Gottheiten, Orientalia, vol., 32, 1963, s. 166. T. Tarhan, Urartu Devleti' nin «Kuruluş» Evresi ve Kurucu Krallardan «Lutipri=Lapturi» Hakkında Yeni Görüşler, Anadolu Araştırmaları,(AnAr), VIII, 92-98. Այսինքն մասնաբեկորներից մեկում հիշատակված ja/ʿe di-ip-ri[կարծես թե հիշեցնում է Uedipri անունը, M. Salvini, The Inscriptions of Ayanis. Cuneiform and Hieroglyphic. Inscriptions on Clay, (Ayanis I, Ten Years Excavations at Rusahinili Eiduru-kai 1989-1998, Documenta Asiana, VI, (ed. A. Çilingiroğlu, M. Salvini), Roma, 2001), , CB Ay-40, p. 292.

^{LU} A.NIN (li)-Շ մասին տես՝ M. Salvini, Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt, 1995, 113f. U. Hellwag, Sohn der Königin ^{LU} A.NIN-li oder Wasserwirtschaftsminister ^{LU} A.ZUM-li ? : Überlegungen zu einem “fragwürdigen” Amt um urartäischen Königshof, “ Akkadica”, 117, 2000, pp. 21-43. Y. Grekhan, Urartian Oracle Texts? (Preliminary Study), in: Dandamayeva et al, 2005, pp. , 39-50.

արքան հաղորդում է, որ այն բերել է Էրիախի երկրից⁴², իսկ մյուսում՝ հիշատակված է Սարդուրիի՝ Ուարուբա աստծո (աստվածուհու) մարդու մասին⁴³:

Ուլունքները, հուռութները, ինչպես նաև մանյակներն ու հմայիլները մարմնական սիրո աստվածուհիների համար միջոց էին տղամարդկանց կախարդելու, գայթակղելու և նրանց մեջ սեռական ցանկություններ արթնացնելու համար⁴⁴: Ըստ Ա. Փիլիպոսյանի, տոփանքի և սիրո աստվածուհիների հուռութների զգալի մասը պատրաստվել են ծովախեցիներից⁴⁵: Ուշագրավ է, որ Մահաբհարատայում հիշատակվող Արատտա երկրի բնակիչները ծովախեցի էին անվանում կնոջ սեռական օրգանը, հավանաբար, արտաքին նմանության պատճառով⁴⁶: Ծովախեցիները և դրանցից պատրաստված որոշ զարդեր առնչվել են Շավուշկայի, Նինիլի, Իշթարի և մարմնական սիրո այլ աստվածուհիների պաշտամունքի հետ՝ ծառայելով որպես պտղաբերության, հմայքի և թովչանքի խորհրդանշաններ⁴⁷:

Օձասարի (Քարտեզ 1) արձանագրության տեքստում հիշատակված «Խալդիի կինը»: Իշպուինի և Մենուա արքաների համատեղ գահակալության տարիներին (մոտ. Մ. ա. 820-ական թթ.) պատկանող այս արձանագրության վերջում հիշատակվում է Պուլուադիի Խալդիի կնոջը կով զոհաբերելու մասին⁴⁸: Ցավոք, արձանագրության վերջին հատվածը բավական վնասված է: Քանի որ վերը նշված միապետների համատեղ կառավարման տարիների արձանագրություններում միայն Ուարուբանիին են կովեր զոհավերվել, իտալացի ուրարտագետ Մ. Սալվինին կարծիք է հայտնել, որ Օձասարի արձանագրությունում խոսքը կարող էր գնալ Ուարուբանիի մասին⁴⁹: Իհարկե, նման մեկնաբանությունը միանգամայն տրամաբանական է, սակայն, այստեղ կարող են լինել այլ մոտեցումներ ևս: «Պուլուադիի Խալդիի կին» ընթերցումը կարող է հուշել, որ այդ տարածաշրջանում

⁴² A. M. Dincol, E. Kavakli, Van bölge muzesinde bulunan yazıtlı bir Urartu boncuğu, AnAr, VIII, 1982, 231-235.

⁴³ C. Walker, Texts and Fragments, JCS, 30/4, 1978, p. 234. md ,aruba ասծո (աստվածուհու) մարդկանց մասին հիշատակություն կա նաև Այանիսից հայտնաբերված մասնաբեկորներից մեկում, տես M. Salvini, The Inscriptions of Ayanis. Cuneiform and Hieroglyphic. Inscriptions on Clay, CB Ay-39, p.291.

⁴⁴ Ա. Փիլիպոսյան, Հայկական լեռնաշխարհը Մերձավոր Արևելքի պատմա-մշակութային փոխառնչությունների ոլորտում (մ. թ. ա. III-I հազ.), պատմական գիտությունների դոկտորի զիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր. 2004, էջ 20-39:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Նույն տեղում, ինչպես նաև՝ Ա., Փիլիպոսյան, Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. III-II ծովախեցիները որպես հնագիտական և ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուր, Հին Հայաստանի մշակույթը, Եր., 1998, էջ, 64-65:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ M. Salvini, Corpus dei Testi Urartei, vol. I, Le Iscrizioni su Pietra e Roccia i testi, Roma 2008, A 3-8.

⁴⁹ M. Salvini, 1998, Eine urartäische Felsinschrift in der Region Nachičevan, Zeitschrift für Assyriologie, 88/1, 1998, 94, 97.

առաջնային դիրքեր է ունեցել ինչ-որ աստվածուհու պաշտամունք: Մենք հակված ենք կարծելու, որ Իշպուհինին և Մենուան, որպեսզի կարողանային այդտեղ ավելի հեշտ տարածել Խալդիի պաշտամունքը, ուղղակի «ամուսնացրել» են Խալդիին և Պուլուադիի աստվածուհուն, ինչի հետևանքով, հավանաբար, վերջինիս որոշ գործառույթներ անցել են ուրարտական պետականությունը մարմնավորող Խալդի աստծուն:

Սրբազան հետերիզմ և հայկական ժառանգություն: Այսօր, դեռևս դժվար է հիմնավորապես խոսել Ուրարտուում տարածում ունեցած «սրբազան հետերիզմի» մասին: Այս առումով ուշադրության է արժանի Թոփրաք կալեից հայտնաբերված մերկ կնոջ ոսկրե արձանիկը, որն ունի պարանոցն օղակող հուլունքաշար և թագաձև գլխազարդ⁵⁰ (նկ 6): Միրո և պտղաբերության «մերկ աստվածուհու» այս կերպարը, որ լայնորեն տարածված էր Հին Մերձավոր Արևելքում, կարող է որոշակի հիմք հանդիսանալ Վանի թագավորությունում «սրբազան հետերիզմի» ինստիտուտի գոյության համար⁵¹: Ըստ Ե. Գրեկյանի, չի բացառվում, որ ուրարտական որոշ գոտիների վրա պատկերված կանանց շարքում կարող են պատկերված լինել նաև հիերոդուլներ⁵²:

Հին Հայաստանում «սրբազան հետերիզմի» գոյության մասին է փաստում հույն պատմիչ Ստրաբոնը, վկայելով, որ Եկեղյաց գավառում հասարակության բարձրաստիճան ներկայացուցիչներն իրենց դեռատի կույս աղջիկներին նվիրաբերում էին Անահիտ աստվածուհուն, որոնք դիցուհու տոնի ժամանակ, նրան նվիրված սրբազան սեռական նվիրատվության ակտից հետո կարող էին ամուսնանալ և հանրության մեջ համարվում էին առաքինի ու աստվածահաճո կանայք⁵³: Հին Հայաստանում նման ինստիտուտի գոյությունը պետք է ունենար խորը արմատներ և ժառանգված լիներ առնվազն ուրարտական ժամանակներից⁵⁴:

Եթե ճիշտ է Մուծածիրի Խալդի աստծո տաճարում Բագբարթու աստվածուհուն մարմնավորող Գերագույն քրմուհու գոյության մասին մեր կանխավարկածը, ապա, ամենայն հավանականությամբ, գոնե Մուծածիրի Խալդի աստծո տաճարական համալիրում պետք է որ գոյություն ունենար «սրբազան հետերիզմի» ինստիտուտ: Դժվար է կարծել, որ Հին Մերձավոր Արևելքում այդքան տարածված այս ինստիտուտը, որոշակի ազդեցություն չունենար նաև ուրարտական տեքության մեջ:

⁵⁰ Ս. Հմայակյան, Ուրարտուի ինքնագրությունը, «Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները», հանրապետական գիտաժողովի նյութեր՝ նվիրված Էմմա Կարապետյանի հիշատակին, Եր. 2001, էջ 62, 65, նկար 4:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Ե., Գրեկյան, Կինն Ուրարտուում..., էջ 295:

⁵³ Страбон, География (пер. Г. А. Стратановского), Ленинград, 1964, XIV, 16, с. 501.

⁵⁴ Ս. Հմայակյան, Ուրարտուի ինքնագրությունը, էջ 62: Ե. Գրեկյան, Կինն Ուրարտուում, էջ 295:

Հնարավոր է, որ Արբելայի Իշթարի տաճարը, որ հայտնի էր նաև իր հիերոգլիֆներով, և աշխարհագրորեն բավական մոտ էր Մուծածիրին, որոշակի ազդեցություն ունենար Մուծածիրի Խալդի աստծո տաճարում այս ինստիտուտի տարածման գործում:

Այս առումով հետաքրքիր է, որ Հեր և Զարևանդ գավառներում ընդհուպ մինչև XIX դ. վերջը չբեր կանայք գնում էին սբ. Ստեփանոս եկեղեցու աղբյուրի մոտ, որտեղի ջուրը համարվում էր պողպատ, և այնտեղ մերձենում էին անծանոթ տղամարդու հետ՝ մտածելով, որ այդ ճանապարհով սուրբը բժշկում է նրանց⁵⁵: Կարծում ենք, որ այս տեղեկությունը կարող է լինել Հեր և Զարևանդ գավառներում, ինչպես նաև հարակից շրջաններում հնագույն ժամանակաշրջաններում իրականացվող «սրբազան հետերիզմի» հետ առնվող որոշակի ծիսական արարողությունների հեռավոր արձագանք:

Մեր ուսումնասիրության համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Հին Հայաստանի պաշտամունքային կարևորագույն կենտրոն Քարքե լեռան դիմաց գտնվող Աշտիշատի տաճարական համալիրը և հատկապես նրա երրորդ բազինը՝ Աստղիկ դիցուհու մեհյանը, որ կոչվում էր «սենեակ Վահագնի»⁵⁶: Ըստ Ս. Հարությունյանի վերջինս կարող է համարվել Աստղիկի և Վահագնի ամուսնական առաջաստը, ինչը վաստակավոր գիտնականը հիմնավորում է նաև այն հանգամանքով, որ հին հայերենում «սենեակ» նշանակել է նաև «հարս կամ հարձ», և «սենեակ Վահագնին» կարելի է հասկանալ նաև Վահագնի հարս, տարփածու իմաստով⁵⁷:

Աշտիշատի տաճարական համալիրը չնայած իր հեռավորությանը, կարծես յուրատեսակ «հայկական Մուծածիրը» հիշեցներ: Աշտիշատը ևս, ինչպես Մուծածիրի Խալդի աստծո տաճարը, հարուստ էր թագավորների կողմից ձոնված ոսկով, արծաթով և բազում այլ թանկարժեք նվերներով⁵⁸: Այստեղ էին իրականացվում ամենամյա Նավասարդյան և Վարդավառի տոնախմբությունները⁵⁹: Ըստ գրավոր սկզբնաղբյուրների՝ Աշտիշատը գտնվում էր Օձ և Վիշապ քաղաքների

⁵⁵ Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Եր. 1933: Г. Вардумян, Дохристианские культы у армян, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ.18, Եր. 1972, с. 109-110:

⁵⁶ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Եր.1983, էջ 452-453:

⁵⁷ Ս., Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ 2000, էջ 105:

Մինչ ուշ ասորական ժամանակները Նինվեի Իշթարի տաճարի մի հաղվածը հայտնի էր որպես bit nathi «ննջասենյակ» բառացի «ճոխ մահճակալի տուն»: G. Beckman, Istar of Nineveh Reconsidered, Journal of Cuneiform Studies, 1998, 50, Nathin հիշվում է Խեբատի, Իշթարի, Շավուշկայի առնչությամբ: Այս հանգամանքը կարող է համադրվել <<սենեակ Վահագնի>> հետ Ա. Պետրոսյան, Հայկական դիցարանի հնագույն ակունքները, ՊԲՀ, 2004, 2. էջ 218:

⁵⁸ Ագաթանգեղոս ..., էջ 452-453.

⁵⁹ Գ., Սրվանձտյան, Երկեր, հ. I, Եր. 1978, էջ 68-69:

մոտակայքում⁶⁰ և նրա քրմապետներից մեկն էր Արձանը⁶¹: Այս առումով հետաքրքիր է, որ Մուծածիրն էլ համարվում էր «օձի բացված երախի պես» բնակավայր⁶², իսկ Մուծածիրի քրմապետ-արքա Ուրգանայի անունը (որն ավելի շուտ կարծես թե տիտղոս էր) հիշեցնում է Աշտիշատի քրմապետ Արձանի անվանումը⁶³: Աշտիշատի մոտ էր գտնվում Կուարս ավանը, որի անունը, ըստ Հովհան Մամիկոնյանի, ծագում էր Գիսանե և Դեմետրե եղբայրների որդիներից մեկի՝ Կուառի անունից⁶⁴:

Հարց է ծագում՝ ինչպիսի՞ ծիսական արարողություններ էին տեղի ունենում Աշտիշատում Նավասարդյան և Վարդավառյան տոնախմությունների ժամանակ և այս ամենը չէ՞ր կարող արդյոք լինել ուրարտա-հայկական որոշակի հոգևոր ընկալումների փոխազդեցությունների կամ փոխառնչությունների հետևանք:

Որպես վերջաբան: Ամփոփելով՝ հարկ ենք համարում նշել, որ հոգվածում տեղ գտած որոշ ենթադրություններ դեռևս ունեն «աշխատանքային» և նախնական բնույթ: Վերակազմությունների և ենթադրությունների միջոցով առայժմ դժվար է միանշանակ խոսել Ուրարտուում «Սրբազան ամուսնության», ինչպես նաև «սրբազան հետերիզմի» ինստիտուտների գոյության մասին: Սակայն, կարծում ենք, որ իր ժամանակի հզորագույն պետություններից մեկը՝ Ուրարտուն (Վանի թագավորությունը), լինելով տարածաշրջանի պատմամշակութային, սոցիալ-տնտեսական և տոնա-ծիսական բազմաբնույթ գործընթացների ու փոխառնչությունների կիզակետում, դժվար թե ինչ-որ կերպ յուրացրած ու զարգացրած չլիներ «սրբազան ամուսնության» և «սրբազան հետերիզմի» ինստիտուտներին առնչվող հոգևոր և գործնական միջոցառումների իր ուրույն համակարգը: Ամեն դեպքում, վերը շարադրված փաստերը, թույլ են տալիս իրոք ենթադրել այդ մասին:

⁶⁰ Գ., Սրվանձոյանց, նշվ. աշխ., էջ 124:

⁶¹ Հ. Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Եր. 1989, էջ 36-39:

⁶² D., Collon, Urzana of Musasir's Seal, "Anatolian Iron Ages", Ankara, 1994, p. 37.

⁶³ Հղվում է ըստ Ե. Գրեկյանի, Երկու Ուրգանա՞, «Մերձավոր Արևելք» ժողովածու, Եր. 2005, էջ 8:

⁶⁴ Հ. Մամիկոնյան ..., էջ 47: Ըստ Ն. Հարությունյանի՝ Կուար ավանը անունը կապված է ուրարտական Կուեռա դիցանվան հետ (Ն. Հարությունյան, Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը, ՊԲՀ, --- (2-3), էջ 90, ծան. 3.

HALDI AND BAGBARTU: ON THE ISSUE OF THE EXISTENCE OF THE “SACRED MARRIAGE” RITE IN URARTU

A number of primary sources attest to the existence of the Sacred Marriage Rite in Urartu. These are cuneiform inscriptions containing ritual texts (Mher's Door, Odzasar), depictions of wedding parties imaged on pieces of Urartian fine arts (female belts in particular), the account and description of certain objects looted from Musasir by Sargon II and other data.

Nevertheless, it is as yet rather hard to unambiguously speak of any existence of institutions of Sacred Marriage and Sacred Heretizm in Urartu based on the reconstructions and suggestions. Still, Urartu (Kingdom of Van) as one of the most powerful states of the Ancient Near East of its times was in the thick of various historical and cultural, social and economical, festive and ritual processes and interrelations taking place in the region. So it is highly probable that it would somehow adopt and form its own system of spiritual and practical activities connected to the institutions of Sacred Marriage and Sacred Heretizm. At any rate, the facts produced in the current paper enable us to assume the existence of this phenomenon in Urartu.




Քարտեզ 1




նկ. 1




նկ. 2



նկ. 3



նկ. 4



Նկ. 5

A DEFENSIVE SYSTEM OF THE IX-VIII CENTURIES BC: THE RING OF FORTRESSES AROUND VAN KALESİ (TUŞPA)

The Van Plain constituted the ideal location for the capital of a kingdom that had to resist the pressure of the Neo-Assyrian Empire². Italy

A variety of factors made the Van Plain a secure and privileged ecological niche: the general isolation of the region, the protection provided by the surrounding mountain ranges that facilitated control of all access to the plain by means of strategically-placed outposts, together with the existence of the spacious plain itself, which was favoured by the presence of significant water resources that were greatly increased by the numerous engineering works carried out throughout the kingdom's lifetime³. With approximately 13,000 ha of arable land at an altitude of 1,650 metres above sea level, the Van Plain was not the largest in the kingdom; indeed, the Yerevan Plain covered 160,000 ha.

GEOGRAPHICAL FEATURES OF THE VAN PLAIN

Large mountain ranges guaranteed the protection of the area: to the south stands Artos Dağ (3475 m); to the south-east lie the Vaviran Dağları, which include Susis Dağ (3150 m); the whole eastern side is bordered by the Erek Dağları and dominated by Erek Dağ (3250 m), which was symbolically the most important mountain in the whole kingdom of Urartu. The northern side of the plain was more exposed, due to the absence of significant high ground. In the middle of the plain stand the isolated and imposing reliefs of Van Castle Rock and Zımzım Dağ. These mountains contain various geological resources, such as marble and limestone quarries, some of which were certainly exploited in ancient times⁴.

The main water resources consist of a multitude of springs arranged in an arc in the eastern foothills. The water courses, which are mostly seasonal, descend from the same mountains and are fed by melting snow and high altitude springs. The principal rivers are the Kurubaş Deresi (Şamiram Arkı) and Engusner Çayı (Akköprü Deresi - Göl Deresi - Alaini Deresi), which rise on Erek Dağ and cross the Van Plain from east to west and flow into Lake Van. The water of the lake, which is one of the world's largest endorheic lakes (i.e. without outlet), is not suitable for agricultural use due to its high degree of salinity⁵.

CONTROL OF ACCESS TO THE VAN PLAIN.

¹ I wish to dedicate this article to the memory of B.B. Piotrovskij, who made a huge contribution to Urartian archaeology. This paper is based in part on my unpublished PhD dissertation (Dan 2012).

² Lynch 1901: 59; Zimansky 1985: 18.

³ These are attested epigraphically in this area from the time of Menua (Semiramis Canal - CTU 5-12 A, 5-15 A) to the reign of Rusa III (Keşiş Göl CTU A 14-1, A 14-2).

⁴ Maden Tektik ve Arama Genel Müdürlüğü, map of Van.

⁵ Huguët et al. 2011: 1289.

Several authors have drawn attention to the presence of a number of fortresses that protected Tušpa, the capital of the Kingdom of Urartu: Lehmann-Haupt in 1926⁶, Burney in 1957, Piotrovskij in 1966, and more recently Salvini in 1995⁷. Originally, it was thought that these protective fortresses were designed and built by King Menua. In this regard, Piotrovskij wrote: (...) In addition to the fortification of the castle of the capital were also built fortresses to protect access to Tušpa. The inscriptions talk about construction of a fortress on the north-eastern banks of the Van (UKN, nos. 65-67). A mighty cyclopean building was erected on a hill, near the village of Anzav (10 km north-east of Van), and from there come two inscriptions of Menua (UKN, nos. 71 and 88) concerning construction work⁸.

The scholar was certainly referring to the fortresses of Yukarı Anzaf and Kevenli (the latter was known at the time as Šušants), the construction of which is in fact attributable to Menua. In 1957, in the report of one of his pioneering regional surveys around Lake Van, Charles Burney rightly noted that certain forts situated around Van Kalesi were built with the specific intent of defending the Urartian capital, and he added the sites of Aşağı Anzaf and Zivistan to this ring of fortifications⁹.

These original insights have been confirmed and strengthened by the remarkable progress of epigraphic and archaeological knowledge of this area of Urarṭu. It is now possible to affirm the existence of not just a few outposts protecting the capital, but of a veritable complex of fortresses resulting from a unitary project designed to systematically control all possible access to the Van Plain (fig. 1).

This fortification network was the fulfilment of an ambitious and long-lasting defensive system that led to a profound and widespread transformation of the territory. The landscape was also modified by the creation of numerous hydraulic works, which facilitated the agricultural exploitation of the area, and thus the autonomous subsistence of these centres. It was Išpuini who initiated the plan to block all possible access to the centre of the region and, at the same time, to intensively exploit the agricultural possibilities offered by this volcanic terrain. Išpuini began the construction of the defensive complex with the erection of the fortresses of Kalecik (CTU A 2-1), Aşağı Anzaf (CTU A 2-6A-C), and Zivistan (CTU A 2-2)¹⁰. During Menua's reign, these fortresses were followed immediately by the construction of Yukarı Anzaf (CTU A 5-42A-C), Kavuncu (CTU 5-54 A), and Kevenli (CTU A 5-45).

Two other fortresses, Kiz Kalesi and Kıratlı, must have been part of this system, but no inscriptions have been found there. Altogether, there were eight fortresses around the capital, arrayed approximately 10 to 13 km to the north. The exception is Kalecik, which was sited only about 5 km to the north, due to the geographical layout of the territory. The fortresses in the Van

⁶ Lehmann-Haupt 1926: 38.

⁷ Salvini 1995: 133-134.

⁸ Piotrovskij 1966: 87-88.

⁹ Burney 1957: 40.

¹⁰ Recently, based on an analysis of the *ductus*, it was suggested that the epigraphs from the Zivistan fortress, built by Išpuini, were actually made by Menua but dedicated in the name of his father. The fortress lacked inscriptions, perhaps because it might have been incomplete at the time of Išpuini's death (Salvini 2012: 321-322).

Plain indicate the presence of a system designed to control the plain, and may be ranked according to the length of their perimeter fortification walls. Three of these are located in the plain itself (fig. 2, 3): Van Kalesi, a site of the first rank, Yukarı Anzaf, the largest fort of the second rank in Eastern Anatolia, and five fortresses of the fourth rank. Unfortunately, no data are available about the fortified perimeters of Kıratlı, Kız Kalesi and Kavuncu, since the walls of these centres have been destroyed due to the reuse of the building blocks for the construction of modern houses¹¹.

During the seventh century, three separate fortresses that did not belong to this system were built in the Van Plain. These include Toprakkale, classified in the fourth rank of Urartian fortifications, and also the two small outposts known as Keklik Bulağı I and II, dated only on the basis of archaeological data and attributed – despite the absence of reliable data – to the fourth rank. These last two fortresses were probably designed exclusively for the defence of Toprakkale.

All the towns in which inscriptions were found were also religious centres, and each contained a *susi* temple, with the exception Kalecik and Aşağı Anzaf that are small. Due to the presence of natural obstacles, there were not direct lines of sight between these defensive fortifications, but they were all deliberately located so as to permit visual contact with the capital Tušpa. The line of sight to Tušpa meant that it could receive immediate signals (probably using fire) indicating danger or the arrival of merchant caravans or delegations, regardless of the season, and in weather conditions that might have impeded messengers on horseback.

All potential access routes were systematically blocked. The two fortresses of Anzaf defended the most important and potentially most dangerous of these, which ran from Van, around the southern shore of Lake Erçek, through the Küçükçaylak Deresi valley, and up onto the Plain of Khoy in modern Iran. From that point, roads forked toward Iran and Armenia. In the opposite direction, of course, this route led to the centre of the kingdom and thus needed to be particularly well defended¹².

Interestingly, Interestingly, in the Van Plain there were two centres of the first and second rank. Yukarı Anzaf certainly fulfilled important military and administrative functions that sustained and supplemented the economic management of the region, in conjunction with the capital itself, further confirming the importance and centrality of the Van Plain in the Urartian settlement system.

¹¹ Biscione and Dan 2014: 121-136.

¹² The importance of the road that led from Van to Khoy is demonstrated by the five impressive Urartian fortresses associated with it. Four of these fortresses are not dated with certainty, but they may be from the reign of Menua. These sites are Keçanis, Asagi Mollahasan, Küçük Tepe, Saray and Qal'eh Aladag, the latter of which is dated to the transition between the ninth and eighth centuries BC on the basis of its architecture (Kleiss - Kroll 1979: 202-203).

Urartian inscriptions and archaeological sites in the Van Plain

1 Van Kalesi (Ṭuṣpa)	30 Savacık
2 Van Kalesi Höyüğü	31 Erek Dağ
3 Abdurrahmangazi	32 Doni Göleti/Çayı
4 Altıntepe	33 Yakub Göleti
5 Kalecik	34 Yoncatepe
6 Kalecik Nekropolü	35 Harabe Barajı
7 Meher Kapısı	36 Bakraçlı Barajı
8 Toprak kale (Rusaḫinili Qilbanikai)	37 Yedikilise
9 Sihke	38 Vadi Göleti
10 Sihke Bostancı Göleti	39 Aşağı Kırmızı Tepe Kalesi
11 Keklik Bulağı Kalesi I	40 Yukarı Kırmızı Tepe Kalesi
12 Keklik Bulağı Kalesi II	41 Kırmızı Tepe Göleti
13 Aşağı Anzaf Kalesi	42 Kadim Barajı
14 Yukarı Anzaf Kalesi	43 Kevenli Barajı
15 Yukarı Anzaf Barajı	44 Yukarı Kevenli
16 Kıratlı	45 Aşağı Kevenli
17 Faruk Benti	46 Kilisegölu Barajı
18 Eski Gövelek Barajı	47 Aşağı Ömer Gölü Barajı
19 Gövelek	48 Yukarı Ömer Gölü Barajı
20 Vosgepag	49 Kurubaş Göleti
21 Köşebaşı Barajı	50 Yukarı Zivistan
22 Değirmenköy	51 Azab Göleti
23 Kohbants	52 Aşağı Zivistan
24 Kavuncu	53 Zivistan Küçük Barajı
25 Engusner Çayı	54 Hazine Piri Kapısı
26 Keşişgöl Kalesi	55 Zivistan Büyük Barajı
27 Keşiş Göl	56 Kız Kalesi
28 Kaisaran	57 Harebedar
29 Keşiş Göl stele	58 Katepants

**ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ Մ.Թ.Ա. IX-VII ԴԱՐԵՐՈՒՄ.
ԱՄՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԶԵՎ ԴԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԻ
(ՏՈՒՇՊԱՅԻ) ՇՈՒՐՋԲՈԼՈՐԸ**

Այս հոդվածի նպատակը ժամանակակից Թուրքիայի արևելյան շրջաններում գտնվող Վանի տարածաշրջանի համակողմանի ուսումնասիրությունն է, որը մ.թ.ա. IX – VII դդ. Ուրարտական պետության կենտրոնական հատվածն է հանդիսացել և ունեցել կարևոր ռազմա-քաղաքական նշանակություն: Հոդվածում համակողմանի քննարկվում և վերլուծության է ենթարկվում ամրոցների այն բարդ և փոխկապակցված համակարգը, որը ստեղծվել էր Ուրարտուի առաջին արքաներ Իշպուինիի և նրա որդի Մենուայի օրոք և միտված էր մի կողմից թափ տալու և ակտիվացնելու այդ շրջանի երկրագործական աշխատանքների ծավալները, մյուս կողմից՝ ամրապնդելու ու պաշտպանելու պետության մայրաքաղաք Տուշպան: Ուշագրավ է, որ շղթայաձև դասավորված այդ պաշտպանական համակարգը ներառում էր շրջանաձև տեղադրված մեծ ամրոցներ ու փոքր ռազմական հենակետեր: Պաշտպանական հիմնական դերից զատ, որոշ մեծ ամրոցների ներսում կառուցված էին նաև տաճարներ, որոնք նաև երկրի կրոնաժիսական խնդիրներին էին ծառայում: Այս ամենը վկայում է, որ Վանի բերդամրոցը և հարակից տարածքներն առաջնային դեր ունեին երկրի սոցիալ-մշակութային և ռազմա-քաղաքական գործընթացներում:

LITERATURE

- Biscione R., Dan R.**, 2014. *Ranking and Distribution of the Urartian Fortifications in Turkey*, in Özfirat, A. (ed.) *Veli Sevin'e Armağan. Arkeolojiyle Geçen Bir Yaşam İçin Yazılar - SCRIPTA - Essays in Honour of Veli Sevin A Life Immersed in Archaeology*, İstanbul, 121-136.
- Burney C.A.**, 1957. *Urartian Fortresses and Towns in the Van Region*, in *Anatolian Studies* 7, 38-53.
- CTU I-III: Salvini 2008.
- CTU IV: Salvini 2012.
- Dan R.**, 2012. *Tra l'Eufrate e l'Arasse. Ricostruzione del paesaggio insediativo del Regno di Urartu/Biainili*, unpublished PhD dissertation, Roma.
- Huguet C., Fietz S., Stockhecke M., Sturm M., Anselmetti F.S., Rosell-Melé A.**, 2011. *Biomarker seasonality study in Lake Van, Turkey*, *OG* 42 (11), 1289-1298.
- Kleiss W., Kroll S.**, 1979. *Vermessene urartäische Plätze in Iran (West-Azerbaidjan) und Neufunde (Stand der Forschung 1978)*, A. *Architektur*, B. *Die Oberflächenfunde*, in *AMI*, 12, 183-243.
- Lehmann - Haupt, C.F.**, 1926. *Armenien einst und jetzt II/1*, Berlin und Leipzig.
- Lynch H.F.B.**, 1901. *Armenia. Travels and Studies vol. 2. The Turkish Provinces*, New York.
- Piotrovskij B.B.**, 1966. *Il regno di Van (Urartu)*, Roma (translation of Vanskoe Carstvo, Moskva 1959, by M. Salvini).
- Salvini M.**, 1995. *Geschichte und Kultur der Urartäer*, Darmstadt.
- Salvini M.**, 2008. *Corpus dei Testi Urartei, Vol. I-III. Le iscrizioni su pietra e roccia*, DA, VIII/I-III, Roma.
- Salvini M.**, 2012. *Corpus dei Testi Urartei, Vol. IV. Iscrizioni su bronzi, argilla e altri supporti. Nuove iscrizioni su pietra. Paleografia generale*, DA, VIII/IV, Roma.
- Zimansky P.E.**, 1985. *Ecology and Empire: The Structure of the Urartian State*, Chicago.




Fig. 1. The ring of fortifications around the capital. Distances (yellow lines) are between Van Kalesi and fortresses; main roads are shown in red.




Fig. 2. Observed distribution of Urartian fortifications in the Van area (thick line with squares) and theoretical log-normal distribution (thin line with triangles) (after Biscione and Dan 2014: fig. 5).



Fig. 3. The system of fortifications in the Van area. Stars indicate rank 1, concentric circles rank 2, squares rank 3 and triangles rank 5 (after Biscione and Dan 2014: fig. 4).




Fig. 4. The map of the Urartian inscriptions and archaeological sites in the Van Plain

(after R. Dan 2012, fig. IV.1.1).

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ Ք.Ա. II-I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՎԱՀԱՆՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված զենքերն ու ռազմական գործին առնչվող նյութերը և դրանց համադրությունը Հին Մերձավոր Արևելքի հանաժամանակյա զուգահեռների հետ մեզ հնարավորություն են ընձեռում եզրակացնել, որ հարձակողական և պաշտպանողական զենքերի ու հանդերձանքի հիմնական տեսակները ձևավորվել են վաղնջական ժամանակներում և զարգացում ապրել՝ կրելով որոշակի փոփոխություններ և փոխազդեցություններ:

Ք. ա. II-I հազ. հնագիտական հուշարձաններից հայտնաբերված բազմաթիվ զենքերի (թրեր, դաշույններ, սակրեր, նիզակների ծայրեր, նետասլաքներ) կողքին շատ հազվադեպ են հանդիպում ռազմիկի պաշտպանական հանդերձանքի մասեր՝ սաղավարտներ, լանջապանակներ, գոտիներ, վահաններ և այլն:

Ք. ա. II-I հազ. ռազմիկի սպառազինությունը և ընդհանրապես ողջ հանդերձանքն առավել ամբողջական է ներկայացված համաժամանակյա դեկորատիվ արվեստի նմուշների (գոտիներ, գավաթներ, արձանիկներ, զարդաթիթեղներ և այլն) վրա: Այս առումով վերջիններիս ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ընդհանուր առմամբ վերականգնել միջինբրոնզեդարյան - երկաթեդարյան պարբերաշրջանների ռազմիկների ինչպես արտաքին տեսքը, այնպես էլ առանձնացնել կիրառված զենքի տեսակներն ու որոշակի ժամանակային սահմաններում դրանց զարգացման ու ձևափոխման առանձնահատկությունները:

Ք. ա. III-II հազ. հնագիտական համալիրներում վահանների բացակայությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ դրանք հիմնականում պատրաստվել են փայտից կամ հյուսվել ճյուղերից, հաճախ պատվել են կաշվով կամ մորթով, ինչի հետևանքով էլ մեծագույն մասը ժամանակի ընթացքում հուշարձանների հնագիտական շերտերում աստիճանաբար քայքայվել են ու չեն հասել մեզ:

Հայկական լեռնաշխարհում միջին բրոնզի շրջափուլում կիրառված զինատեսակների, այդ թվում վահանների մասին մեզ բավական արժեքավոր և հետաքրքիր նյութ է տալիս Քարաշամբ գյուղի մերձակայքից հայտնաբերված և Ք. ա. XXII-XXI դդ. վերաբերող իշխանական դամբարանից հայտնաբերված գավաթը:

Վերջինիս վրա դրվագված տեսարաններին և դրանց հիման վրա վերականգնվող ընդհանուր պյուժեին անդրադարձել են մի շարք հետազոտողներ ¹: Սյուժեի մեզ հետաքրքրող հատվածները դրվագված են գավաթի 2-րդ և 3-րդ հորիզոնական գոտիներում (նկ. 1): Երեք նիզակակիրներից կազմված ջոկատը մոտալուտ մարտից առաջ քնար և փողային գործիքներ նվագող եռյակի երաժշտության տակ, քրմի ուղեկցությամբ շտապում է ծիսական խնջույքի: Դրան հաջորդող տեսարանում արդեն հանդիսության պահն է: Բարձր գահավորակին բազմած առաջնորդ-քուրմը առաջիկա մարտի հաջողության համար պատրաստվում է դատարկել խմիչքի թասը, այնուհետև երեք քրմերի կողմից պիտի կատարվեն որոշակի բնույթի ծիսական արարողություններ, որից հետո չորրորդ քուրմը լուսնի լույսի տակ պիտի գոհաբերի եղջերու: Հաջորդ հատվածում արդեն կռվի պահն է նիզակակիրների և սուսերակիրների միջև, ընդ որում, զինվորների ձեռքին երևում են երկու տիպի վահաններ՝ էլիպսաձև կամ օվալաձև և ուղղանկյունաձև՝ եզրերը քիչ ներձկված: Օվալաձև կամ էլիպսաձև վահանների պատկերների մանրագնին դիտարկումը թույլ է տալիս ենթադրել, որ դրանք հիմնականում հյուսվել են ճյուղերից: Ինչ վերաբերում է ուղղանկյունաձև վահաններին, ապա դրանց եզրերը նախշագարդ են: Հավանաբար սրանք նույնպես պատրաստվել են փայտից կամ հյուսվել ճյուղերից, պատվել են կաշվով կամ մորթով և նախշագարդվել: Գավաթի հաջորդ գոտում ներկայացված են պարտված ռազմիկների գլխատման, նրանց երկու առաջնորդների մահապատժի և գերագույն քրմի հաղթահանդեսի տեսարանները: Վերջին հատվածում գահավորակին բազմած գերագույն քուրմ (նույն ինքը՝ հաղթած ցեղախմբի առաջնորդը) բռնել է իշխանության խորհրդանիշ հանդիսացող սակրը, իսկ նրա առջև կիտված են սպանված հակառակորդների գլուխներն ու ռազմավարը՝ վահաններ, նիզակներ, սրներ:

Հայկական լեռնաշխարհում Ք. ա. II-I հազ. կիրառված վահանների մասին բավական հետաքրքիր տեղեկություն է տալիս նաև Ստեփանավանի տարածքից հայտնաբերված բրոնզե գոտին (նկ. 2): Այն թվագրվում է Ք. ա. II հազարամյակի վերջով ² : Գոտու աջ հատվածում ցեղապետն է, ով կրում է կիսագլանաձև, վերին մասը աղեղնաձև մեծ վահան, նրան հետևում են 7 հետևակ զինվորներ, որոնք աջ ձեռքով դեպի վեր պարզած նիզակներ ունեն, իսկ ձախով՝ նմանատիպ վահաններ: Այս զինվորներին զուգահեռ պատկերված է հեծյալ, ով ձախ ձեռքով բռնել է կլոր, ոչ

¹ Փիլիպոսյան Ա. Քարաշամբի գավաթի տեսարանները՝ որպես հնագույն առասպելի խորհրդանշանային դրսևորումներ: - «Գիտելիք և խարհրդանիշ, Հավատալիք և սովորույթ» միջազգային II գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան 2007, (գրականության և ծանոթությունների բաժին):

² Есаян С. А. Доспех Древней Армении. Ереван 1986, с. 10.

մեծ վահան, իսկ աջով իր ձիու և դրա կողքից ընթացող մեկ այլ նժույգի սանձերը³ : Նմանատիպ վահան ունի նաև Նոյեմբերյանի տարածքից հայտնաբերված և Ք. ա. I հազ. սկզբով թվագրվող գոտու վրա պատկերված ռազմիկը: Այդ վահանի մեջ մխրճված են նետեր: Ռազմիկի առջև կանգնած նետաձիգը ևս նմանատիպ վահան է կրում⁴ :

Ստեփանավանի գոտու վրա դրվագված վահանն իր զուգահեռներն ունի Եգիպտոսի հնագիտական նյութերում: Սկսած Ք. ա. III հազ., Եգիպտոսում կիրառված վահաններն ունեին ուղղակյունաձև, կամ փոքր-ինչ լայնացող ստորին և կլորացող կամ սրացող (աղեղնաձև) վերին հատվածներ: Դրանք պատվում էին կաշվով կամ մորթով և նկարագարովում տարբեր նախշերով և երկրաչափական պատկերներով: Նմանատիպ վահաններ հայտի են նաև Ասորեստանի տիրակալ Աշշուրբանապալի (Ք. ա. 668-627 թթ) պալատի հարթաքանդակներից: Ստեփանավանից հայտնաբերված գոտու վրա դրվագված մարտիկներն իրենց վահանները բռնել են ձեռքի ափով: Այդպիսին է նաև եգիպտական և ասորեստանյան վահանների կիրառման եղանակը, ինչը նույնպես գալիս է հաստատելու, որ դրանք հյուսքեն էին, թեթև և հարմար ձեռքի ափով բռնելու համար:

Ք. ա. I հազ. սկզբով են թվագրվում Պառավաքարից հայտնաբերված զինվոր-աստվածների չորս արձանիկները (նկ. 3): Ֆիգուրները ներկայացնում են լայն կրծքավանդակով և պրկված ֆալլոսով անձնավորությունների: Այդ արձանիկներն ամրացված են պատվանդանի կամ սուր վերջույթով ելուստի վրա: Երկու զինվորների աջ ձեռքին նիզակներ են, զինվորներից մեկը ձախ ձեռքին կրում է ստորին հատվածում լայնացող, իսկ վերին մասում աղեղնաձև վահան: Նման վահան պետք է ունենա նաև երկրորդ նիզակակիրը, որի վահանը բացակայում է, թեև ձախ ձեռքին կա անցք՝ հավանաբար վահանն ամրացնելու համար: Մյուս երկու ռազմիկները զինված են ոչ մեծ կլոր վահաններով և յուրաքանչյուրը բռնել է սրացող վերջույթով ինչ որ կեռ իր կամ եղջրագավաթ⁵:

Ծանոթությունն ուրարտական զինվորի արտաքին տեսքի և կիրառած զինատեսակների հետ սկսվում է հանրահայտ Բալավաթյան դարպասների վրա դրվագված տեսարաններից, որոնց մի մասը ներկայացնում են Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի դեպի Ուրարտու կատարած արշավանքից հատվածներ (նկ. 4): Ուրարտական զինվորները կարճ հագուստով են, լայն գոտիով,

³ Եսայան Ս., Մնացականյան Հ., Լճաշենից և Ստեփանավանից հայտնաբերված բրոնզե գոտիներ, ռուս. - ՊԲՀ, 1977, №3, էջ 281:

⁴ Есаян С. А., նշվ. աշխ., էջ 10

⁵ Есаян С., Мнацаканян А. Находки новых бронзовых статуеток в Армении. - СА, 1970, # 2, 157-160.

կարճ նիզակով և աղեղով: Նիզակակիր զինվորները կրում են կլոր փոքր վահաններ: Այդ վահաններն ունեն ուռուցիկ միջնամաս և նեղ եզրեր: Վահանակիր նման զինվորների և հեծյալների դրվագված պատկերները հանդիպում են նաև ուրարտական սաղավարտների, կապարճների ու գոտիների վրա (նկ. 5, 6):

Դատելով գրավոր սկզբնաղբյուրներից, տարբեր հարթաքանդակներից և Ք. ա. I հազ. հնագիտական հուշարձանների գտածոներից Ուրարտական պետության մեջ, ըստ ամենայնի, կիրառվել են հիմնականում կլոր՝ 0,5 մ-1,0 մ տրամագիծ ունեցող, բրոնզե վահաններ, որոնք օժտված էին երկու կամ երեք բռնակներով: Դրանցից առաջինը կաշվե թոկից էր և անցկացվում էր արմունկին: Ռազմերթի ժամանակ այդ թոկի օգնությամբ վահանը կախում էին ուսից: Նման վահանների մյուս բռնակները բրոնզից էին: Դրանք զինվորները բռնում էին ձեռքի ավել: Այս եղանակը հնարավորություն էր տալիս ավելի հեշտությամբ կրել զինվորի մամնի ողջ վերին հատվածը ծածկող մեծ և ծանր վահանը:

Ք. ա. 714թ. արշավանքի ընթացքում Ասորեստանի թագավոր Սարգոնը, Մուսասիր ուրարտական կրոնական կենտրոնից, որպես ավար տարել է 25212 բրոնզե ծանր և թեթև վահաններ, որոնք, հավանաբար, անհրաժեշտության դեպքում կիրառվել են ուրարտական բանակի կողմից մարտական գործողությունների ժամանակ ⁶:

Մարտական մեկ այլ տիպի վահան պատրաստվում էր փայտից կամ հյուսվում ճյուղերից ու պատվում կաշվով կամ մորթով: Սրանց կենտրոնական հատվածում ամրացվում էին մինչև 15 սմ բարձրությամբ և հիմնային հատվածի մինչև 12-15 սմ տրամագծով կոնաձև բրոնզե ումբոններ: Այսպիսի վահաններ տարածված էին նաև Առաջավոր Ասիայում, ուր դրանցով զարդարում էին մարտակառքերը:

Տուշպա - Վանից արևելք գտնվող և Ք. ա. VIII-VII դդ. վերաբերող ուրարտական Անձավ (թուրքերեն՝ Անզաֆ) ամրոցի պեղումներից հայտնաբերված դեկորատիվ-նվիրատվական, հավանաբար նաև ծիսական վահանի մնացորդների վրա երևում են առասպելական կենդանիների վրա կանգնած աստավծություններ, որոնք իրենց ձեռքերին պահում են վերը նշված տիպի վահաններ (նկ. 7)⁷: Դրանցից յուրաքանչյուրն օժտված է երեքական ումբոններով:

Հին Մերձավոր Արևելքի շատ ժողովուրդների մոտ վահանները կիրառականից զատ ունեցել են նաև ծիսական նշանակություն և օգտագործվել են պաշտամունքային արարողությունների ժամանակ: Այսպես. Խեթական պետության տաճարների ներսում կախվում էին պաշտամունքային 8-աձև վահաններ, որոնք պատվում էին

⁶ АВИИУ, 49

⁷ Belli O. The Anzaf fortresses and the gods of Urartu. Istanbul, 1999.

մորթիներով: Հին հույների մոտ տարածված էր «Վահանի հետ կամ վահանի վրա» արտահայտությունը, որը նշանակում էր կամ կենդանի վերադարձ կամ պատվավոր մահ զենքը ձեռքին:

Ծիսական վահաններ հայտնի են Հայկական լեռնաշխարհից: Համաձայն Սարգոն II-ի (Ք. ա. 722-705 թթ.) տարեգրության, Մուսասիրից նա ձեռք է բերել 393500 առարկա, այդ թվում 6 ոսկե վահաններ, որոնք կախված են եղել Խալդի աստծո տաճարի մուտքի երկու կողմերում և ունեցել են աչք կուրացնող փայլ: Դրանցից յուրաքանչյուրի կենտրոնական մասում ամրացված են եղել բաց երախով շան գլուխների զանգվածեղ քանդակներ: Սարգոն II-ի հաղորդման համաձայն նա տարել է նաև 12 ծանր արծաթե վահաններ, որոնց ումբոնները պատրաստված էին հրեշների, առյուծների և վայրի ցուլերի գլուխների տեսքով⁸:

Դեկորատիվ կլոր վահանների առանձին տիպ էին հանդիսանում կոնաձև կենտրոնական մասով և իրանի ողջ եզրագոտով դուրս ծավլող վերջույթներով վահանները: Այդպիսի վահանների կոնաձև կենտրոնական հատվածների վրա հանդիպում են առյուծի, ցուլի և վարդակի դրվագումներ, իսկ եզրի հարթ տարածության վրա մեկ կամ երկու տող սեպագիր նվիրատվական տեքստեր՝ թագավորի անունից ուղղված հիմնականում Խալդի աստծուն կամ ուրարտական որևէ քաղաքին (օրինակ՝ Էրեբունիին)⁹, (նկ. 8): Դրանց տրամագիծը 0.7-1.0 մ է, քաշը՝ մինչև 30 կգ:

Այսպիսով ի մի բերելով Հայկական լեռնաշխարհի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված համապատասխան ողջ նյութը, կարող ենք արձանագրել, որ վահաններն այստեղ հանդես են եկել Ք. ա. III հազ. վերջերից և որպես պաշտպանական զենք ու որոշ ծիսական արարողությունների անհրաժեշտ ատրիբուտ հաջորդաբար կիրառվել Ք. ա. III-I հազ. սոցիալ-քաղաքական և պատմամշակութային հասարակություններում:

⁸ АВИИУ, 49

⁹ Пиотровский Б. Кармир блур I. Ереван, 1950, с. 62-63; его же: Кармир блур III. Ереван, 1955, с. 26-30: его же: Ванское царство. Москва, 1959, с. 166. Арутюнян Н. В. Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

ЩИТЫ АРМЯНСКОГО НАГОРЬЯ II-I ТЫС. ДО Н. Э.


(Резюме)

В статье автор рассматривает типы щитов, которые использовались на территории Армянского нагорья во II-I тыс. до н.э. Их можно разделить на 3 типа: боевые, декоративные и ритуальные. Во II-I тыс. щиты изготавливались из дерева или прутьев, покрывались кожей и, в редких случаях, имели металлические бляхи. В Урарту было высоко развито оружейное дело: армия была вооружена, в основном, металлическими щитами. В Урарту было широко распространено использование декоративных щитов. Известны экземпляры подобных щитов из Кармир Блура, Топрах Кале и других памятников урартской культуры. Характерной их особенностью является чеканка в виде львов, быков, розеток. На них сохранились клинописные дарственные надписи. Ритуальные щиты, в основном, изготавливались из бронзы, иногда покрывались золотом и серебром и имели умбоны в виде голов львов, диких быков, чудовищ и собак. Их вешали по обе стороны от входа в храмы.


After all, a range of other questions arises concerning the Nikkal hymn. There were and even are strong principles of oral tradition prescribing transmission of music (especially ritual or generally spiritual music) by oral means. Development of professional musician institutes makes this principle even stricter. And every historian, clearly also every ethnologist or folklorist knows – if there is need for writing, for fixing tradition, it means that tradition starts dying. What may be the reason and purpose for implementing notation to fix a holy hymn? Why do we believe it was performed with instrumental accompaniment, doubling the melody? Why the principles of notation should rest on the base of the strings of a lyre: just because Pythagoreans thought so? Or

is it because European notation of the 15th century is based on this principle? Why instrumental music, something of underlined secondary significance in ritual practice, is fixed at all? Decipherers are not concerned about this, because they have never dealt with really old music. But for ethnomusicologists these questions are of great importance because as we discussed above, there is a certain period of history for any nation when musical instruments start to play significant role in the musical culture, and spiritual music does without instruments, even avoids or refuses the usage of instruments in the ritual practice even while tradition of instrumental music develops and flourishes. It is necessary to understand what the motivation for writing was and how the Hurrians could come to the idea of music notation – another item for co-operation between archaeologists and ethnomusicologists.

To illustrate how interesting and prolific investigation in folk music can be, I want to present a slight sketch of how a very popular song “Go up and see” – one of the oldest preserved Mediterranean songs, can be analyzed. This is a carnival song and its lyrics tell a common story. Once upon a time there was a garden on Mount Varag near the city of Van, and a bush grew there. The goat ate the bush. Then the wolf ate the goat that had eaten the bush. Then the bear ate the wolf that had eaten the goat that had eaten the bush. Then the sword ate the bear that had eaten the wolf etc. Then came rust, lard, mouse, cat, dog, bride, who took away the dog, bridegroom who took away the bride and at last God or priest who wedded the last two. For there are different variants (over 30), and in some of them the goat eats not the bush but the Sun, it becomes clear that we have to deal with a cosmological system attributed in the form of chain of food, where animals and people represent zodiacal constellations, and the whole cycle presents the year. And the carnival – Armenian Barekendan – was the New Year in the oldest lunar calendar. Songs like Armenian “Go up and see”, copying or reiterating its cumulating form with varying animals and social statuses of human heroes are scattered all over the Mediterranean region, I have fixed Bulgarian, Italian and Greek variants of this song – with largely varying melodies but all containing some constant elements.

Due to archaeology we have the oldest variant of this song, and this is another New Year song preserved in cuneiform inscription of Isin-Larsa culture. The primary song had no traits of vulgar humor but instead it explained its major sense and purpose. The so-called “Harab myth” once performed as a ritual song, illustrates how one god kills or captures the former and reigns over the next month. It is maybe more than coincidence that the last named god has the name of the mythical predecessor of Armenians – Hayashu.

And the last suggestion I want to present here concerning possible co-operation of archaeologists and ethnomusicologists is the problem of Babylonian scales, or modi. As far as I know practically every musicologist or brave amateur who tried to approach this item was inspired with the idea of identity between Babylonian and Greek scales. On the contrary, I think that only specialists of oriental maqam, or mugham can restore the real historical parallels, or maybe even the historical ways of evolution of instrumental music of the region. And as long as those specialists know nothing about the existence of the problem in archaeology, optimism here is inappropriate.

In conclusion, it is necessary to underline once more that any material culture can never exist without the intangible one, and that nobody is able to count which one of them survives longer. This means again that only interdisciplinary investigation can be complete and convincing.

Л. СИМОНЯН
ИАЭ (Ереван, Армения)

К ВОПРОСУ О ВЗАИМООТНОШЕНИИ АРХЕОЛОГИИ И МУЗЫКАЛЬНОЙ ФОЛЬКЛОРИСТИКИ

(Резюме)

Вопрос ставится двусторонне: чем археология может быть полезна музыкальной фольклористике и как музыкальная фольклористика может помочь археологии?

Вопросы выявления древнейших пластов национальных музыкальных культур всегда стояли во главе проблем музыкальной фольклористики. Частью этой проблемы является и вопрос о времени, об историческом периоде, когда были изобретены или внедрены музыкальные инструменты. Проблема решалась по-разному, на основе разных методологий (языковой, географической и др.), но в течение долгого изучения специалисты нескольких стран пришли к единому мнению о том, что древнейшими пластами являются жанры ритуальной музыки – календарного, отчасти также семейно-родового цикла, происхождение которых связывается с доинструментальным периодом. Они характеризуются силлабическим стилем (один-три звука на один слог текста), относительной модалной стабильностью и связанностью ритмической фигуры с движением (танец, шествие, другое ритмическое движение), тогда как влияние инструментальной музыки проявляется в развернутой мелодии на одном слоге, свободной сменой тональности и лада, относительной свободой ритма.

Фактически, этномузыковеды пришли к единой теории формальных составляющих древнейших пластов музыкальной культуры, на основе которых выявлена фактическая общность региональных музыкальных культур, независимо от их реальной трансформации или миграции.

В этом смысле полное игнорирование со стороны археологии по крайней мере непонятно. Например, попытки расшифровать хурритский гимн Никкар обречены на неудачу, потому что авторы “расшифровок” не считают с понятием “профиль региональной культуры”. Единственным исключением можно считать расшифровку Анне Килмер. Верхний голос в данной расшифровке напоминает армянскую свадебную песню величания жениха, хотя и трудно сказать – это более профессиональный подход к проблеме или простое совпадение.

С другой стороны, одна из древнейших ритуальных песен Средиземноморья, живущая и поныне и распространенная по крайней мере в трех странах – Армении, Греции и Болгарии, является сохранной формой так называемого “Мифа о Харабе”, текста новогодней ритуальной песни из культуры Исин-Ларса.

Представление о том, какими были знаменитые в среде археологов Вавилонские лады, также можно создать лишь на основе теории макамата, бытующей в устной традиции восточных народов, что может дать материал для восстановления путей развития инструментальной музыки.

Р. МКРТЧЯН

ЕГУ (Ереван, Армения)

Л. ПЕТРОСЯН

ИАЭ (Ереван, Армения)

А. ПИЛИПОСЯН

СОИСМЗ (Ереван, Армения)

ДОЛГОЖИТЕЛИ СТРАНЫ ЭТИУНИ

Половозрастные определения лчашенской¹, талинской и оромской², палеоантропологических коллекций являются достаточно надежным источником для реконструкции демографических характеристик. Учитывая представительность, хорошую сохранность материалов и узкий диапазон датировок, можно считать что эти выборки отвечают требованиям методики демографического анализа и выдерживают статистическую обработку.

Для восстановления демографических ситуаций, вычислялись показатели вероятностей смертности для каждого пятилетнего возрастного в рамках общепринятых моделей (WeissK. 1973, AcsadiG., NemeskeriJ. 1970). С благодарностью отмечаем, что статистический анализ производился по компьютерной программе Д. Богатенкова “Acheron”³.

Сравнительный анализ демографических характеристик палеопопуляций, погребенных в лчашенском, талинском и оромском могильниках выявляет некоторые общие тенденции. Это – значительное повышение женской смертности в интервале 15-35 лет. Этот довольно распространенный демографический феномен многими исследователями трактуется ранимостью женского организма в родовой период. У женской половины погребенных в вышеотмеченных могильниках повышенная смертность в интервале репродуктивного периода (15-35 лет) рассматривается по разному. В лчашенской серии у носителей севано-арцахской культуры средней бронзы пик смертности (рис. 2) падает на самый активный родоспособный период (20-24 лет). Примерно через сто лет, в период лчашено-мецаморской культуры женская смертность активизируется в самый начальный (15-19 лет) и финальный (30-34 лет) отрезки репродуктивности (рис. 4). Этот показатель очень повышенный в оромской серии для всей молодой женской половины (15-30 лет) и колоссальный в талинской палеопопуляции (рис. 8) в периоды самого активного деторождения (20-24 и 25-29 лет). Следующая общая особенность – это значительное количество мужчин старческого возраста во всех упомянутых сериях. В лчашенской палеопопуляции эпохи средней бронзы больше одной трети, а в остальных более одной четверти мужских костяков определяются 50 и старше

¹ В данном случае использованы материалы и датировки археолога Л. А. Петросяна, без учета музейной лчашенской краниологической коллекции из раскопок А. А. Мнацаканяна.

² Индивидуальные половозрастные данные и археологическую информацию оромской, талинской серий см. Мкртчян 2001.

³ Подробное описание метода см. Алексеева, Богатенков, Лебединская 2003.

лет (Рис. 2, 4, 6, 8). Именно за счет большого числа пожилых мужчин, в палеопопуляциях, представленных в лчашенской, оромском, талинском могильниках образуется диспропорция между процентными соотношениями мужского и женского контингентов (табл. 1, PSR). Мужчин в эпоху бронзы и раннего железа было ощутимо больше.

Межгрупповой сравнительный анализ основных демографических характеристик⁴ выявляет следующие особенности (табл. 1).

Среднестатистическая возраста смерти в лчашенской серии подсчитанная для взрослого населения (АА) средней бронзы (17-16/15 вв до н. э.) зашкаливает евразийский максимум. Очень высокий показатель выживаемости носителей севано-арцахской культуры (39.9) несколько занижен (36.2) по данным взрослого населения лчашено-мецаморской культуры погребенного в том же могильнике в эпоху поздней бронзы (15-14/13 вв до н.э.). Почти аналогичная статистическая характеристика относительно низкой смертности фиксируется у взрослого населения эпохи железа Ширака по данным оромского могильника (38.5).

Средние возрасты смерти (АА) погребенных в вышеотмеченных могильниках по сравнению с маркерами аналогичных показателей⁵ укладываются в пределах очень больших (Лчашен 1) и больших величин (Лчашен 2, Ором, Талин) указывая долгожительство последних.

Впечатление “благополучности” палеопопуляций, оставившие лчашенский, оромский и талинский могильники, создается, также, при сравнении финального отрезка возрастной шкалы (С 50+) с отмеченными сводными данными (табл. 1). Рекордные (Лчашен 1), большие показатели (Лчашен 2, Ором) выживаемости образуются в основном за счет долгожительства мужского контингентов в каждом из них.

Рассматривая смертность как генерализированный показатель благополучия, можно предположить, что мужская часть исследуемых обществ не испытывала длительных стрессов, которые могли вызвать негативное влияние на продолжительность жизни. Социальная защищенность мужского контингента в патриархальных обществах играла немаловажную роль.

Результаты палеоантропологического исследования дополняются данными синхронных археологических комплексов. Так, на среднебронзовых памятниках Армянского нагорья (в частности, Араратской долины, Арагацотна, Ширака, Гехаркуника), с XVIII в. до н. э., при частичном сохранении реалий поздней Триалетиванадзорской культуры, наблюдаются проявления Севано-арцахской, Кармирбердской и Кармирванкской культурных групп. В течение последней (III) фазы среднебронзовой эпохи, носители перечисленных культур нередко занимают одни и те же поселения,

⁴ В качестве сравнительного фона для оценки основных демографических характеристик были использованы более или менее достоверные, репрезентативные данные сводной таблицы Д. В. Богатенкова по эпохам бронзы и раннего железа с территории Передней Азии, Кавказа и русских степей (Алексеева, Богатенков, Лебединская 2003)

⁵ Имеется в виду всемирная сводка Д. В. Богатенкова составленная для всех археологических эпох.

используют те же некрополи, сохраняя при этом ряд специфичных элементов погребального обряда.

В ходе интеграционных процессов, наметившихся в среде носителей поздней Триалети-ванадзорской, Севано-арцахской, Кармирбердской и Кармирванкской (Ван-урмийской) культур или культурных групп в XVIII-XVI вв., явственно проявившихся в XV-XIV вв., происходит формирование обществ, выделяющихся сходными антропологическими, социальными и экономическими характеристиками. В этой же интеграционной среде складывается и качественно новая культура, динамично развивающаяся в ряде константных параметров вплоть до IX-VIII вв. до н. э., и известная в науке под условным названием Лчашено-мецаморской культуры. В

митаннийских, хеттских и ассирийских анналах второй половины II тыс. до н. э. не сохранилось каких-либо сведений относительно социально-политических (возможно прото/ранне-государственных) образований Севанского бассейна, Ширака или Арагацотна эпохи Поздней бронзы - Раннего железа. Однако, в урартских клинописях IX-VII вв. до н. э. в тех же географических пределах упоминаются племенные образования Лики, Киехуни Великухи, Тулиху Луеруни и Адахуни (С, З и Ю побережье Севана), Эрикуахи – Эриахи, Уитерухи, Ишкигулу и Кулиаини (Ширак), Улуани (Ю отроги Арагаца), по всей вероятности входившие в состав племенных союзов Этиуни и Удури–Этиуни (Капанцян Г. 1940, с. 50: Меликишвили Г. 1954, с. 56: Пиотровский Б. 1959, с. 70: Меликишвили Г. 1960, с. 426: Diakonoff I., Kashkai S. 1981, p. 34-35: Арутюнян Н. 2001, с. 505-506). Судя по этим источникам, Этиуни охватывала территорию от Сарикамыш до Севанского бассейна и от оз. Чылдыр до среднего течения р. Аракс, а Удури–Этиуни - собственно Севанский бассейн и некоторые прилегающие территории (Աղձնից Ն., 1972, էջ 204-210: Арутюнян Н. 1970, с.148: Арутюнян Н. 1985, с.198-199, 262-263).

Анализ археологических, лингвистических и топонимических данных позволяет предположить, что по крайней мере Этиуни, как социально-политическое (а может и раннегосударственное) образование, должна была сформироваться еще в доурартский период. Кстати, в последнее время принятие этой точки зрения, в числе прочих, находит свое проявление и в широком использовании археологического термина «Этиунийская культура», которая в научной литературе приходит на смену определению «Лчашено-мецаморская культура» (Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ. 2006, էջ 9).

Таким образом, можно заключить, что феномен долгожительства является одной из наиболее характерных черт биологического (равно как и этнического) облика племенного союза (а может и раннегосударственного объединения) Этиуни.

R. MKRTCHYAN

SUY (Yerevan, Armenia)

L. PETROSYAN

IAE (Yerevan, Armenia)

A. PILIPOSYAN

SPHECMR (Yerevan, Armenia)

THE LONG-LIVERS OF THE COUNTRY ETIUNI

Summary

Sex-age estimations of the Lchashen, Talin and Horom paleo-anthropological collections serve as a reliable source for reconstructions of demographical characteristics. The comparative analysis of the latter reveals a rather spread demographical phenomenon interpreted by many investigators as vulnerability of the female organism during the labor period. The next common particularity is the significant quantity of male of old age in all of the mentioned series. The death age averages (AA) of the population buried in the mentioned cemeteries in comparison with markers of the analogous indexes confine in the limits of very high (Lchashen 1) and high values (Lchashen 2, Horom, Talin) pointing at longevity. Record-breaking (Lchashen 1) and high values (Lchashen 2, Horom) of survival are composed mainly due to longevity of the male contingent in each of the paleopopulations of the Lchashen, Horom and Talin cemeteries.

ЛИТЕРАТУРА

1. Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972:
2. Ավետիսյան Հ. Գ., Ավետիսյան Պ.Ս. ,Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, Երևան, 2006: 3.Арутюнян Н.В. Бияйнили (Урарту). Ереван, 1970.
4. Арутюнян Н. В. Корпус урартских клинообразных надписей. Ереван, 2001.
5. Арутюнян Н. В. Топонимика Урарту. Ереван, 1985.
6. Капанцян Г. А. Историко-лингвистическое значение топонимики Древней Армении. Ереван, 1940.
7. Меликишвили Г. А. Наири – Урарту. Тбилиси, 1954.
8. Меликишвили Г. А. Урартские клинообразные надписи. Москва, 1960.
9. Пиотровский Б. Б. Ванское царство (Урарту). Москва, 1959.
10. Мкртчян Р. А. Палеоантропология Оромского могильника. Ереван, 2001.
11. Алексеева Т. И., Богатенков Д. В., Лебединская Г. В. Влахи. Москва, 2003.
12. Ascadi G., Nemeskeri J. History of human life span and mortality. Budapest, 1970.
13. Diakonoff I.M., Kashkai S.M. Geographical Names According to Urartian Texts (in “Répertoire géographique des textes cunéiformes”), band 9, Wiesbaden 1981.14. Weiss K. Demographic models for anthropology, “Am.An.”, # 38, no. 2, Part II. 1973.




Рис. 3. Показатели смертности в серии Лчашен 2 (ПБ), общая выборка




Рис.4. Показатели смертности в серии Лчашен 2 (ПБ), мужская и женская выборки




Рис. 1. Показатели смертности в серии Лчашен 1 (СБ-ПБ 1), общая выборка




Рис. 2. Показатели смертности в серии Лчашен 1 (СБ-ПБ 1), мужская и женская выборки




Рис. 7. Показатели смертности в серии Талин (РЖ), общая выборка




Рис. 5. Показатели смертности в серии Ором (РЖ), общая выборка




Рис. 8. Показатели смертности в серии Талин (РЖ), мужская и женская выборки




Рис. 6. Показатели смертности в серии Ором (РЖ), мужская и женская выборки

Таблица 1. Сравнение демографических характеристик

<i>Памятник, культура</i>	<i>Датировка до н.э.</i>	<i>Регион</i>	<i>Nr</i>	<i>PCD</i>	<i>A</i>	<i>AA</i>	<i>50+</i>	<i>AAm</i>	<i>AAf</i>	<i>PSR</i>
Ямная (ингульская группа)	III тыс.	Украина, степь, лесостепь	40	4.9	35.4	36.8	16.0	39.2	33.6	63-37
Ямная (юго-вост. группа)	III тыс.	---,---	54	8.9	33.1	35.9	15.7	38.9	26.0	76-24
Ямная (центральная группа)	III тыс.	---,---	74	6.6	35.2	37.3	15.0	38.0	34.7	79-21
Ямная (северо-вост. группа)	III тыс.	---,---	50	17.3	29.8	34.9	14.7	36.5	28.9	79-21
Катакомбная (северо-вост. группа)	К-ц III – нач. II тыс.	---,---	147	12.8	32.7	36.5	13.0	37.6	34.6	67-33
Катакомбная (центральная группа)	К-ц III – нач. II тыс.	---,---	76	-	36.4	36.4	19.0	38.8	31.2	73-27
Катакомбная (юго-вост. группа)	К-ц III – нач. II тыс.	---,---	77	10.1	32.7	35.5	16.1	38.2	30.5	67-33
Катакомбная (ингульская группа)	К-ц III – нач. II тыс.	---,---	46	4.2	34.2	35.6	17.2	36.3	34.4	65-35
Великэнд VI-IV А погр. I (куро-аракская (?) культура)	III –II тыс. (?)	Дагестан, Дербенд	17	5.3	27.8	29.2	0.7	31.4	28.1	53-47
Потаповский I (потаповская куль.)	III –II тыс.	Среднее Поволжье	40	69.1	14.8	36.7	6.0	37.2	35.6	69-31
Сапалитене	II тыс.	Юж. Уз-бекистан	145	36.7	23.8	34.5	2.7	36.1	33.3	43-57
Гинчи	Сер. II тыс.	Дагестан	34	-	28.2	28.2	0.8	28.7	26.4	78-22
Анатолия	II – I тыс.	Малая Азия	104	34.6	24.9	33.8	8.9	-	-	-
Динха-тепе 2-3	II – I тыс.	Иран	48	10.4	27.7	30.1	0.5	-	35.0	0-50
Клин Яр 3-4 (кобанская культура)	8-7 вв.	Старо-польский край	99	8.9	30.7	32.9	1.5	34.4	33.1	58-42

Таблица 1. Сравнение демографических характеристик (продолжение)

<i>Памятник, культура</i>	<i>Датировка до н.э.</i>	<i>Регион</i>	<i>Nr</i>	<i>PCD</i>	<i>A</i>	<i>AA</i>	<i>50+</i>	<i>AAm</i>	<i>AAf</i>	<i>PSR</i>
Лчашен 1 (севано-арцахская культура)	17-16/15 вв.	Армения, Гехаркуник	49	32.7	29.1	39.3	22.4	42.5	36.3	48.5-51.5
Лчашен 2 (лчашено-мецаморская культура)	15-14/13 вв.	---,---	144	20.1	30.9	36.2	18.8	37.9	34.1	54.8-45.2
Ором (лчашено-мецаморская культура)	12/11-10 вв	Армения, Ширак	140	9.3	33.8	38.5	20.4	37.8	34.3	65-35
Талин (лчашено-мецаморская культура)	12-10 вв.	Армения, Арагацотн	56	5.4	34.0	35.4	17.9	40.2	28.6	58.5-41.5

Nr – реальный объем выборки;

PCD – процент детской смертности;

A – средний возраст смерти с учетом детей;

AA – средний возраст смерти взрослых;

50+ – процент индивидов в финальной возрастной когорте;

AAm – средний возраст смерти мужчин;

AAf – средний возраст смерти женщин;

PSR – процентное соотношение мужчин и женщин

ՊԵՂՈՒՄՆԵՐ ԱՐԱՄՈՒՍՈՒՄ

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հնագիտության ամբիոնի և Ավստրիայի Ինսբրուկի համալսարանի համատեղ արշավախումբը (համադեկավարներ Հ. Գ. Ավետիսյան և Վ. Ա. Չոլիչ) գիտական հետազոտությունները շարունակեց Կոտայքի մարզի Արամուսի ամրոցի տարածքում: Նախորդ տարիներին ամրոցի արևելյան ծայրամասի հյուսիսային հատվածում մինչև I դարավանդն առանձնացվել էր շուրջ 250 մ² մակերեսով պեղման հրապարակ: Շարունակելով պեղումները արշավախումբը նպատակ ուներ ճշտելու ամրոցի կառուցապատման փուլերը, հստակեցնելու ժամանակագրական խնդիրները, շերտագրական իրողությունները և այլ հարցեր:¹ Այս խնդիրների պարզաբանման համար պեղավայրը ընդարձակվեց հիմնականում միջնաբերդի հյուսիս-արևելյան ուղղությամբ: Կատարվեցին պեղավայրի փաստագրման ու վավերացման աշխատանքներ:² Պեղման աշխատանքների ընթացքում ուսումնասիրվող տարածքը ընդարձակվեց: Մաքրվեց միջնաբերդի արևելյան մուտքին կից կառուցված հյուսիսային աշտարակը, առաջին պարսպապատը, որը դեպի արևելք ուղղվածությամբ մինչև մուտքին հասնելը ստանում է կոր շարվածքի տեսք (աղ. 1): Գրեթե ամբողջովին պեղվեց միջնաբերդի կիսատ շինություններից մեկը և շարունակվեց մնացած կացարանների ուսումնասիրությունը: Որոշակի հստակություն արձանագրվեց պարսպապատերի հետազոտման ժամանակ: Հատկապես կարևոր է M6 դարավանդի վրա կատարված բացվածքում հայտնաբերված պարիսպի շարը: Ամենայն հավանականությամբ այս պարսպապատը վերաբերում է մինչուրարտական ժամանակաշրջանին և կիկլոպյան ամրոցի մնացորդ է:

Նշված պարսպաշարից դեպի հարավ, դարավանդի վրա, բացվել է հաջորդ պարսպագիծը: Վերջինս վերաբերում է Վանի թագավորության ժամանակաշրջանին և միջնաբերդի արևելյան հատվածում միանում է հզոր աշտարակի մնացորդներին: Այս պարսպապատը իր կառուցողական առանձնահատկությամբ կրկնում է Վանի թագավորության նմանօրինակ շինությունները: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Արամուսի միջնաբերդը օղակող վերջին պարսպագիծը, անկասկած, հետուրարտական ժամանակաշրջանի համակարգ է, որը գոյատևել է նաև վաղ

¹ Հ. Ավետիսյան, Արամուսի ամրոցը, Հուշարձան, տարեգիր Գ, Երևան 2005թ., էջ 97-102

² Հ. Ավետիսյան, Արամուսի պեղումները, «Պատմություն և կրթություն», #1-2, Երևան 2005թ., էջ 151-158

միջնադարում: Բացի ամրաշինական դիաքրոն (տարածամանակյա) կառույցներից, միջնաբերդում պեղվեցին նաև տարբեր շինություններ:

Պեղումների ընթացքում հավաքվեցին մեծաքանակ հնագիտական գտածոներ: Դրանց մեջ հատկապես կարևոր են Վանի թագավորության շրջանին վերաբերվող նյութերը՝ մասնավորապես խեցեղեն անոթները: Թեև խեցանոթները հիմնականում բեկորային են, այսուհանդերձ հստակ պատկերացում են տալիս ուրարտական խեցեգործության մասին: Առանձնանում են բազմազան տիպերի և չափերի տնտեսական խեցանոթներ, որոնք օգտագործվել են երկրագործական և անասնապահական մթերքների վերամշակման և պահպանման համար:

Հայտնաբերված առանձին նմուշներ վերաբերվում են կենցաղային և ծիսական խեցեղենին: Ուրարտական խեցեղենի հավաքածուն դասակարգվում է երկու տիպի. ա) կարմրավունից մինչև դեղնավուն, սև, մոխրագույն, բարձրորակ անգոբապատ և բ) կոպիտ, սև փայլատ մակերեսով անոթներ: Հարկ է նշել, որ այս անոթների 90 %-ը պատրաստված է դուրգի վրա: Խեցանոթների քննարկվող խումբը թվագրվում է մ.թ.ա. VIII – VI դդ. :³

Պեղումների ժամանակ հայտնաբերվել են մետաղից ոչ մեծ քանակությամբ գտածոներ (նկ. 2),⁴ որոնք հիմնականում վերաբերում են Վանի թագավորության ժամանակներին և իրենց զուգահեռներն ունեն էրեբունիի, Արգիշտիխինիլիի, Կարմիր բլուրի, Այանիսի և համաժամանակյա այլ հուշարձանների նյութերում: Մետաղե իրերի մեջ առանձնանում են բրոնզից և երկաթից մատանիներն ու ականջօղերը, ապարանջանները, շքասեղներն ու ֆիբուլները (շիկղերը): Այս իրերը պատրաստված են բարձրակ բրոնզից, ձուլվել են կաղապարի մեջ և իրենց ոճական առանձնահատկություններով բնորոշ են ուրարտական կիրառական արվեստին, ինչի մասին ուղղակիորեն վկայում են Վանի թագավորության (Ուրարտուի) տարբեր հուշարձաններից հայտնաբերված նյութերը:

Բրոնզից բաժանարարները, մատանիները, ականջօղները բաժանվում են երկու խմբի՝ բարակ լարից մեկ պտույտով և տափակ մակերեսով երկու և ավելի ոլորապտույտով արված օրինակների: Ականջօղներից մի քանիսը մակերեսներին ունեն գինդաձև հավելում: Հայտնաբերված ապարանջանները բարձրորակ բրոնզից են, հարթ մակերեսով: Որոշ գտածոներ հատույթում կլորավուն են, իսկ ծայրերը՝ տափակ իրար մոտեցող: Ֆիբուլներն ունեն աղեղնաձև մեջք, ոճավորված ծայրեր և

³ Հ. Ավետիսյան Պ. Ա. Ավետիսյան, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա XI-VI դարերում, Երևան, 2006, էջ 129-131:

⁴ Hayk Avetisyan, Wilfrid Allinger-Csollich, The Fortress of Aramus: Preliminary Report of Excavations in 2004 and 2005, AJNES 2006, vol. I, pp.105-134.

նրբին ասեղ: Մետաղյա իրերի մեջ առանձնանում են բրոնզից և երկաթից պատրաստված նետասլաքները , դանակները, նիզակի սայրերը (աղ. 4):

Նետասլաքները հատույթում ռոմբաձև են, հարթ և խնձորակաձև պոչուկներով: Նիզակը խողովակակոթառ է և պատկանում է կարճ սայրով նիզակների տիպին: Գտնված դանակները՝ երկաթից են, ունեն կլորացող և սրածայր շեղբեր, մեկն ունի տափակ մեջք:

Հատկապես հետաքրքիր է բրոնզե գոտու բեկորը, որը եզրագծված է գծանախշ հորինվածքով: Այն ունի 9 սմ լայնություն: Պահպանված երկարությունը 30 սմ է: Պատկանում է ուրարտական միջին չափի գոտիների տիպին: Բացի վերոհիշյալից, հայտնաբերվեց բրոնզից ժապավենաձև թիթեղ, որը թերևս զարդարել է գավազանի փայտե կոթառը կամ էլ կահույքի որևիցե մաս:

Պեղված գտածոներից պետք է առանձնացնել երկաթից սկավառակաձև դեպի կենտրոն սրացող թիթեղ-կոճակը: Հավանաբար այն կամ զրահաշապիկի կամ էլ վահանակի (ումբոն) մաս է հանդիսանում:

2007 թ. պեղումների ժամանակ հայտնաբերվեց բարձորակ բրոնզից պատրաստված ցուլի արձանիկ (նկ. 3): Այն ունի ընդգծված եղջուրներ, կլորավուն գնդաձև աչքեր, կարճ պոչ, ձգված մարմին և համեմատաբար կարճ ոտքեր: Իր ոճական առանձնահատկություններով արձանիկը հանդիսանում է Վանի թագավորության քանդակագործության ինքնատիպ նմուշ և թվագրվում է մ.թ.ա VIII-VI դարերով: Այն նաև աղերսներ ունի ինչպես փոքրասիական բրոնզի, կոլխիդա-կոբանյան դեկորատիվ մետաղի, այնպես էլ լուրիստանի արտեֆակտների հետ: Արամուսի պեղումները բացառիկ հնարավորություն են ընձեռում տվյալների համեմատական վերլուծությունների միջոցով վեր հանելու՝ տարածաշրջանի պատմահնագիտական համապատկերը մինչև ուրարտական արշավանքները, Վանի թագավորների հարավկովկասյան տեղաշարժերին հաջորդող սոցիալ-քաղաքական իրավիճակի առանձնահատկություններն ու այդ շրջափուլի հիմնական բնութագրական չափանիշները, «ուրարտական» և «էթիունյան» մշակույթների փոխհարաբերակցության, փոխներթափանցման հնագիտական դրսևորումները:


EXCAVATIONS AT ARAMUS

The excavation campaign Aramus 2005 continues the archaeological research in area A in the eastern acropolis of the fortress of Aramus. In 2004 a trench was opened measuring approximately 5 x 36 m in order to obtain a stratigraphic sequence between the acropolis area and the northern lower town (Fig.9). Findings from the excavation campaign Aramus 2004 confirmed that the settlement of the acropolis encompassed several phases. The remains cover the Iron Age (1200-500 B.C), and also suggest an Early Medieval occupation. Due to the relatively restricted size of the area investigated, there are aspects that remain unanswered. In particular, there are questions with regard to the stratigraphic relation between stonewalls in the slope and the acropolis area. Consequently, the findings provide a partial insight into the settlement patterns and inevitably affect the interpretation of the overall archaeological findings.


Further sampling was taken at three points within the excavation area established in 2004 namely, the documentation trench (Dokumentationsstellen) DOST II and IV and the so-called “acropolis trench” (Akropolis-Tiefschnitt). These records aimed primarily to provide answers to the stratigraphic questions. The acropolis trench served also to prepare for the excavation campaign 2006 that sees a general lowering of the acropolis area. The expansion of trench area A in 2005 aims to investigate the coverage and morphology of the fortress on the north-east slope, as well as the settlement patterns in the acropolis area. During excavation campaigns Aramus 2006-2007 there were found a lot of ceramics, metal, stone and gold findings.




Աղ. 1. Պեղավայրը:



Աղ. 2. Մետաղից և ոսկորից առարկաներ



Աղ. 3. Բրոնզե արձանիկ:



Աղ. 4. Մետաղական գտածոներ:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ

(Հովհաննես Կարապյոզյանի աշխատանքների առնչությամբ)

Ներածություն: Վերջին երկու տասնամյակում հաճախադեպ են դարձել հայագիտության տարբեր բնագավառներում համեմատական լեզվաբանության տվյալների օգտագործման դեպքերը: Պատմական կամ մշակութային իրողությունների դիտարկումը լայն՝ միջգիտաճյուղային ընդգրկմամբ, իհարկե, ողջունելի է: Սակայն ցավալի է, որ լեզվական տվյալների ոլորտ թափանցելիս հեղինակները, շատ հաճախ, անտեսում են բանասիրական և ստուգաբանական նույնիսկ տարրական մեթոդները: Նույնիսկ այնպիսի աքսիոմատիկ սկզբունքներ, ինչպիսիք են.

1) որևէ լեզվական իրողություն ստուգաբանելիս նախ պետք է խնամքով ստուգել գոնե ստանդարտ աշխատությունները և պարզել՝ ի՞նչ մեկնություններ են առաջարկվել այլ հետազոտողների կողմից.

2) արտաքին ստուգաբանությունից առաջ նախ պետք է ստուգել՝ արդյո՞ք տվյալ իրողությունը չի կարող բացատրվել ներքին (այսինքն՝ տվյալ լեզվական հանրության սահմաններում դիտարկվող) ստուգաբանությամբ:

Հատկապես վտանգավոր են հայ բարբառային բառաձևերը հայոց լեզվի պատմության կոնտինուումից կտրոդ ու մեկուսացնող մեկնությունները, ինչպես նաև հնչյունական կամայական անցումներ ենթադրող սեպագրային ընթերցումներն ու տեղանվանական նույնացումները: Մանավանդ երբ դրանց հիման վրա արվում են պատմամշակութային լայնամասշտաբ եզրակացություններ:

Ստորև քննարկվում է Հովհաննես Կարապյոզյանի «Մեպագիր տեղանուններ» գրքում («Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում» շարքի հատոր I, գիրք 1, տես՝ Կարապետյան 1998) և նրա մի քանի հոդվածներում արծարծված գաղափարների լեզվաբանական հենքը: Կարապյոզյանի ուսումնասիրություններն այսօր էլ լուրջ են ընդունվում և հիմք են դառնում նորանոր զարգացումների ու

տեսակետների: Հետևաբար դրանց գնահատման խնդիրը շատ ակտուալ է արդի հայագիտության համար:¹

1. Տեղանվանական հետազոտություններ: Քննվող գրքում և Կարագյոզյանի մի շարք հոդվածներում² մեծ տեղ են գրավում տեղանունների մեկնություններն ու տեղայնացումները, որոնք հիմնվում են ոչ թե հնչյունական կանոնավոր օրինաչափությունների, այլ՝ բնույթով ու ժամանակագրությամբ ամբողջապես տարբեր հատուկենտ օրինակների կամ սխալ ստուգաբանությունների վրա:

Կարագյոզյանը (1978, 57-59; 1998, 41, 83) *Գուգարք* տեղանունը բխեցնում է ուրարտական ^{KUR}*Uṭeruhi*-ից՝ ենթադրելով այսպիսի զարգացում. *Uṭeruhi* > **Uṭeruhe* > **Uigeruhe* > > **Գուգարք* > *Գուգարք*, սեռ. *Գուգար-ա-ց*. Այս մեկնության քայլերից ոչ մեկը չի հիմնավորվում հնչյունական օրինաչափություններով:³ Մի կողմ թողնելով տարածքային անհամապատասխանության⁴ հարցը՝ քննենք հնչյունաբանական խնդիրներից մի երկուսը:

Հայերենում չկա **i* > *u* հնչյունափոխություն: Հին **i*-ն հայերենում շեշտի տակ արտացոլվում է հենց որպես *ի* (հմմտ. հնդեվր. **e-uid-et* > հայ. *եզիտ* ‘գտավ’, **diu-* > *տիւ* ‘ցերեկ’), իսկ շեշտագուրկ դիրքում ընկնում է (**uīkṛti* > **wisánni* > *քսան* ‘քսան’. հմմտ. նաև *սիրտ* – *սրտի*): Նույնն է նաև փոխառությունների դեպքում (հմմտ. օրինակ *ձիւթ* և *քնար*):⁵ **i* > *u* հնչյունափոխությունը հիմնավորելու համար Կարագյոզյանի բերած օրինակները ոչ մի ապացուցողական արժեք չունեն: Հավաստի ստուգաբանություն չունեցող *կիթ* և *կուլթ* տարբերակներն այստեղ հիշատակելը նշանակում է բացատրելի անհայտը բացատրել մեկ այլ անհայտով, *սուգ* բառը փոխառված է պարթև. *sūg* ‘վիշտ’ բառից, *թուլթ*-ը՝ արամ. *tūtā* կամ միջ. պարսկ. *tūt* ձևից, իսկ *զինդ* ‘ականջօղ’ և *գունդ* ‘գնդաձև մարմին’ բառերը ստուգաբանական կապ չունեն: Նա հիշատակում է նաև, օրինակ, ասուրերեն *tinūru* > հայերեն *թոնիր* փոխառությունը, որի ձայնավորային հարցերը հստակեցնելը դժվար է, քանի որ առկա է ձայնավորների դրափոխության հնարավորություն: Առավել անտեղի է *Իսկուհի* անձնանվան կողքին *Ուսկուհի* տարբերակի⁶ մատնանշումը. այն նոր է և արդյունք է ձայնավորային առնամանության: Ոչ էլ կարող ենք հայկական տեղանվան

¹ Շնորհակալ եմ Արմեն Պետրոսյանին և Վարդան Ոսկանյանին՝ հոդվածը կարդալու և արժեքավոր դիտարկումներ անելու համար:

² Տե՛ս, օրինակ, Կարագյոզյան 1978 և Карагезян 1988: Մրանց քննադատության շուրջ տե՛ս Петросян 1991:

³ Այս նույնացման և առհասարակ հեղինակի մեթոդաբանության քննադատության շուրջ տե՛ս Петросян 1991, 125, 125¹⁸:

⁴ *Uṭ eruhi*-ն տեղադրվում է Արաքսի աջափնյա տարածքներում (Арутюнян 2001, 528), ուստի հեռու է Գուգարքից:

⁵ Տե՛ս Զահուկյան 1987՝ համապատասխան բաժիններում:

⁶ Տե՛ս ԱճառԱնձն 2, 1944, 390:

**Գուգար-ա-* հիմքում ենթադրել **Գուգարn-* հիմքից՝ *-n- > -ա- հնչունափոխությամբ: Հին -n- հիմքերը հայերենում հենց n-հոլովման մեջ են շարունակվում:

Բայց ձայնավորման հարցը չարյաց փոքրագույնն է: Առավել անընդունելի է աճպարարական քայլերի այն թնջուկը, որ սարքում է հեղինակը՝ *t > q* անցումը հիմնավորելու համար: Ու այստեղ չի օգնի *Urtehe > Uprg/ձախ* անցումը (անկախ այն բանից՝ ընդունում ենք այս համապատասխանությունը, թե ոչ), քանի որ այստեղ առկա հարաբերությունն այլ է՝ *t* vs. *g/ձ*: Ճիշտ է, հեղինակը փորձում է *Գուգարք*-ի դեպքում -ձ-ի փոխարեն -q-ի առկայությունը բացատրել որպես նույն հնչույթի «հունատիպ» տարբերակ, սակայն դա ընդամենը հիմնագուրկ ենթադրություն է և նշանակում է մի անհայտը բացատրել մեկ ուրիշ անհայտով: Իսկ /*Կոդոն*/ քաղաքանվան մեջ նա կամայականորեն անջատում է /*կn*/ մասը և այն համարում հնդեվր. **ǵo-* (> հայ. *ծո-ւ*) ենթադրյալ նախաձևից: Սակայն *ծու* բառի մեջ **ǵn-* (**ǵo-*) արմատ առանձնացնելու համար հիմք չունենք: Կարագյոզյանը հայ. -ւ/-ի հավելման համար համեմատում է *n/nl* դերանվան օրինակը, որտեղ, սակայն, -ւ/-ն բոլորովին այլ բացատրություն ունի (ՀԱԲ 3, 571-572; Martirosyan 2010, 522-523): Նա նաև հիշատակում է իռլ. *gó* ‘ծով’ հնարավոր ցեղակիցը, սակայն այստեղ գործ ունենք *-w-ի անկման հետ, հմմտ. հնդեվր. **ǵ^wōw-* > հայ. *կու* և իռլ. *bó* ‘կով’ (Martirosyan 2010, 140-141): Ապա հեղինակը, /*կn*/-ի հնդեվրոպականությունն ու իր մեկնությունը հիմնավորելու համար, վկայակոչում է և անգլ. *sea* ու գերմ. *Zee* (իմա՝ *See*) բառերը: Սակայն գերմանական ճյուղի այս բառամիավորը (հմմտ. նաև գոթ. *saiws*, հին բարձր գերմ. *sē[o]* և այլն) հնդեվրոպական ստուգաբանություն չունի⁷ և առհասարակ պահանջում է *s-ով նախաձև, ինչն անհամատեղելի է հայերեն *ծ* (< **ǵ*)-ին:

Հետաքրքիր է, որ հեղինակն այդ հնչյունափոխություններն այլուր էլ է գործածում, ընդ որում առանց որևէ հիմնավորման դրանք ներկայացնում է որպես «հայերենին հատուկ»: Օրինակ՝ ^{GÉN}*Siremu-tara* լեռնանունից ածանցում է *Սուրբաւ*-ը և գրում, որ **i* > *u* անցումը «յատուկ է խուռերենին եւ հայերենին»:⁸ Մի այլ տեղ (Karagезян 1988, 63) ^{ID}*Idarunia* գետանվան **ild-* մասը համադրում է հայերեն *ուրդ* ‘պարտեզ ջրելու առվակ’ բառին: Այնինչ վերը տեսանք, որ նման հնչյունափոխություն հայերենում չկա, իսկ մատնանշված օրինակների մի մասը սխալ է, մնացածը՝ ապացուցողական արժեքից զուրկ: Նույնիսկ այդ օրինակներից մի երկուսը քննարկման համար պիտանի համարելու դեպքում էլ պետք է գիտակցենք, որ դրանք կանոնիկ չեն, այլ բացառություններ են: Ուստի բոլոր դեպքերում հայերենին հատուկ չէ նման հնչյունափոխություն:

⁷ Lehmann 1986, 292b; HerkWört 1997, 663a; Mallory/Adams 1997, 503-504:

⁸ Karagезян 1988, 67; Կարագեոզյան 1998, 41-42:

Այս $h > n$ անցումից բացի Կարագյոզյանը հաճախ է մատնանշում նաև $h > n$ անցում: Նա *Բերգհրա* տեղանունը նույնացնում է *Բերձոր*-ին՝ մատնանշելով «հայերենին յատուկ $h > n$ անցում» (Կարագեոզեան 1998, 192): Հայտնի չէ, թե ինչի հիման վրա է այդպիսի անցում արձանագրվում, այն էլ՝ որպես հայերենին հատուկ: Վերոհիշյալ ^{KUR}*Üteruhi* երկրի ^{URU}*Amigu* քաղաքը, որը սովորաբար տեղադրվում է Ալաշկերտի մերձակայքում (Арутюнян 2001, 496a), Կարագյոզյանը (1978, 71; 1998, 82-83) նույնացնում է Օձունից ոչ հեռու գտնվող *Ամնո* գյուղին և այդ տեղանվան մեջ արտացոլված անցումը վստահորեն համարում «միանգամայն օրինաչափ» ու «հիմնավորապես ապացուցված»:

Ավելի արտառոց է վերը քննված $t > q$ անցումը, որը հեղինակը (1998, 40) տեսնում է նաև ^{KUR}*Atezaine*⁹ > հայ. *Արկազ*¹⁰ նույնացման մեջ:

Հեղինակը հաճախ իր խիստ կամայական մեկնաբանությունները ներկայացնում է վստահությամբ՝ «անշուշտ» և նմանատիպ բառերով: Օրինակ՝ նա¹¹ ուրարտական ^{URU}*Luhione* տեղանունը և Սևանի *Lychnitis* անվանումը բխեցնում է հնդեվրոպական **luk-* ‘լույս’ արմատից (հմմտ. լատ. *lux* և այլն), *Արարատ* տեղանվան առաջին բաղադրիչը՝ *արեն* բայից, ապա այդ տվյալներն ու Արագածի Լուսավորչի կանթեղը բացատրում է «Էլմայի կրակներ» կոչվող օդերևութաբանական երևույթով և վստահորեն ավելացնում, որ հայկական *Նորատուս* գյուղանունը «անշուշտ պետք է եղած լիներ **Նարատուս*», և այն համարում է կազմված *նար* ‘կրակ’ (հայերենում ըստ էության անգո) արմատից, որ հետո ժողովրդական ստուգաբանությամբ դարձել է *նոր*:

^{KUR}*Uburda* երկրանունը, որ հավանաբար պետք է տեղադրվի Եփրատի վերին հոսանքների շրջակայքում՝ Եկեղեաց գավառի հարևանությամբ (Арутюнян 2001, 526b), նույնացվում է Ստեփանավանի մերձակայքի *Հորարձի* գյուղանվանը (Կարագյոզյան 1978, 66-67, 71; 1998, 98-99, 130-131, 142-143, 255): Հեղինակը գրում է, որ այս ուրարտական երկրանունը «հնչել է **Oborda*, որը ուրարտա-հայկական հնչյունական օրենքներին համապատասխան կարող էր հանդես գալ **Արարդէ* կամ **Որարդէ* ձևերով, որոնք ավելի ուշ պետք է տալին **Արարդի* կամ **Որարդի* ձևերը»: Բոլորովին պարզ չէ՝ հայերենի այդ ո՞ր հնչյունական օրենքներով են փակ վանկի **-o-* ն և բառավերջի *-a-*ն դարձել համապատասխանաբար *-u-* և *-i-*: Ինչ վերաբերում է $h > d$ հնչյունափոխությանը, ապա հեղինակի հիշատակած *խանդ/խանձ* և *խեղդ/հեղձ* զույգերը, որոնց ստուգաբանությունները հստակված չեն, չեն կարող հաստատել, թե հայերենում եղել է $h > d$ օրինաչափ արտացոլում: Յուրաքանչյուր դեպք պահանջում է

⁹ Ըստ Арутюнян 2001, 499a-ի՝ հավանաբար Սևանա լճից արևելքում:

¹⁰ Գյուղ Եղեգնաձորից ոչ հեռու (ՀայՏեղԲառ 1, 1986, 455a):

¹¹ Карагезян 1988, 61; Կարագեոզեան 1998, 17-18:

անհատական մոտեցում: Օրինակ՝ *անէծք* և *անիծ* բառերի դեպքում հայերենում սպասվող *տ*-ի փոխարեն *ծ*-ի առկայությունը կարող է բացատրվել որպես արմատական **-d*-ի և հաջորդող **-s*-ի գումարման արդյունք:¹² Սակայն **Oborda* > *Հոբարձի*-ի դեպքում նման հանգամանք չկա:

Իր գրքի՝ գետանուններին նվիրված բաժնում Կարագյոզյանը (1998, 219 և հաջ.) *Ասպահեն* գետանվան **հեն* բաղադրիչը նույնացնում է **հեն* այլուստ չվկայված արմատին, որն իբր դիտարկելի է *զեն* ‘զոհ’ արմատի կազմում՝ **q-հեն*, ապա ընդգծում է. «մի բան, որ վրիպել է անգամ Հրաչեայ Աճառեանի աչքից»: Նա գոնե չի էլ հիշատակում, որ նույն Աճառյանը և մյուս հայագետները *զեն* բառը համարում են իրանական փոխառություն: Ապա այդ գետի մյուս անվան՝ *Խոզվոր*-ի առաջին բաղադրիչը նույնացնում է *խոզ* կենդանաբառին: Իրականում այդ գետի անվան ճիշտ տարբերակն է *Խոզվոր*, ուստի ամենայն հավանականությամբ գործ ունենք *խոզ* ‘ճահճաբույս, ջրիմուռ’ բառի հետ, այսինքն՝ ‘մամռածածկ ճահիճ’ բնիմաստով այս գետանունը ծագումնաբանորեն ներդաշնակում է բարբառային **խոզ-մուրաս* ‘ճահիճ, կանգնած ջրերի հոտած տիղմ’ բաղադրությանը (Martirosyan 2009, 11-12): Ապա ակնհայտ իրանական ծագման *Հրազդան* գետանվան սկզբնամասը բխեցնում է հայերեն *ջուր* բառի հնդեվրոպական **juro-* նախաձևից՝ «*յուրաս* > *հուրաս* > *հուրազ* անցումով, որը միանգամայն բացատրելի է հայերենի հնչյունական օրինաչափություններով»: Իրականում դասական փուլին ու դրանից առաջ խոսք չի կարող լինել *j > h* «օրինաչափ» անցման մասին: Բացի այդ, չի բացատրվում, թե ինչու նույն բառի նույն հնչույթից մի դեպքում ունենք *ջ*-, իսկ մյուսում՝ *j > h*:

Այն, որ Կարագյոզյանը շատ ազատ է վարվում հնչյունների արտացոլումների հետ, կարելի է ցուցադրել նաև սեպագրային *հ*-ի օրինակով: Վերոհիշյալ *Գուգարք*-ի դեպքում նա *հ*-ի արտացոլումը տեսնում է հայերեն *ք*-ի մեջ, մինչդեռ *Ախուրեան* և *Արց/ձախ* տեղանունների դեպքում ունենք *խ*: Իսկ երբ հայկական համապատասխան հնչյունները շատ են հեռու *հ*-ից, ապա նա համեմատությունը կատարում է ընդհանուր հնդեվրոպական համատեքստում: Վերոհիշյալ ^{URU}*Luhiane* տեղանվան դեպքում գործ ունենք հնդեվրոպական **leuk(sn)-* արմատի հետ (հմմտ. հայ. լոյս, լուսն, լատ. *lux*, հուն. *λύχv-* և այլն), իսկ ^{URU}*Himmua*-ի դեպքում (Kaparezyan 1988, 73-74)՝ **ǵʰim-* ‘ձյուն, ձմեռ’ արմատի (հմմտ. հայ. *ձիւն*, *ձմեռն*, իւեթ. *gimmant-* ‘ձմեռ’, հուն. *χειμών* ‘ձմեռ’ և այլն): Իսկ ^{URU}*Haldere* քաղաքանվան արտացոլումը տեսնելով *Չըլդըր* լճանվան մեջ՝ նա ենթադրում է **Քալդր* > **Չալդր* > *Չըլդըր* զարգացում և **k* > *չ* հնչյունափոխության համար հիշատակում *չորս* բառը (Կարագյոզյան 1978, 73-74):

¹² Մանրամասն տես Martirosyan 2010, 83, 88:

Այս մեկնությունը խնդրահարույց է: Նախ՝ ունենք ոչ թե **k*, այլ՝ *h*, ու ժամանակագրական քննություն է պետք հիմնավորելու համար, թե արդյոք տվյալ փուլում հնարավոր էր նման քմայնացում: Երկրորդ՝ քմայնացումն ակնկալելի է միայն առաջնային շարքի ձայնավորներից (**e* և **i*) և **j* կիսաձայնից առաջ, իսկ այստեղ ունենք *a*: Ինչ վերաբերում է *չորս* բառին, ապա այն բխում է **k^wetores* նախաձևից, ուստի այստեղ էլ գործ ունենք առաջնային շարքի ձայնավորի՝ **e*-ի հարևանության հետ: Երրորդ՝ **-/* ձայնորդը բաղաձայնի նախորդելիս արտացոլվում է որպես *h*, ոչ թե *j*: Վերջապես՝ Չըլդըր լճանունը հին վկայություններ չունի և ակնհայտորեն նոր է:

Առհասարակ՝ ^{URU}*Haldere* քաղաքանվան նույնացումը Չըլդըր-ի հետ որևէ կերպ հնարավոր է (հմմտ. Арутюнян 2001, 507b): Սակայն դա, միևնույն է, չի կարող տեղավորվել հայերենի հնչյունական օրինաչափությունների համակարգում. Կարագյոզյանի վերլուծությունն անընդունելի է: Նպատակ չունենալով քննելու Չըլդըր լճանվան (թուրք. *Çildir Gölü*) ծագումը, նշեմ միայն, որ այդ քննությունը պետք է կատարվի ավելի լայն համատեքստում և ընդգրկի, մասնավորապես, վրացական անվանումը՝ *Črdilis tba* (հմմտ. *črdil-o* ‘ստվեր, հյուսիսային’), որն իմաստաբանորեն ներդաշնակ է հայկական *Ծովակ Հիւսիսոյ* անվանմանը:¹³ Եվ ահա, ավելի ուշ, Կարագյոզյանը (1998, 245-247) անդրադառնում է վրացերեն ձևին, բայց այն ածանցյալ է համարում հայ. *Չալդըր*-ից:

Ապացուցված համարելով *h* > *չ* խնդիրը՝ հեղինակն այն վստահորեն կիրառում է և այլ տեղանունների տեղայնացման ու մեկնության մեջ՝ */Կեխու/* > *Կեչառոյք*, ^{URU}*Hundur* > *Չաւնդուր*, */Բեխուր/* > *Վաչուր*- և այլն (Կարագեոզեան 1998, 103, 115, 121-123): Նկատենք, որ այս դեպքերում էլ */h/*-ին հաջորդող ձայնավորն առաջնային շարքին չի պատկանում: Զարմանալի է, որ նա այդ անցումը համարում է «հնդեվրոպական բնոյթի» (Կարագեոզեան 1998, 103), մինչդեռ, ինչպես տեսանք, բնիկ հայկական՝ հնդեվրոպական համատեքստում չկա ու չի կարող լինել *h* > *չ* անցում, այն էլ՝ ետին շարքի ձայնավորներին նախորդող դիրքում:

Երբեմն այս օրինակների քննությունը զարգացվում է արտառոց ուղղությամբ ու ավարտվում հուսահատ փակուղով: Օրինակ՝ */Բեխուր/* > *Վաչուր*- տեղանվան հիմքում դիտարկվում է հնդեվրոպական **ues-r* ‘գարուն’ արմատը (էջ 123): Կարծում եմ՝ մեկնաբանություններն ավելորդ են. անլրջությունն ակնհայտ է:

2. Ուրարտական մեհենագրերի մեկնությունը հայերենի հենքի վրա: Կարմիր բլուրից 1952 թ. գտնված բրոնզե թասերից մեկի վրա փորագրված է մեհենագիր մի կարճ արձանագրություն, որը, աննշան տարբերությամբ, կրկնվում է նույն տարում

¹³ Խորհրդատվության համար երախտապարտ եմ Ուվե Բլեզինգին (Uwe Bläsing):

գտնված կճուճի վրա: Հ. Կարապետյանն (1998, 59-64) այստեղ կարդում է Ռուսա Ա թագավորի անունը՝ *Ur-sa-a* տարբերակով: Սա, ըստ նրա, «փաստարկում է նրանով, որ Կարմիր բլուրում 1949 թ. գտնուած բրոնզե թասերից չորսը կրում են հենց Ռուսա Ա-ի անունը՝ սեպագրով, որոնցից մեկն օժտուած է վերոյիշեալ երկու մեհենագիր արձանագրութիւնների նման՝ նոյնպէս մեհենագիր արձանագրութեամբ»: Այս արձանագրության երեք մեհենագրերը՝ *Ur-sa-a*, նա ընթերցում է հայերենի հենքի վրա:

Առաջին մեհենագիրը ձիու գլուխ է: Հեղինակն այն դիտարկում է որպէս ‘ձի’ գաղափարագիր, «որն անկասկած ընթերցուելու է *ur* վանկով սկսուող մի բառով»: Դա, ըստ նրա, հայերեն *որս* բառն է: Եվ որպէսզի հիմնավորի, որ հայերեն *որս* բառը նշանակում (կամ նշանակել) է ոչ թե ‘որս’ կամ ‘որսի կենդանի’, այլ՝ ‘ձի’, հեղինակը բերում է մի շարք փաստարկներ:

Կարապետյանը նախ վկայակոչում է Մովսէս Խորենացու (2.կա)¹⁴ գրառած վիպասանական հայտնի հատվածը՝ *Եթէ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս*, և մեկնաբանում է այն այսպէս. «Եթէ դու **ձի** հեծնես (և գնաս) ...»: Փորձենք տեսնել՝ արդո՞ք այս ենթադրությունը որևէ հիմք ունի:

Հայերեն *որս* բառը անթիվ վկայություններ ունի գրաբար մատենագրության մեջ՝ ‘որս’ կամ ‘որսի կենդանի’ իմաստներով: ՆՀԲ 2, 538a-ում այսպէս է նկարագրվում բառիմաստը. «ըմբռնումն էրեոց՝ թռչնոց և ձկանց, գործեօք կամ հնարիք. որսալն. որսորդութիւն. և որսալի կամ որսացեալ կենդանին»: Երկուսուկէս տասնյակից ավելի վկայություններ կան Աստվածաշնչում (Աստուածատուրեան 1895, 1207-1208), որտեղ *որս* բառին հունարեն բնագրում համապատասխանում են ‘որս’ կամ ‘որսի կենդանի’ նշանակող բառեր՝ ὄρεα, θήρα, κυνήγιον ևն:¹⁵ Կարապետյանը չի մատնանշում որևէ տեքստ, որտեղ *որս* բառը հստակորեն գործածված լինի ‘(որսի) ձի’ իմաստով:

Գրաբարում սովորական է *ի* նախդրի գործածությունը հայցական խնդրի հետ՝ ուղևորման, ժամանման, փոխարկման և, որ հատկապէս կարևոր է մեր խնդրի համար, նպատակի իմաստներով. օրինակ՝ *ի սպանումն մահապարտացն* «մահապարտների սպանության նպատակով», *ի ճաշ կոչեաց* «հրավիրեց ճաշի», *ու ի է ոչխար յողջակեզ* «գոհաբերման ոչխարն ու՞ր է»:¹⁶ Հետևաբար միանգամայն բնական է,

¹⁴ Տե՛ս 1913 = 1991 քննական տեքստի էջ 192, տող 2-3:

¹⁵ Brenton 1851; Rahlfs 1935; Nestle/Adams 2002; Künzle 1984; ՆՀԲ 2, 538a:

¹⁶ ԱճառԼիակ 5, 1965, 76-77; Աբրահամյան 1976, 256-259; Խաչատրյան 1989, 77-80; Ավետիսյան / Ղազարյան 1992, 220-221; Առաքելյան 2010, 206:

որ քննվող հատվածի *յոբ*-ը գրաբարի ձեռնարկներում մեկնաբանվում է որպես նպատակի պարագա՝ «հեծնես՝ որսի գնալու (համար)»:¹⁷

Դիտարկենք վկայություններ Աստվածաշնչից, որտեղ *յոբ*-ը հստակ գործածված է ‘որսի գնալու համար / նպատակով, դեպի որս, ի որս’ իմաստով, ու համատեքստում ձիու ներկայությունն էլ բացատրվում է. *որպէս առեւծ զի պատրաստ է յոբ* (Սաղմոս ԺԳ.12). *օրհնեալ է տէր, որ ոչ էտ զմեզ ի յոբ ատամանց նոցա* (Սաղմոս ԺԻԳ.6). *արկէք զգործիս ձեր յոբ* (Ղուկաս Ե.4):

Ահա և վկայություններ Խորենացուց. *ի շաբաթու հեծանել յոբ և ի պատերազմունս. էլանել Միհրանայ յոբ. կամելով յոբ զնալ* (1913=1991, 119, 232): Մեր խնդրի (*յոբ հեծ-*) համար հատկապես կարևոր է առաջին քաղվածքը, որը, քննվող պարզորոշ կերպով նշանակում է «շաբաթ օրերը [ձի] հեծնել որսի և պատերազմի համար»:

Հետևաբար *յոբ հեծցիս* բառակապակցության մեջ *որս* բառին ‘ձի’ իմաստը վերագրելու ոչ մի տեքստային հիմք չկա:

Կարագյոզյանը ենթադրում է, որ *որս* բառը նախապես նշանակել է ‘ձի’, «բայց մշտապես որսի առարկայ լինելով, աստիճանաբար վերածուել է ‘որս’ իմաստով բառի»: Ապա ավելացնում է, թե *որս* բառը «հայագիտության մեջ հենց համանման ձևով է բացատրվում», և հիշատակում է այն հնդեվր. **porkos* ‘ձկան որս’ արմատից (հմմտ. հուն. *πόρκος* ‘ձկնորսի ուռկան’) բխեցնող ստուգաբանությունը: Սակայն պարզ չէ, թե ինչով է այս մեկնությունը նպաստում *որս* բառին ‘ձի’ իմաստ վերագրելու ենթադրությանը, մանավանդ որ դա շատ անստույգ ստուգաբանություն է (կան և այլ տեսակետներ),¹⁸ և որ հեղինակն իսկույն անցնում է մի բոլորովին այլ ստուգաբանության, ըստ որի՝ *որս* բառի ենթադրյալ **hորս* ‘ձի’ նախաձևը ցեղակից է անգլ. *horse* ‘ձի’ բառին:

Սակայն այս մեկնությունն էլ է անհնար, քանի որ անգլերեն *horse* ‘ձի’ բառը բխում է հնդեվր. **k/ǵ(e)rs-* ‘վազել’ արմատից (հմմտ. լատ. *currō* ‘վազել’, *currus* ‘կառք’, հին իռլ. *carr* ‘փոխադրամիջոց’, միջ. բ. գերմ. *hurren* ‘շտապել’ և այլն):¹⁹ Գերմանական լեզուներում *h-*ն օրինաչափորեն արտացոլվում է հնդեվր. **k* կամ **ǵ* պայթականը, որոնք հայերենի բառասկզբում կտային ոչ թե *h-*, այլ համապատասխանաբար *p-* կամ *u-*: Իսկ հնդեվր. **-rs-* հնչակապակցության օրինաչափ արտացոլումը հայերենում *-n-*ն է: Հետևաբար այս հնդեվրոպական արմատը հայերենում պետք է տար **pան-* կամ **քեն-*, իսկ արմատը **ǵ-*ով վերականգնելու դեպքում՝ **սա/են-*: Եթե ի հավելումն

¹⁷ Աբրահամյան 1976, 398, ծնթ. 53; Առաքելյան 2010, 225, ծնթ. 37: Մալխասյանը (1990, 124) թարգմանում է այսպես. «Թե դու հեծնես որսի գնաս ...», իսկ Թոմսոնը (Thomson 2006, 200)՝ «If you go hunting ...»:

¹⁸ Ստուգաբանական փոքրճերի շուրջ տես ՀԱԲ 3, 588; Martirosyan 2010, 544:

¹⁹ Pokorny 1959, 583; Mallory / Adams 1997, 491b; de Vaan 2008, 157-158; Matasović 2009, 191-192:

հիշենք նաև, որ հայերեն **որս* բառի 'ձի' իմաստը սուկ ենթադրություն է, ապա պարզ կդառնա, որ այս ստուգաբանությունը ոչ մի քննադատության չի կարող դիմանալ:

Էլ ավելի հուսահատ է վիճակը հաջորդ «փաստարկի» առնչությամբ: Կարագյոզյանը գրում է. «Դեռ ավելին, քանի որ ձին համարում է արեւի խորհրդանիշը, ապա կարող է արելը եւս կոչուել նոյն անունով՝ **հորս* ('արեւ'), որը եւ օգտագործում է արեւմտահայերէնում՝ *հորսակ* ('ցերեկ', 'կէսօր') բառի մէջ, այսինքն՝ այն ժամը, երբ արեւը հասած է լինում երկնականարի մէջտեղը՝ զենիթին»:

Սա մի արտառոց օրինակ է, երբ ոչնչով չհիմնավորվող մի ենթադրություն հիմք է դառնում էլ ավելի հիմնագուրկ ենթադրությունների և կազմում մեթոդից ու բարեխղճությունից զուրկ մի հորինվածք. **որս* բառի 'ձի' իմաստից, որն ինքն էլ սուկ ենթադրություն է ու ոչնչով չի արդարանում, մի նոր համարձակ քայլով ածանցվում է մի այլ ենթադրական իմաստ՝ 'արև', դեռ սրանից էլ՝ 'ցերեկ' ու 'կէսօր': Իսկ այս բազմահարկ ենթադրությունների վրա սարքած կառույցի ավարտը *հորսակ* բառն է, որն էլ հստակ ցույց է տալիս, որ այս ամենը կատարելապես հիմնագուրկ է: Քանի որ *հորսակ* 'ցերեկ; կէսօր' բառի կազմում ոչ մի **հորս* արմատի գոյության մասին խոսք լինել չի կարող: Դիտարկենք այդ բառը ավելի մոտիկից:

Համեմատական լեզվաբանության մեջ կա մի տարրական սկզբունք. որևէ լեզվի նոր վիճակում՝ որևէ բարբառում կամ արդի գրական լեզվում գրանցված որևէ իրողության ծագումն ուսումնասիրելիս պետք է նախ կատարել ներքին ստուգաբանություն, այսինքն՝ պետք է փորձել գտնել այդ իրողության դրսևորումները տվյալ լեզվի մյուս բարբառներում և հատկապես հին գրավոր լեզվում: Այս աքսիոմատիկ դրույթին հետևելով՝ կարող ենք ստուգել հայագիտական ամենահիմնարար աշխատանքները և չենք կարող չնկատել, որ այս *հորսակ* բառը բազմաթիվ երակներով կապված է բարբառային ու մատենագրական տվյալների մի մեծ փնջի հետ: Կարագյոզյանն ամբողջությամբ անտեսում է այս բոլոր տվյալները՝ *հորսակ* նոր բառը իր հարազատ երակներից կտրելով ու մեկուսացնելով:

Քննությունը պետք էր սկսել Աճառյանի «Գաւառական բառարան»-ից: Այստեղ *հօրսուկ* / *հօրցակ* բառահոդվածում և դրա տակ հղվող էջում (Աճառեան 1913, 677b, 1133a) գտնում ենք բարբառային հետևյալ ձևերը՝ Պոլիս *օհարսագ*, Ադաբազար *օվարսագ*, Եվդոկիա *օրասսագ*, Նոր Նախիջևան *հօրսա/ուկ* և այլն, բոլորն էլ նշանակում են 'կէսօր': Այսքանն էլ բավական է համոզվելու համար, որ չկա **հորս* արմատ, և որ *հորսակ* 'ցերեկ; կէսօր' բառի ծագումը պետք է քննել նշված բառաձևերի հաշվառմամբ: Եվդոկիայի բարբառի *օրասսագ*-ը համադրելով *-րս-* և *(-)/հ-* ունեցող մյուս ձևերին՝ կարելի է հասկանալ, որ գործ ունենք *օր* և *հասարակ* (վերջինս գրաբարում նշանակում էր 'կես') բառերի բաղադրության հետ: Եվ

Աճառյանն էլ, վերոհիշյալ «Գաւառական բառարան»-ում, նշում է այս բառերի գրաբարյան ակունքը՝ *օր-հասարակ*, որ իրապես վկայված բաղադրությունն է: Սա էլ մեզ ուղղում է դեպի Աճառյանի «Արմատական բառարան», որի *հասարակ* բառահոդվածում (ՀԱԲ 3, 47-48) գտնում ենք բոլոր հարցերի պատասխանները:

Դեռևս 19-րդ դարի վերջում Եվդոկիայի *օրասագ*-ը ճիշտ կերպով մեկնաբանվել է որպես *օր-հասարակ* (Գազանճեան 1899, 65): Ավելի վաղ՝ Այտընյանը (1866, 65) հիշատակել է գրաբարյան *օրհասարակ* բաղադրությունն է՛լ ավելի հարազատորեն պահած մի բարբառային ձև՝ *օրհարսակ* (*օղարսակ*): Սա կարելի է համեմատել Ռոդոսթոյի *օրարսագ* և Ասլանբեկի *օրարսագ* ձևերի հետ: Մյուս բարբառներում տեղի է ունեցել երկու *րա*-երից մեկի ամփոփում (հապլոլոգիա): Նոր Նախիջևանի *հօրսագ* ձևում (Աճառեան 19251, 141, 431), Պոլսո *օհարսագ*-ի (Աճառյան 1941, 226) համեմատությամբ, կատարվել է *հ*-ի դրափոխություն: Իսկ Ադաբազարի *օվարսագ*-ում *-վ*-ն երկու վանկարար ձայնավորների միջև առաջացող հնչյուն է՝ հորանջ:

Եվ վերջապես, Հ. Կարազյոզյանը **(h)որս* ‘ձի’ բառի գոյությունը հիմնավորելու համար հիշատակում է *յորսայս* ‘մեջքի վրա պառկած’ բառը: Նկատի ունենալով, որ «կենդանական աշխարհում միայն սմբակաւոր կենդանիներն են (ձիեր, էշեր եւ հագուաղէպ նաեւ ջորիներ), որ մեջքի վրայ պառկած թաւալ են տալիս», նա ենթադրում է, որ *յորսայս* բառը նույնպես պարունակում է **(h)որս* ‘ձի’ բառը, և նրա հնագույն իմաստն է ‘ձիապառկուկ’:

Այս ենթադրությունը նույնպես ոչնչով չի հաստատվում: Այս բառը ‘թավալվել’ չի նշանակում, այլ ընդամենը՝ ‘մեջքի վրա պառկած’: Ճիշտ է, այն կարող է գործածվել բացասական երանգով, ասենք՝ ծուլի մասին (ինչպես, օրինակ, Առակաց գ.9-ում), բայց դա բոլորովին էլ պարտադիր չէ (հմմտ. բառի գործածությունը բնության գեղեցիկ նկարագրության մեջ՝ Խորենացի 1.Ժբ): Եվ հետո՝ որևէ վկայություն չկա, որտեղ այս բառը գործածված լինի ոչ թե պարզապես անգործ պառկած լինելու իմաստով, այլ՝ թավալվելու: Բացի այդ՝ հեղինակը չի բերում որևէ տիպաբանական զուգահեռ իր առաջարկած իմաստաբանական կադապարի (‘ձիու նման պառկած’ > ‘մեջքի վրա պառկած’) գոնե տեսական հավանականությունը ցույց տալու համար: Ոչ մի տեղ չեմ գտնում *ձիապառկուկ* կամ նման այլ կազմություն: Փոխարենը՝ Լոռվա բարբառում կա *խոզապառ/րկուկ(ի)* բառը՝ Թումանյանի հայտնի գործածություններով:²⁰

‘Պառկել, ընկողմանել’ կամ հարաբերակից իմաստներով բառերը հիմնականում կազմվում են մարմնամասեր (‘մեջք’, ‘կող’, ‘փոր’ և այլն) նշանակող բառերի հենքի վրա, հմմտ. (*ընկողնիմ, ընկողմանիմ, թիկնեկ, կոթնիկ, յողնեալ,*

²⁰ Թումանյան, ԵԼԺ 3, 1989, 94, 95, ծնթ.՝ 346; ՀայԼեզԲրբԲառ Բ, 2002, 345:

պառակիմ, *փորսիվայր և այլն: Հետևաբար շատ ավելի բնական ու հավանական կլինեք, եթե յորսայս բառն ածանցված լինեք ‘մեջք’ կամ ‘կող’ նշանակող որևէ արմատից: Եվ իսկապես, Գ. Ջահուկյանի (1991, 42) առաջարկված ստուգաբանության համաձայն այդ բառը կազմված է *h* նախդիրից և **npu* ‘կող’ արմատից, որը ժառանգվել է հնդեվրոպական **pe/orċ-u-* ‘կող’ արմատից (հմմտ. սանս. *pārsu-* ‘կող’, ավեստ. *pərəsu-* ‘կող’ և այլն):²¹

Այսպիսով՝ հայերեն **(h)npu* ‘ձի’ բառի գոյությունը ոչնչով չի հաստատվում:

Երկրորդ մեհենագիրը նման է հայերենի *S* տառին՝ խիստ ձգված վիճակում: Հեղինակն այն մեկնաբանում է որպես «մագաղաթի (կամ պապիրուսի) մի երկար շերտ, որի ծայրը գտնուում է գրագրի կամ ընթերցողի ձեռքին, իսկ ամբողջ մագաղաթը (պապիրուսը) իր ծանրութեան տակ ձգուել է ցած, եւ ներքեւի ծայրը, ինչպես որ սպասելի էր, շրջուել է վերել: Այդ մագաղաթը (պապիրուսը), բնականաբար, իրենից ներկայացնում է գրուած մի բան՝ նամակ կամ հրաման»: Այդ մեհենագիրը, ըստ նրա, ունի *sa* հնչումը, քանի որ արտացոլում է հայերեն *սակ(ե)ք* ‘արքունի հրովարտակ’ բառը, որ փոխառված է հուն. *σάκρα* ‘կայսերական հրամանագիր, հրովարտակ’²² բառից, սա էլ, իր հերթին, լատ. *sacer* ‘սուրբ, նվիրական’ բառից: Հայկական լեոնաշխարհում Ք.ա. 8-րդ դարում մագաղաթի (պապիրուսի) ներկայությունը ցույց տալու համար Կարագյոզյանը հիշատակում է Մուծածիրի տաճարի հայտնի դրվագանկարը, որտեղ պատկերված երկու գրագիրներից մեկը ձեռքին ունի կավե մի սալիկ, իսկ մյուսը բռնել է ներքև ձգված մագաղաթ կամ պապիրուս և երկաթե գրիչով գրում է դրա վրա: Ըստ Բ. Պիոտրովսկու՝ նա գրում է արամեերեն:

Այս մեհենագրի մեկնաբանությունն էլ է թվում կամայական ու անհավանական: Հատկապես անհասկանալի է, թե այս հունական փոխառությունն ինչպես կարող էր հայերենի կազմում հայտնված լինել Ք.ա. 8-րդ դարում:

Ապացուցողական ուժից զուրկ է նաև ուղղահայաց գծեր (կամ ուղղանկյուն) պատկերող երրորդ մեհենագրի մեկնաբանությունը որպես մարգ և ընթերցումը որպես հայերեն *ածու* ‘մարգ’:

Եզրակացությունն ակնհայտ է. Կարագյոզյանի՝ մեհենագրերը հայերենի հենքի վրա ընթերցելու փորձերը հիմնազուրկ են:

3. Կողմնակի հնդեվրոպական շերտ Համշենի բարբառում: Ըստ Հ. Կարագյոզյանի (1998, 177-181)՝ Հայկական լեոնաշխարհի հյուսիսարևմտյան

²¹ Հանգամանալից քննարկման համար տե՛ս Martirosyan 2013, 100-101: Հմմտ.՝ Ջահուկյան 2010, 556a:

²² Liddell / Scott 1996, 1581a-ում թարգմանվում է «imperial archives»:

տարածաշրջանը, ընդհուպ մինչը Սև ծովի հարավարևելյան ափերը (Խաղտիք), բնակեցված է եղել հնդեվրոպական հունաստիպ ցեղային միություններով, որոնցից բառեր են փոխառվել համշենահայերի կողմից: Նա նախ անդրադառնում է Համշենի *պէտ էրէ* ‘սպասիր’ բային:

Ըստ Կարագյոզյանի՝ այստեղ գործ ունենք Համշենի բարբառի *պէտ* բառի հետ, որ նշանակում է ‘ոտք’ և սերում է հնդեվրոպական **ped- / *pod-* ‘ոտք’ արմատից (որից ունենք բնիկ հայերեն *հետ* և *ոտն/ոտք* բառերը)՝ Խաղտիքի բնիկների լեզվի միջնորդությամբ: Իմաստային հարաբերության համար նա մատնանշում է Ղարաբաղի *վոնն արա < ոտն արա*, որ, ըստ նրա, նշանակում է ‘շտապիր’, թեև, ըստ Աճառյանի (1913, 859b), նշանակում է ‘կանգնեցնել’, իսկ ՀայԼեզԲբԲառ Դ, 2007, 340a-ում գրանցված է Արարատյան բարբառում՝ հետևյալ իմաստներով. ‘կանգնել’, ‘կանգնեցնել’, ‘պահել’, ‘շարժվել, քայլել’, ‘դիմանալ’:

Սակայն Համշենի բարբառում չենք գտնում ‘ոտք’ նշանակությամբ բառ՝ †*պէտ* (կամ, լրիվ հունաստիպ արտացոլմամբ, †*պէդ*): Ջարմանալի է, որ հեղինակը, մինչ այս արտառոց գաղափարն արծարծելը, չի փորձում ստուգել ստանդարտ գրականությունը: Եթե նա նայեր Համշենի բարբառի դասական ուսումնասիրությունը՝ Հ. Աճառյանի «Քննություն Համշենի բարբառի» մենագրությունը (1947), ապա նրա բառացանկում (էջ 251) կգտներ գրաբարյան *պէտ* արմատը, որն այս բարբառում ներկա է *բէդ ընիւ* ‘սպասեմ’ տեսքով: Բնական է, որ խոսքը *պէտ* ‘հարկավորություն, կարիք’ արմատի մասին է, ուստի շատ հեշտ էր քննվող իրողությունը գտնել նաև Աճառյանի «Արմատական բառարան»-ում (ՀԱԲ 4, 79-80): Ուշագրավ է, որ Համշենի *բէդ ընիւ*-ի գրաբարյան հստակ համապատասխանությունն էլ կա՝ *պէտ առնեմ* ‘հոգ տանել, խնամել’. հիշենք, որ բարբառային *ընել/անել* ‘անել’ բայը սերում է գրաբար *առնեմ > այնել* ‘անել, կատարել’ բայից (չշփոթել *առնում* ‘վերցնել, ձեռք բերել, գրավել’ բայի հետ):

Գրաբարյան *պէտ առնեմ* բայի նշանակությունը՝ ‘հոգ տանել, խնամել’, մի փոքր տարբերվում է Համշենի *բէդ ընիւ*-ի իմաստից, որն է ‘սպասել’: Սակայն սա քաջ հայտնի իմաստային հարաբերություն է, որ հստակ երևում է *սպասեմ* բայի օրինակով. սա, ինչպես հին մատենագրության մեջ, այնպես էլ՝ բարբառներում, հանդես է գալիս այդ նույն երկու նշանակություններով՝ ‘սպասել’ և ‘սպասարկել, ծառայել, խնամել’ (ՀԱԲ 4, 261-262):²³ Հիշենք, մասնավորապես, Հ. Թումանյանի «Հին օրինություն» բանաստեղծության հայտնի դրվագը (ԵԼԺ 1, 1988, 28).

²³ Հմմտ. նաև անգլ. *waiter* բառը:

Մենք, առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ,
 Երեք դասընկեր,
 Նըրանց առաջին զըլխաբաց կանգնած,
 Ձեռքներըս խոնարհ սրբտներիս դրած,
 Զի՛լ, ուժեղ ձայնով նըրանց **ըսպասում** –
 Տաղ էինք ասում:

Հետևաբար՝ Համշենում *†պետ* ‘ոտք’ բառի գոյությունը ոչնչով չի հաստատվում:²⁴

Այնուհետև հեղինակն անդրադառնում է Համշենի բարբառի **ղյափ** ‘աղվես’ բառին՝ այն բխեցնելով հնդեվրոպական *ալոպեկ* (իմա՝ **a/h₂lōpek-*) ‘աղվես’ արմատից: Վերջինից կանոնավորապես ունենք հայերեն **աղուէս** բառը, ինչպես նաև՝ հուն. *άλωπηξ, -εκος* ‘աղվես’, սանս. *lorāśā-* և այլն:²⁵ Սրա կողքին, ըստ Ղարազոյանի, Խաղտիքի տարածքի ենթադրյալ հնդեվրոպախոս բնակչության լեզվում եղել է այլ արտացոլում, որից էլ փոխառվել է Համշենի **ղյափ**-ը:

Այս ենթադրությունը ոչնչով չի հիմնավորվում: Եթե իսկապես եղած լիներ այդպիսի տարր, այն էլ, ինչպես հեղինակն է ասում, «յունատիպ», ապա ավելի հավանական կլիներ, որ նախահավելվածային **a-*ն և **-ek-*ը ներկա լինեին և **p-*ն հանդես չգար որպես *p^h* (թեև այս վերջին հանգամանքն այնքան էլ եական չէ, քանի որ բառավերջի պայթականի իրականը հնչումը պարզ չէ, տես Աճառյանի տվյալները ստորև): Իսկ ամենալուրջ խնդիրն այն է, որ բառամիջի ձայնավորումը բացարձակապես անհամատեղելի է հնդեվրոպական այս արմատի ձայնավորման հետ: Հեղինակը, միանգամայն կամայականորեն, ենթադրում է, որ այս բառը տվյալ ենթադրյալ լեզվում հնչել է ոչ թե *ալոպեկ*, այլ՝ *ալուապեկ*, որն էլ, «հայերենի հնչյունափոխական օրենքների համաձայն կարող է տալ հետևեալ անցումները».
ալուապեկ > *ալուապ* (-*եկ* վերջավորության անկմամբ) > *ալեյապ* (*ու* > *եյ* անցումով) > *լեյապ* (բառասկզբի անշեշտ *ա-*ի անկմամբ) > *ղեյապ* (*լ* > *ղ* անցումով) > *ղյապ* (անշեշտ -*ե-*ի անկումով) > *ղյափ* (*պ* > *փ* անցումով):

Այսպիսով՝ հեղինակն այս արտացոլումը բացատրելու համար դիմում է յոթ հնչյունափոխությունից կազմված պրոկրուստյան մահճի օգնությանը և օրինակներով

²⁴ Կարազոյանը հնդեվրոպական նույն ‘ոտք’ արմատից է բխեցնում նաև Համշենի բարբառի մեկ այլ բառ՝ **պոտես** ‘իլիկ’, ու այս դեպքում էլ է ենթադրում Խաղտիքի բնիկների լեզվի միջնորդություն: Սակայն այս բառի կարգավիճակը և այլ մանրամասներ պարզ չեն (ինչպես և մյուս դեպքերում՝ հեղինակը ոչ մի աղբյուր չի մատնանշում), ուստի առայժմ դրա քննությանը չեմ անդրադառնա:

²⁵ Տես ՀԱԲ 1, 134-135; Martirosyan 2010, 42; 2013, 93:

կամ հղումներով չի հիմնավորում դրանցից և ոչ մեկը:²⁶ Այդուհանդերձ՝ նա, ինչպես համար անհասկանալի վստահությամբ, եզրակացնում է. «Անկասկած, սոյն *ղյափ*՝ ‘աղուէս’ բառը եւս Համշենի բարբառին է անցել Խաղտիքի հնդեւրոպացի բնակչութեան լեզուից»:

Հեղինակը պարտավոր էր, մինչև իր բարդ սցենարի մշակումը, այդ բառի վերաբերյալ տեղեկություններ քաղելու համար ստուգել նախ ամենաառաջնային աղբյուրը՝ Աճառյանի վերոհիշյալ աշխատությունը Համշենի բարբառի մասին (Աճառյան 1947): Այստեղ նա, թուրքական փոխառությունների բառացանկում, կգտներ *ղըյապ/բ*՝ ‘աղվես կամ շնագայլ’ բառը:²⁷ Ապա՝ անհրաժեշտ էր ստուգել Համշենի ու մերձակա տարածքների մյուս լեզուները: Այդ դեպքում նա կգտներ լազերեն *m-kj-ap-u*՝ ‘շնագայլ’, որ հավանաբար ծագում է քարթվելական **ki(w)*- ‘ճչալ’ արմատից, այսինքն՝ շնագայլն անվանվել է ‘Schreiender’ = ‘ճչացող’ (Fähnrich 2007, 243). հմմտ. լազերեն *o-kirap-u*, *o-kij(ap)-u*՝ ‘ճչալ’, մեգրելերեն *rkia*p- ‘ճչալ’ ևն (Klimov 1998, 96):²⁸ Թուրքերենում բառը ներկա է միայն այս տարածաշրջանում և ամենայն հավանականությամբ փոխառված է լազերենից:²⁹

Լազերեն *m-kjap-u*՝ ‘շնագայլ’ բառի կազմությունն ու կերպարանքը և մասնավորապես *k*-ի անհամատեղելիությունը **/l*-ի հետ ցույց են տալիս, որ դա է համշենյան *ղըյապ/բ*՝ ‘աղվես կամ շնագայլ’ բառի աղբյուրը, և որ *ղըյապ/բ* բառում ստուգաբանական **/l* չկա:

Ինչպես տեսնում ենք, Համշենի բարբառի այս բառերի վերաբերյալ Կարագյոզյանի տեսակետը ամբողջությամբ հիմնագուրկ է:

Եզրակացություն: Մենք քննարկեցինք Հովհաննես Կարագյոզյանի «Մեպագիր տեղանուններ» գրքում ու մի քանի հոդվածներում տեղ գտած մի քանի դրվագ: Կարծում եմ այսքանն էլ բավարար է ցույց տալու համար, որ լեզվական տվյալների ուսումնասիրության նրա մոտեցումներն ու մեթոդներն անընդունելի են և չեն կարող հիմք ծառայել պատմամշակութային հետևությունների համար:

²⁶ Դրանցից միայն *լ > ղ* անցումն է իրական, այն էլ՝ եթե ժամանակագրությունը և քայլերի հերթականությունը ճշտվեն (արդյո՞ք տվյալ փուլում բառասկզբի *լե*-ն կտար *ղե*-):

²⁷ Տե՛ս Աճառյան 1947, 268b, նաև՝ 96; ԱճառԼիակ 3, 1957, 573:

²⁸ Քարթվելական *m*- նախածանցի շուրջ տե՛ս Klimov 1998, 111-112:

²⁹ Այս բառի կարգավիճակի վերաբերյալ ճշտումների համար երախտապարտ եմ Ուվե Բլեզինգին (Uwe Bläsing) և Վարդան Ոսկանյանին:

AT THE CROSSROADS OF COMPARATIVE LINGUISTICS AND HISTORY

(on the studies of Hovhannes Karagyozyan)

In the last few decades an increasing usage of linguistic data in the study of Armenian historical and cultural issues can be observed. In general, of course, a multidisciplinary approach to complex problems related to the prehistoric phases of the Armenian people and culture is very welcome and even indispensable. It is very unfortunate, however, that non-linguists very often boldly present ideas that violate the most elementary principles of philological and etymological research. By examining certain Armenian words that are often present in only a few dialects, in relation with data from other languages, these researchers neglect the possibility of internal etymology and isolate the terms from the continuity of the Armenian language. In doing so they even pass over in silence the commonly accepted views on the subject, operate according to non-existent phonological correspondences and, most dangerously, very often draw far-reaching historical conclusions on the basis of such interpretations.

In this paper I examine the methodology applied by Hovhannes Karagyozyan in his 1998 book entitled “Cuneiform place names” and a number of his papers. In his studies on the identification of place names, deciphering Urartian hieroglyphic script and some other historical issues Karagyozyan made great use of linguistic data. At present his work serves as a base for developing new ideas. For this reason it is very important to evaluate the linguistic grounds of his investigations.

1. Toponymical studies

Karagyozyan derives Armenian *Gugar-k'* from Urartian ^{KUR}*Uṭeruḫi* assuming the following development: *Uṭeruḫi* > **Uṭeruḫe* > **Uṭigeruḫe* > **Gugarok'* > *Gugar-k'*, gen. *Gugar-a-c'*. None of the steps involved in this scenario is well founded. There is no sound change **i* > *u* in Armenian. An old **i* remains intact under accent (cf. IE **e-uid-et* > Arm. *egit* ‘he found’, **diu-* > *tiw* ‘day’) and is dropped in an unaccented position (**uṭkṇti* > **wisánni* > *k'san* ‘twenty’). The same applies in loanwords (e.g. *jíwt* ‘pitch’ and *k'sak* ‘purse, bag’).

Many of the examples adduced by Karagyozyan to establish this vocalic change are based on incorrect etymologies, and the rest are irrelevant or uncertain: Arm. *t'ut* ‘mulberry’ and *sug* ‘sorrow’ have in fact been borrowed from MPers. *tūt* (or Aramaic *tūtā*) and Parth. *sūg* respectively; Arm. *gind* ‘earring’ and *gund* ‘globe, ball’ are not etymologically related to each other; the etymology of both *kit* ‘animal product’ and *kut* ‘harvest’ is uncertain; *Uskuhi*, a recent by-form of the female personal name *Iskuhi*, is due to vocalic assimilation, and so on.

Having invented such groundless developments as **i* > *u* or *o*, *t* > *g*, *x* > *č* and considering them as “quite regular” or “fundamentally proven”, Karagyozyan confidently proceeds to

¹ I am greatly indebted to Kate Bellamy for checking my English.

make more etymologies, such as: ^{URU}*Amigu* > *Amoġ*, ^{KUR}*Atezaine* > *Arkaz*, ^{URU}*Hundur* > *Č'awndur*, ^{GÉN}*Siremu-tara* > *Suram*, ^{KUR}*Uburda* > *Hobarji*. He often complicates the picture even more by giving an arbitrary underlying etymology to the compared pair. For instance, deriving *Vač'ur* from *Bexur*, he assumes an underlying root that reflects Indo-European **ues-* 'spring (season)' which, apart from being semantically arbitrary, makes the relation between *č'* and *x* even worse by projecting them to an original **-s-*. And in the (alleged) development ^{URU}*Haldere* > *Č'aldr* he sees the same sound change as in PIE **k^wetores* > Armenian *č'ors* 'four', ignoring the fact that in the latter we are dealing with a palatalization of the labiovelar **k^w-* before a front vowel.

Karagyozyan frequently ignores the trivial characteristic of a phonological rule having temporal and spatial boundaries. For instance, he derives the first part of the river name *Hrazdan* from the Indo-European source of Armenian *jur* 'water', i.e. **iuro-*, assuming a development **yuras* > **huras* > *h(u)raz* that is explained, as he writes, "by the phonetic regularities of Armenian". In fact, the sound change *y-* > *h-* without doubt belongs to recent stages of Armenian and is therefore totally irrelevant for such etymologies.

2. Urartian hieroglyphic script

On a bronze vessel found in 1952 at Karmir-Blur there is a hieroglyphic inscription comprising three signs. Karagyozyan reads this inscription as *Ur-sa-a*, identifying it as a variant name of Rusa. He interprets the first sign as an ideogram meaning "horse" which, he states, must be read as a word starting with the syllable *ur-*, and this word is Armenian *ors*. However, this word has a large number of attestations in both translated (corresponding to Greek ἄγρος, θήρα, κυνήγιον, etc. in the Bible) and original literary sources and has been preserved in certain dialects of the various corners of Armenophone territories such as Hamšen, T'iflis, Svedia, Agulis and Łarabał, and everywhere it clearly means 'hunt, catch' or 'hunted animal, game', never 'horse'.

Ignoring all this evidence, Karagyozyan claims that the basic/oldest meaning of Armenian *ors* is 'horse'. In order to prove this he first mentions the famous epic fragment recorded by Movsēs Xorenac'i (2.61) in the 5th century: *Et'ē du yors hecc'is*. In fact, the use of the preposition *i* with the accusative expressing purpose is common in Classical Armenian (e.g. *i čaš koč'eac* "invited for dinner"), so the commonly accepted translation of this passage as "If you mount for (or go) hunting" poses no problems whatsoever and needs no revision. Particularly important is the following passage from Movsēs Xorenac'i 2.9: *hecanel yors ew i paterazmuns* "to ride out to hunt or to war".

Next, Karagyozyan sets forward etymological arguments in favour of his interpretation, none of which is acceptable. First he identifies Armenian *ors* with English *horse*, which is untenable since the possible proto-form of the English word, i.e. IE **k/k(e)rs-* (cf. Lat. *currō* 'to run', *currus* 'chariot', OIr. *carr* 'vehicle', MHG *hurren* 'hasten', etc.) is incompatible with Armenian *ors*. He sees another trace of the meaning 'horse' in the word *yorsays* 'supinely, lying on the back', which is highly improbable.

But the utmost negligence is manifested in Karagyozyan's treatment of West Armenian *horsak* 'midday'. According to his analysis, the (alleged) meaning 'horse' of Armenian *ors* developed to 'sun', which in turn yielded 'midday'. This scenario is untenable not only because of its multi-step and arbitrary semantic development, but also, and this is the most important, because it deprives a modern word of its inner-Armenian nucleus. West Armenian *horsak* 'midday' does not contain a root **hors-*. It is inseparable from many dialectal forms, none of which is mentioned by Karagyozyan: Polis *ɔharsag*, Adabazar *ɔvarsag*, Nor-Naxijewan *ɔrassag*, Rodost'o *orarsag*, etc., all meaning 'midday'. These words clearly reflect Classical Armenian *ōr-hasarak*, an actually attested compound of *ōr* 'day' and *hasarak* 'half'. All this information is readily available in the most standard literature, first of all in Ačařyan's "Root" and "Dialectal" dictionaries.

According to Karagyozyan, the second hieroglyph resembles a leaf of papyrus or parchment and sounds as *sa-*, reflecting the Armenian word *sakr* 'royal rescript', itself a loan from Gr. *σάκρα* 'imperial archives' which in turn comes from Lat. *sacer* 'sacred, hallowed, sublime'. However, it is extremely difficult to imagine the presence of such Greek or Latin loanwords in Armenian in the 8th century BC.

The third hieroglyph comprises perpendicular lines and is interpreted as *a* reflecting the initial sound of Armenian *acu* 'garden-bed'. This explanation also inspires little confidence.

We can conclude that Karagyozyan's attempts to decipher the Urartian hieroglyphic script are baseless.

3. Extraneous Indo-European layer in the Armenian dialect of Hamšen

According to Karagyozyan, the northwestern regions of the Armenian Highland up to the southeastern coast of the Black Sea (*Xařtik*) were inhabited by Indo-European tribes that spoke an unattested Greek-type ("*yunatip*") language. This is proven, he claims, by words borrowed from this unknown language into the Armenian dialect of Hamšen. Here I shall discuss the two of his examples.

In the Hamšen dialect one finds compounded verb *pet ɛɛ* 'wait!', with *ɛɛ* 'make!' deriving from Classical Armenian *ařnem*, aor. *arar* 'to make'. Karagyozyan treats *pet* as a reflex of PIE **ped-* / **pod-* 'foot', of which Armenian inherited *het* 'foot, trace' and *otn/otk* 'foot'. For the semantic relationship he mentions dialectal *otn ara* which in different dialects means 'to stop, hold, stand, sustain' or 'to walk, move'.

In fact, there is no evidence for the existence of *†pet* meaning 'foot' in Hamšen or any other dialect. Moreover, this Hamšen verb, *bed ɔnim*, clearly reflects Classical Armenian *pēt ařnem* 'to take care', with the root *pēt* 'need, want, necessity' having given *bed* through regular consonant shift and the verb *ařnem* which is present in this dialect as *ɔnim*. The semantic relationship between 'to take care, serve' and 'to wait' is well-known, cf. *spasem* which has both meanings in the literature and dialects. This is common knowledge that can easily be found in standard literature, namely Ačařyan's etymological dictionary and his 1947 monograph on the Hamšen dialect. Karagyozyan, however, failed to check these works.

The author then turns to the Hamšen word *hyap* ‘fox’ considering it to be a loan from Indo-European **a/h₂lōpek-* ‘fox’, the regular reflex of which is Armenian *atūēs*, gen. *atues-u* ‘fox’, cf. Gr. *άλώπηξ, -εκος* ‘fox’, Skt. *lopāsā-* probably ‘fox’, Proto-Iranian **raupāsa-* ‘fox’. In order to derive *hyap* from this IE word, Karagyozyan invokes a truly procrustean scenario consisting of seven steps none of which is grounded: **alopek* > **aluapek* > **aluap* > **aleyap* > **leyap* > **leyap* > **hyap* > **hyap*. The actual solution is simple: the word is a loan from Laz *mĭjapu* ‘jackal’ and is not related in any way to IE **a/h₂lōpek-* ‘fox’.

Conclusion

The linguistic studies conducted by Karagyozyan and the historical and cultural conclusions based on them are totally fallacious.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Աշոտ Արսենի

1976 Գրաբարի ձեռնարկ (4-րդ հրատարակություն). Երևան. «Լույս»:

ԱճառԼիակ, տես Աճառյան 1955-2005

ԱճառԱնձն, տես Աճառյան 1942-1962

Աճառյան, Հրաչյա Հակոբի (Աճառեան)

1913 Հայերեն գաւառական բառարան. Թիֆլիս («Էմինեան ազգագրական ժողովածու», հտ. Թ):

1925 (Աճառեան), Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի. Երևան:

1941 Քննություն Պոլսահայ բարբառի. *Գիտական աշխատություններ*, հատոր 19. Երևան. Պետական համալսարանի հրատարակչություն. 19-250:

1947 Քննություն Համշենի բարբառի. Երևան. ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

1942-62 Հայոց անձնանունների բառարան [ԱճառԱնձն 1-5]. 1, 1942; 2, 1944; 3, 1946; 4, 1948; 5, 1962. Երևան. Երևանի համալսարանի հրատարակչություն [1-4 հատորները = *Գիտական աշխատություններ* 21, 24, 25, 26]:

1971-79 (ՀԱԲ), Հայերեն արմատական բառարան, 4 հատորով (2-րդ հրատ.). Երևանի համալսարանի հրատարակչություն [1-ին հրատ. 1926-1935, 7 հատորով]:

1955-2005 (ԱճառԼիակ), Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն (վերջին հատորը՝ Երևանի համալսարանի հրատարակչություն):

Ամատունի, Սահակ վարդապետ

1912 Հայոց բառ ու բան. Վաղարշապատ:

Այտընեան, Հ. Արսեն Վ.

1866 Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի հանդերձ ներածությամբ եւ յաւելուածով (հավելվածը գրաբարի համառոտ քերականություն է՝ էջ 431-489). Վիեննա. Մխիթարեանց տպարան: Վերահրատ.՝ Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987:

Առաքելյան Վարդադ Դավթի

2010 Գրաբարի քերականություն (խմբագիրներ՝ Անդր. Կարապետեան, Ալ. Յակոբեան). Երևան. «Վիամիր»:

Աստուածատուրեան Թ.

1895 Համաբարբառ Հին և Նոր Կտակարանաց. Երուսաղեմ. Տպարան Սրբոց Յակովբեանց:

Ավետիսյան Հ. Մ. և Ղազարյան Ռ. Ս.

1992 Գրաբարի ձեռնարկ (3-րդ հրատ.). Երևանի համալսարանի հրատարակչություն:

Գազանճեան, Յովհաննէս

1899 Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը. Վիեննա. Մխիթարեան տպարան:

Թումանյան Հովհաննէս

1988- Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով (ԵԼԺ). Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն – ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:

Խաչատրյան Գուրգեն Կիպրոնի

1989 Գրաբարի շարահյուսության ձեռնարկ. Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ (ձեռագրի իրավունքով):

Կարազոյցյան Հովհաննէս

1978 Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները. *ՀՀԳ* 1978, № 10. 55-76:

1998 (Կարազեոզեան Յովհաննէս) Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ հարակից նահանգներում). Երևան. «Մազադաթ» («Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, I.1»):

ՀԱԲ 1-4

1971-79 տես Աճառյան 1971-79:

ՀայԼեզԲրբԲառ Ա-

(2001-), *Ա. Սարգսյան et al.* (խմբ.), Հայոց լեզվի բարբառային բառարան. Երևան. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:

ՀայՏեղԲառ 1-5

(1986-2001), *Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան*, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հտ. 1, 1986; հտ. 2, 1988; հտ. 3, 1991; հտ. 4, 1998; հտ. 5, 2001. Երևանի համալսարանի հրատարակչություն:

ՆԲՀ 1-2

1836-37 **Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի. Վենետիկ. Սուրբ Ղազար, 1836-1837. 2-րդ հրատ. Երևան. Երևանի համալսարանի հրատարակչություն, 1979-1981:

Ջահուկյան, Գ. Բ.

1987 Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

1991 Ստուգաբանություններ. *ՊԲՀ* 1991, № 2. 36-44:

- 2010 Հայերեն ստուգաբանական բառարան (խմբագրությամբ և առաջաբանով՝ Վահան Սարգսյանի). Երևան. «Ասողիկ» հրատարակչություն:

Арутюнян Н. В.

- 2001 Корпус урартских клинообразных надписей. Ереван: Издательство 'Гитутюн' НАН РА.

Карагезян О. О.

- 1988 Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам. *ВОН* 1988, № 7: 57-76.

Петросян Армен Е.

- 1991 Самоназвание армян и вопрос локализации носителей протоармянского языка. *ВОН* 1991, № 5: 120-129.

Brenton Lancelot Charles Lee

- 1851 The Septuagint with Apocrypha: Greek and English. London: Samuel Bagster & Sons, Ltd. (= Hendrickson Publishers, 1986/2009).

Fähnrich Heinz

- 2007 Kartwelisches etymologisches Wörterbuch. Leiden, Boston: Brill. (Handbuch der Orientalistik; 18).

HerkWolft

- 1997 Herkunftswörterbuch der deutschen Sprache (bearb. von Günther Drosdowski). Mannheim, Leipzig, Wien, Zürich: Dudenverlag. (Duden, 7).

Klimov G. A.

- 1998 Etymological dictionary of the Kartvelian languages. Berlin, New York: Mouton de Gruyter.

Lehmann Winfred P.

- 1986 A Gothic Etymological Dictionary (based on the 3rd ed. of Feist's dictionary). Leiden: E. J. Brill.

Liddell Henry George & Scott Robert

- 1996 A Greek-English Lexicon. A new edition revised and augmented throughout by Sir Henry Stuart Jones, with the assistance of Roderick McKenzie and with the co-operation of many scholars. Oxford: Clarendon Press.

Mallory J. P. & Adams D. Q.

- 1997 (eds.), Encyclopedia of Indo-European culture. London, Chicago: Fitzroy Dearborn Publishers.
2006 The Oxford introduction to Proto-Indo-European and the Proto-Indo-European world. Oxford: Oxford University Press.

Martirosyan Hrach K.

- 2009 Armenian *mawr* 'mud, marsh' and its hydronymical value. In: *Aramazd: Armenian journal of Near Eastern studies*, vol. 4.1: 73-85 and 179-180 (Summary in Armenian).
2010 Etymological dictionary of the Armenian inherited lexicon. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 8).
2013 The place of Armenian in the Indo-European language family: the relationship with Greek and Indo-Iranian. In: *Journal of language relationship (Вопросы языкового родства)* 10: 85-137.

Matasović Ranko

- 2009 Etymological dictionary of Proto-Celtic. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 9).

Nestle, Eberhard and Erwin & Aland, Barbara and Kurt et al.

- 2002 Novum Testamentum Graece et Latine. Stuttgart: Deutsche Bibelgesellschaft, 1984, 1993, 2002.

Pokorny Julius

- 1959 Indogermanisches etymologisches Wörterbuch, vol. 1. Bern, Stuttgart: Francke.

Rahlfs Alfred

- 1935 (ed.), Septuaginta. Stuttgart: Deutsche Bibelgesellschaft, 1935, 1979.

Thomson R. W.

- 2006 *Moses Khorenats'i*, History of the Armenians: translation and commentary on the literary sources (revised edition of 1978). Ann Arbor: Caravan Books.

Vaan Michiel de

- 2008 Etymological dictionary of Latin and the other Italic languages. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; 7).

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – СОКРАЩЕНИЯ - ABBRIVATION

ԱՀ - Ազգագրական Հանդես, Թիֆլիս

ԳՏ - Գիտություն և Տեխնիկա (ամսագիր)

ԴՀԱԱ - ՀՀ-ում դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան.

ԷՊՀԱԹ - «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, Երևան

ԸՀԽ - Ընտանիքի հետազոտման խնդիրներ (ժողովածու)

ԿԼԱ - Կուլտուր-լուսավորական աշխատանք (ամսագիր)

ՀԱ - Հանդես ամսօրեայ

ՀԱԲ - Հայ ազգագրություն և Բանահյուսություն (մատենաշար)

ՀԱՀՆ - Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում

ՀԱՀԽ - Հայ ազգաբանության և Հնագիտության խնդիրներ

ՀՀՀ - Հայաստանի հնագիտական հուշարձանները (մատենաշար)

ՀՀՄ - Հայաստանի հնագույն մշակույթը (մատենաշար)

ՀՀՈ - Հին Հայաստանի ոսկին. Հանրապետական գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզիսներ. Երևան

ՀՀՊՄՀ - Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր, Երևան

ՀԺՄ - Հայ ժողովրդական մշակույթ (պարբերական)

ՀՃՊ - Հայկական ճարտարապետության պատմություն

ՀՍՀ - Հայկական սովետական հանրագիտարան

ՀՍՍ - Հայոց սրբերը և սրբավայրերը Մժողովածու

ՄՄԱԵԺ - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (մատենաշար), Եր.

ՊՄԱԹՊՄՊԾ - ՀՀ մշակույթի նախարարության Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ

ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդես, Երևան

ՊԿ - Պատմություն և կրթություն, Երևան

ՍԱ - Սովետական Արվեստ (ամսագիր), Երևան АВИИУ – Ассирио-Вавелонские источники по истории Урарту

АГПУ – Армянский Государственный Педагогический Университет им. Х. Абовяна, Ереван.

АО - Археологические Открытия, Москва.

АЭФК - Археология, Этнология, Фольклористика Кавказа

БЖА - Биологический журнал Армении, Ереван.

ВГМГ - Вестник Государственного Музея Грузии, Тбилиси.

ВДИ - Вестник Древней Истории
 ВЕУ - Вестник Ереванского Университета
 ВОН АН АрмССР – Вестник Общественных Наук, Академии Наук Арм. ССР, Ереван.
 ДВ - Древний Восток (сборник), Ереван.
 ЗДА (ՀՀՈ) - Золото древней Армении
 ИИМК - Институт истории материальной культуры Российской Академии Наук, С.-Петербург (РФ)
 ИФЖ - Историко-филологический журнал, Ереван
 КСИА - Краткие сообщения Института археологии
 КСИИМК - Краткие Сообщения Института Истории Материальной Культуры АН СССР, Москва-Ленинград.
 МАК – Материалы по археологии Кавказа, Москва.
 МГУ – Московский Государственный Университет.
 МКА – Материальная культура Азербайджана, Баку.
 МНМ - Мифы Народов Мира, т. 1, 1991, т. 2, 1992, Москва.
 НАН РА – Национальная Академия Наук Республики Армения
 ОИАК – Отчет Императорской Археологической Комиссии
 ПАИ - Полевые археологические исследования, Тбилиси.
 ПСА – Проблемы скифской археологии
 СА - Советская Археология, Москва.
 ССКА – Сборник статей по классической археологии, С.-Петербург
 СОИСМЗ – “Служба по Охране Исторической Среды и Музеев-заповедников”, Министерства Культуры Республики Армения.
 ТКАЭ - Труды Кахетинской Археологической Экспедиции. Тбилиси.
 УКН – Г. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва 1960.
 ЦПСИ - «Центр политических и стратегических исследований», С.-Петербург (РФ)
 AA - American Anthropologists
 AASPE - Armenian Association of Seismology and Physics of the Earth, Yerevan
 AASOR - The Annual of the American Schools of Oriental Research
 AJNES - Aramazd, Armenian Journal of Near Eastern studies, Yerevan
 АК - Aktüel Arkeoloji.
 Am.An. - American antiquity
 AMI – Archäologische Mitteilungen aus Iran.
 AMIT - Archäologische Mitteilungen aus Iran und Turan
 ANES – Ancient Near Eastern Studies, London.
 AO - Acta Orientalia
 AOAT - Alter Orient und Alter Testament, Neukirchen-Vluyn
 Ar.Or. - Archiv für Orientforschung, Graz.
 AS - A Anatolian Studies. London.
 AV - Archeologia Viva, Firenze.

BAR – British Archaeological Report, London.
 BAVA - Beiträge der Allgemeinen und Vergleichenden Archäologie, München.
 BIA - British Institute at Ankara
 Bag.M - Bagdader Mitteilungen
 BMQ - The British Museum Quarterly, London
 CTU - M. Salvini: Corpus Dei Testi Urartei, Roma
 DA – Documenta Asiana, Roma.
 DAFLEU - Department of Archaeology Faculty of Letters Ege University, Izmir, Turkey
 DJGA - “Dziebani” Journal of the Georgian Archaeology, Tbilisi.
 EIAMR - “Erebuni” Historico-Archaeological Museum-Reverse, Yerevan, Armenia.
 HMA – History Museum of Armenia
 IA - Iranica Antiqua
 IAE - Institute of Archaeology and Ethnography National Academy of Science of Republic of Armenia
 JCS - Journal of Cuneiform Studies,
 JIES - Journal of Indo-European Studies, Washington
 JNES – Journal of Near Eastern Studies,
 JWG - Jahrbuch für Wirtschaftsgeschichte, Berlin
 KP - Keban Project, Ankara.
 MAB - The Metropolitan Art Bulletin
 MAVA - Materialien zur Allgemeinen und Vergleichenden Archäologie, München
 OBO - Orbis Biblicus et Orientalis, Göttingen.
 OG - Organic Geochemistry
 RGTC - Répertoire géographique des textes cunéiformes, Wiesbaden
 REAP - Revue de l'Ecole d'anthropologie de Paris.
 RÉA - Revue des études arméniennes, Paris.
 SAOC - Studies in Ancient Oriental Civilization, Chicago.
 SMEA - Studi Micenei ed Egeo Anatolici, Roma.
 SCCNH - Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians
 SPHECMR – “Service for the protection of historical environment and cultural museum – reservations” NSCO
 SUY - State University of Yerevan, Armenia
 TTKY - Türk Tarih Kurumu Yayınlarından, Ankara.
 UKN (УКН) - Г. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва 1960.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբանի փոխարեն

Вместо предисловия

Instead of a foreword----- 5

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Հիշողություններ իմ ուսուցչի՝ ակադեմիկոս Բ.Բ. Պիոտրովսկու մասին
АРУТЮНЯН Н. Воспоминания о моем учителе – академике Б. Б. Пиотровском

ARUTYUNYAN N. Memories of my teacher - Academician Boris Piotrovsky-----8

ԱՍՏՏՈՒԴՅԱՆ Կ. Դրվագներ Բորիս Պիոտրովսկու և Սեդրակ Բարխուդարյանի
գիտագործնական հարաբերություններից

АСАТУРЯН К. Эпизоды из научно-практических контактов Бориса Пиотровского и Седрака Бархударяна.

ASATURYAN K. Episodes from the theoretical and practical contacts of Boris Piotrovsky and Sedrak Barkhoudaryan-----11

ԼՅՈՒԲԻՆ Վ. Բ. Բ. Պիոտրովսկու դերը Հայաստանի պալեոլիթի ուսումնասիրման գործում
ЛЮБИН В. Роль Б. Б. Пиотровского в изучении палеолита Армении

LYUBIN V. Boris Piotrovsky's role in the study of the Paleolithic in Armenia-----17

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ա. Նեոլիթի ուսումնասիրությունը Հայաստանում

ПЕТРОСЯН А. Изучение неолита в Армении

PETROSYAN A. The Study of the Neolithic in Armenia-----25

ԲՈԲՈՅԱՆ Ա. Քաղաքացրածման գործընթացները նախաուրարտական Հայաստանում
(պարբերացման փորձ)

БОБОХЯН А. Процессы урбанизации в доурартской Армении (опыт периодизации)

BOBOKHYAN A. Urban Processes in Pre-Urartic Armenia. An Attempt of Periodization-----40

ՇԱՆՇԱՇՎԻԼԻ Ն., ՆԱՐԻՄԱՆԻՇՎԻԼԻ Գ. Հարավային Կովկասի մ.թ.ա. II հազ. կեսի բրնձե
գինանշանների ուսումնասիրության շուրջ

ШАНШАШВИЛИ Н., НАРИМАНИШВИЛИ Г. К изучению бронзовых штандартов Южного Кавказа середины II тыс. до н.э.

SHANSHASHVILI N., NARIMANISHVILI G. On the study of bronze standards of the South Caucasus of the mid-2nd millennium BC.-----75

ՓԻԼԻՊՈՍՅԱՆ Ա. Մեծամորի սարդոնիքսե կշռաքարը՝ գորտի խորհրդանշական
պաշտամունքի առարկա

ПИЛИПОСЯН А. Сардониксовая гиря из Мецамора – артефакт символического культа лягушки

PILIPOSYAN A. The sardonyx weight from Metsamor - a symbolic artifact of frog worship-----99

ԱՍԼԱՆՅԱՆ Ս. ՎԱՍԻԼԵՎ Ս. Հյուսիսային Հայաստանի Կուրթան բերդամրոցի պեղումներից հայտնաբերված դրոշմ-կնիքը

АСЛАНЯН С., ВАСИЛЬЕВ С. Печать-штамп из раскопок крепости Куртан в Северной Армении

ASLANYAN S., VASILEV S. A Stamp-seal found in excavations at Kurtan Fortress in Northern Armenia-----**108**

ԹՈՒՄԱՆՅԱՆ Գ. Բ. Բ. Պիոտրովսկին՝ Հայկական լեռնաշխարհում կիմերական և սկյութական մշակույթների առկայության մասին

ТУМАНЯН Г. Б. Б. Пиотровский о присутствии киммерской и скифской культур на Армянском Нагорье

TUMANYAN G. B. Piotrovsky on the presence of Cimmerian and Scythian cultures in the Armenian Highlands-----**111**

ՅԱԿՈՒԲՅԱՆ Բ. Փոքր ամրոցների դերն Ուրարտուի արևելյան շրջանների ներքին պահպանական համակարգում

ЯКУБИАН К. Роль небольших крепостей во внутренней оборонительной системе восточных областей Урарту

JAKUBIAK K. The Significance of Small Fortresses in the Urartian Internal Defence System in the Eastern Part of the Kingdom-----**115**

ԲԱՏՄԱԶ Ա. Հնագիտական վերջին ուսումնասիրություններն Այանիս ամրոցում (Վան, Թուրքիա):

БАТМАЗ А. Последние археологические исследования в крепости Айанис (Ван, Турция)

BATMAZ A. Recent Archaeological Research at Ayanis Fortress (Van, Turkey)-----**122**

ԲԱԴԱԼՅԱՆ Մ. Խալդի և Բագբարտու. Ուրարտուում «Սրբազան ամուսնության» ծեսի գոյության խնդրի շուրջ

БАДАЛЯН М. Халди и Багбарту: о проблеме существования ритуала “Священного брака” в Урарту

BADALYAN M. Haldi and Bagbartu: On the Issue of the existence of the “Sacred Marriage” Rite in Urartu-----**145**

ԴԱՆ Ռ. Պաշտպանական համակարգը մ.թ.ա. IX-VIII դարերում. Ամրոցների շրջանաձև դասավորությունը Վանի (Տուշայի) միջնաբերդի շուրջընդոքը

ДАН Р. Оборонительная система в IX-VIII вв. до н. э.: расположение оборонительных сооружений вокруг крепости Ван (Тушпы)

DAN R. A Defensive System of the IX – VIII centuries B.C.: The Ring of Fortresses around Van Kalesi (Tuşpa) -----**161**

ԶԱԲՅԱՆ Ա. Հայկական լեռնաշխարհի p.ա. II-I հազարամյակների վահանները

Закян А. С. Щиты Армянского нагорья во II-I тысячелетиях до н.э.

Zakyan A. S. Shields of Armenian Highlands in II-I millennia BC-----**170**

ԲԱՇԹՅՈՒՆԻՐԲ Մ. Խալդիի երկու բնույթները. Ուրարտական գերագույն աստծո արական և իգական բնույթների քննություն

БАШТЮРК М. *Два обличия Халди: к вопросу о мужском и женском началах урартского верховного бога*

BAŞTÜRK M. *Two Faces of Haldi; Questioning the Gender of the Urartian Great God*-----178

ԻՍԿՐԱ Մ. *Ուրարտուի պաշտոնական կնիքները և նրանց կապն ասսորական կնիքագործության հետ*

ИСКРА М. *Урартские офисные печати и их связь с ассирийской глиптикой.*

ISKRA M. *Urartian Office Seals and their Connection with Assyrian Glyptic*-----195

ՏԻՐԱՅՅԱՆ Ն. *Արմավիրի սարդիոնե ուլունքաշարը*

ТИРАЦЯН Н. *Сердоликовое ожерелье из Армавира*

TIRATSYAN N. *Carnelian necklace from Armavi*-----208

ՍԻՄՈՆՅԱՆ Լ. *Հնագիտության և երաժշտական ֆոլկլորագիտության փոխառնչությունների խնդրի շուրջ*

СИМОНЯН Л. *К вопросу о взаимоотношении археологии и музыкальной фольклористики*

SIMONYAN L. *On the Interrelation between Musical Archaeology and Ethnomusicology*-----212

ՄԿՐՏՅԱՆ Ռ., ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ., ՓԻԼԻՊՈՍՅԱՆ Ա. *Էթնոնի երկրի երկարակյացները*

МКРТЧЯН Р., ПЕТРОСЯН Л., ПИЛИПОСЯН А. *Долгожители страны Этиуни*

MKRTCHYAN R., PETROSYAN L., PILIPOSYAN A. *The Long-livers of the country Etiuni*--221

ԱՎԵՏԻՍՅԱՆ Հ. *Պեղումներ Արամուսում*

АВЕТИСЯН А. *Раскопки в Арамусе*

AVETISYAN H. *Excavations in Aramus*-----230

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Հր. *Համեմատական լեզվաբանության եվ պատմագիտության խաչմերուկներում*

МАРТИРОСЯН Гр. *На перекрестках сравнительной лингвистики и истории*

MARTIROSYAN H. *At the crossroads of comparative linguistics and history*-----238

